ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՑԻՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ·

1859.

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵԳՆԱՑՔ·

ԱՄՍԱՑԵՏՐԱԿ 8.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ·

Մեռեալ հարցուկ, գործ Մխիթարի Նալբանդեանց· · · ·



ՕԳՈՍՏՈՍ 1859 ԹՈՒԱԿԱՆԻ

ՌԸՆԿՈՒԹԻՒՆՔ.

ՄԵՒՆԱԼԱՌՐՅՈՒԿ.

ԳՈՐԾ

ՄԻՔԱՑԷԼԻ ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ.

Ը.

1858 թուականի մայիս ամիսն էր։ Դեռ նոր լուսացել էր առաւօտը, դեռ ևս նոր վեր բարձրացել էր արևը Հորիզոնի վերայ, ոսկեզօծելով ամպերէն կամնագոյն սարերի գագաթները, դեռ ևս նոր զարթնուսէին մարդիկ իւրեանց քնից, որ մնասանդ շաստանուսէ և զօրանուսէ դարնան ժամանակ, ազախինը Պ. Մարկոսի ներս մտաւ սորա սենեակը։ Պ. Մարկոսը քնաթաթախ բացել աչքերը և երեսը շփելով հարց արել քնից վեր կացած աղախնուս ներս մտանելու պատճառը։ Ետս միջոցին մօտեցել էր նորան աղախինը և յառաջ քան թէ Պ. Մարկոսը առարել

էր իւր հարցմունքը, ստացաւ սորանից մի նամակ, որ Պ. Շ. ա-քարևանի ծառան բերել էր։

Պ. Մարկոսը բացեց հինքը և աչքերը սրտրելով կարդաց հետևեալ խօսքերս.

«ՍԻՏԱԿԻՑ ԲԱՐԵԿԱՄ,

«ՊԱՐՍՆ ՄԱՐԿՈՍ·

«Ընդհանուր բաց խօսածիցս, ինչպէս նկատումեմ, քո խոս-«տանալը շատ է, քան թէ կատարելդ· խօսքս մեր կնոջդքի վե-«րայ է, որի մասին զրուցելով անցեալները խոստացար հոգաբար-«ձու լինել, բայց, ի չար բաղդով, ոչ մի հոգացողութեան «նշան, որ ցոյց տուած լինէիր, չտեսայ մինչև այսօր։ Օրերը «անցանումեն, մեր կեանքը թռչումէ, իսկ մեք, քո շնորհքիդը, «բանտարկված մեր բնակարանիդումը թառամումենք տխրու-«թեան մէջ։ Տեսանելով, որ բանը այսպէս է, որ այս մասին մի «բարի յոյս չկայ քեզանից, ես ինքնին սկսեցի լինել այդ կնոջդքի «հոգաբարձուն։ Ամենայն պատրաստութիւն տեսել եմ, թէ կե-«րակրելուն և թէ ըմպելիքի մասին։ Մի միայն պատճառ եմ «մի վեղրօ, իսկ հասարակ համելի գինի հարիւր քսան շիշ, Շա-«պայն, շատ լաւերը, Կնիկ և Կեդերևր քսան չորս շիշ· Մա-«դեռա, Խերէս, Ռէյն-վէյն, մի խօսքով թռունդ գինիները տասն «և ութն շիշ։ Կատարումն օրինաց և մարդարէիցը կը լինի լաւ «Մարաակէնով, որ ստացել էի օտար աշխարհից։»

«Այս հաշուից տեսանումես ահա, որ ես քեզ նման ական-«ջի վերայ քնած չեմ· ինչ և իցէ թէ մեղադրանք է, թէ խրատ «է, ընդունիր, և այս նամակս ստացածովդ շտապի՛ր դալ իմ մօտ, «մեր ծանօթներից և բարեկամներից ովքեն հրաւիրելու և ովքեն չհրաւիրելու մասին, խորհուրդ կատարելու համար։»

«Քեզ միշտ բարի կամեցող Ց· Շ…»

Պ. Մարկոսը, աւարտելով նամակի կարդալը, սկսեց ծանր կեր-պով և մտածողութեամբ հանգրել· հարիւր քսան, տասն և ութն և այ, հարիւր երեսուն ութն, քսան չորս դորա վերայ, հարիւր վեթասուն երկու, մի բան չէ· բայց եթէ մի վեղրօ պատրը ձգենք յառաջաբանի փոխանակ, իսկ Մարաակէնը վերջաբանի տեղ, այն

ժամանակ հարիւր վաթսուն երկու շեշը մի բանի նման կը լինի: Բայց ինչու՞ Ռօմ մոռացել է.... կօնեակ ևս չկայ, անգլիական ձին չկայ, մի վեղրօ խստակ ապտրով կամենում աչքիս նեղկել.... չէ հղբայր, այդպէս չէ, ես քեզ մի նոր ցուցակ դարձնել կը տամ.... վայ վայ վայ, Սարեպտի բալասան ևս մոռացել է. այդ ի՛նչ խնջոյք կը լինի:

Այս խորհրդածութենից յետոյ, որ նորա կեանքի մէջ բաւական մեծակշիռ բան էր, սկսեց հաղնել իւր դիւտքը: Աղաւնիները պատրաստելով թէյի մեքենան նեղս բերեց և դրեց սեղանի վերայ: Պ. Մարկոսը սկսեց թէյ պատրաստել և նստելով աթոռի վերայ զանազան պատկերներ երևակայել իւրեանց խնջոյքի մասին: Միանգամ երևակայումէր իւր բոլոր ընկերքը աբբեցած ընկած դաշտերի վերայ, որը քնած և որը.... իսկ ինքը տղամարդի պէս դինու թասը ձեռքին կանգնած նոցա մօտ, ծաղը առնելով նոցա թուլամորթութիւնը: Յետոյ երևակայումէր, որ իւր ընկերքը, դլուխները տաքանալուց, տուր ու ծեծ սկսել էին միմեանց հետ, որոնցից մինը լաց էր լինում և գանգատումէր, թէ վշտացնումեն իւրեան, իսկ միւսը բարձր բարձր գոռալով հայհոյումէր նորան և ասումէր, որ եթէ չափը չճանաչէ, ոչ միայն այսչափ, այլ և աչքի լոյսը ևս հանելու էր: Այս տեղ պ. Մարկոսը երևակայումէր իւրեան միջնի դարերի ասպետների նման մի բան, որ դինու բաժակը ձեռքում մօտներով կռվողներին մխիթարումէր վշտացածը, թէ արժան չէր կին մարդու պէս ամենայն բանից նեղանալ, մի և նոյն ժամանակ բարկանալով հարստահարողի վերայ, թէ ընկերութեան մէջ մեծ անկարգ բան է մի այդպիսի կոշտ վարուցողութիւն և այլն:

Այսպիսի պատկերներ սանձազերծելով ուղեղի մէջ, խմում էր պ. Մարկոսը իւր թէյը, երբեմն երբեմն արձակելով բերանից թարակի թանձր ծուխը սղերի նման դուրս փչելով: Նա ուրախանալուն մանաւանդ մոռացել, եթէ բոլոր արագը և դինիքը խմելուց յետոյ, մի քանի մարդ և ինքը միևնոյն դրաստ, առանց արբենալու, այն ժամանակ ի՛նչպէս բարձր բարձր խօսելով դինի պահանջելու էր պ. Հաբաւանից, սորա ժլատութիւնը խայտառակելու մտքով: Այսպէս էր նորա հոդու տրամադրութիւնը նամակը կարդալուց յետոյ: Նորը աւարտել էր թէյ

խաչը, վեր առաւ վերարկուն, դլխարկը և ջոխին և դուրս գնաց իւր տանից։

Պարզացողը այս գործի, կարելի է, կարծէ, թէ Պ. Մարկոսը մի անտուայր պրեդող մարդ է. քանի լեզի. այդ զբպարտութիւն կը լինէր։ Պ. Մարկոսը, ճշմարիտ է, խոհեմ, բայց ինչպէս ուրիշները, ինչպէս մի բարի հայ քրիստոնեայ։ Նորա շատ խաչը վերայ երեւակայելը և երդալը, Պ. Հ՝աքարեանցի ժլատ հոգացողութեան վերայ նեղանալը, շատ սովորական բան է։ Երիտասարդ մարդը, ոչքան շատ խանի, այնքան շատ պատուելի է նա, այնքան փառք ու պարծանք է նորա համար։ Հ՝ատ ժամանակ չէ, ես պատահեցայ Պունցով ազարակում մի քանի հայ երիտասարդների, որ մեզ էին գալիս մի Ռուսի հետ, որ դժուարութեամբ կանգնում էր ոտքի վերայ և որի լեղուն, համարեա թէ փայտանալով հազիւ հազ շարժվում էր բերանի մէջ. Հայ երիտասարդներից մինը Պ. Ն..... վը ասաց մեզ հայերէն — տեսանո՞ւմէք, ի՛նչ օրն ենք ձգել սորան, այսինքն թէ ի՛նչպէս պրեդած է։

Իսկաբ այն բանի վերայ է, թէ Պ. Մարկոսի համար մի պահաստութիւն չէ, եթէ նա մնածում շատ խանելու վերայ, և ոչ այսչափ միայն, այլև պարտական է մնածել և աշխատել, որ օրէ օր աւելի կարողանայ խանել, որովհետև մեր հայ երիտասարդներից շատերը խանելով չափում են իւրեանց քաջութիւնը։ Սորանից մի քանի տարի յառաջ, պատահեցայ մի հայ երիտասարդի... քաղաքում, որ իրաւամբ ստացաւ Ռչբրի — Ռուսաստան պատուանունը հասարակաց վկայութեամբ. այդ պարոնը, մի օր մի լաւ երկպատութիւն և ուխտ կատարած լինելով Ռաքոսի տաճարում, հանդիպեցաւ ինձ և մեղադրանք լսելով ինձանից իւր պրեդութեան մասին, այսպէս խօսեց։

— Պարոն, դու դիտես, որ մարդը աշխարհի միւս բոլոր արարածներից գերազանց է.

«Գիտեմ» պատասխանեցի ես։

— Ուրեմն, ինչո՞ւ մեղադրում ես ինձ, եթէ ես աշխատել եմ յարդի կացուցանել իմ մարդկութիւնը քան թէ մի անբան արարած։

«Ոչ չեմ հասկանում քո ասածը»։

— Ասպն է գերազանց, թէ փայտը, — հարց արեց նա։

«Այդ ինչ տարակուսելի բան է»։

— Տնաքանդ, եթէ ձանձրանում ես աշմարտութիւնը, ապա էլ չես ընդունում։ Ես մարդ եմ, լաւ նայիր իմ վերայ, ես Աստուծոյ պատկեր եմ, ես բանականութիւն ունիմ, և այս խօսքերիցս տեսանում ես ահա, որ ես շատ լաւ ճանաչում եմ իմ արժանաւորութիւնը աշխարհի արարածների մէջ։ Մի անշունչ էակ, մի տակառ, որ փայտից էր շինած, որ ո՛չ հոգի ունէր, ոչ Աստուծոյ պատկեր էր, այդպիսի մի ընչին էակ, ասում եմ, տանուժ-իւր մէջ մինչև քառասուն վեդրօ գինի։ Ես տեսանելով այս, կարո՞ղ եմ մինչև այն աստիճան անարգել իմ մարդկութիւնը, որ սառն աչքով նայեմ այդ բանի վերայ, և հայհոյութիւն չէր իմ կողմից Աստուծոյ շնորհին, որ տուել էր ինձ, մինչ մի բուռն հողից դոյացայ, եթէ չաշխատէի հաւասարվիլ և գերազանցել այդ ընչին փայտից։ Մեզանից իւրաքանչիւրը պարտական է գեռնի հետ հաւասարել իւր մարդկութիւնը, չանարգել Աստուծոյ շունչը, որ փչել էր մեր վերայ։ Մեք պարտական ենք իրաւացուցանել Արարիչը, յարդի կացուցանելով այն շնորհը, որի ընդունակ մի միայն մեզ էր ընտրել իւր բոլոր ձեռագործներից։ Մեք պարտական ենք, ոչ թէ միայն հաւասարվիլ տակառին, այլև անցանել նորանից.... գինին երկնքի պարգեւութեան ցօղն է։ Նոյ նահապետը ջրհեղեղից յետոյ խմեց գործ դրեց նորան.... ինչ կ՚առնուս գորտի նման ջուր խմելուց։ Ջուրը Աստուծոյ ձեռքին մի գործիք է, չարագործ մարդիկ պատուհասելու համար։ Սաճիս ապացոյց քեզ ջրհեղեղը, ինչով ջնջեց Աստուած մարդկութիւնը, գինով, թէ ջրով.... Արիստոս ինքը կանա — Գալիլեայումը, հարսանիքի մէջ ջուրը գինի փոխեց, դու ինչեր ես խօսում։

Եթէ մեր Հայերի մէջ կան և այսպիսի մտածութեան տէր մարդիկ, ապա ուրեմն, դեռ ևս Պ. Մարկոսը մի երանելի մարդ է։ Որովհետև խօսք ընկաւ այս տեղ Պ. Մարկոսի վերայ, ապա թող ծանօթացնենք մեր ընթերցողներին դորա ով լինելը։ Դա, մի հրիտասարդ է քառասուն տարեկան. երեկոյ ժամանակից աշակերտվելով մի դերձակի մօտ, այժմ, համարվում լաւ դերձակներից մինը։ Բայց հայ ձարելով այդպիսի ծառայական ար-

հետով, նա պատրաստ է զոհաբերել կյանք: Այս միշտ հասկացել է իւրեան, և այժմ էս հասկանում ազգասէր պարոններից մինը և ինչու չէ հասկանալու իւրեան ազգասէր, ի՞նչ մի դժուար բան է ազգասէր հասկանալ իւրեան կամ հասկանալ ուրիշների աչքում: Այս այս խօսքը ասում եմ միմիայն մեր Հայերի հասար և ոչ ուրիշ ազգերին. պատճառ, ոչքան հեշտ է մեր ազգի մէջ ազգասէրի անուն ժառանգել, նոյնքան դժուար է այդ ուրիշ ազգերի մէջ: Ինչո՞ւ. հայ մարդը, որ մի երկու բառ լսել էր այս տեղից և այն տեղից, նստում է իւր տան մի անկիւնում և պատկերացնում է ազգասէր, ինչ լաւ ցանկութիւնք առել յայտնում է իւր ազգի մասին, ցանկանում է, որ ազգը լուսաւորվի, որ բան ուսանին ազգի վայրենացած զաւակները, որ լինին և շարունակվին լաւ լաւ և գեղեցիկ օրադրութիւնք, բայց այս բաները Թող ինքնանք լինին, Թող ոչնչից և ոչնչով գոյանան. իմ պատուելի ազգասէրը հանգիստ Թող նստի տանը, նորան Թող անհանգիստ չառնեն, մի՞ Թէ նա երեսփոխան է ամբողջ ազգի, մի Թէ նա պատասխան է ազգին, Թող ազգը մտածէ, Թող ինքը հոգս առնէ, իմ ազգասէրը մանաւանդ մարդ է, փորը կուշտ, արծաթը շատ, նորան ի՛նչ փոյթ, որ ազգի զաւակները իւրեանց անդաստիարակութեան և ազիատութեան պատճառով դատապարտված են ոտաբոկիկ այս ու այն կողմ վազվզել մի կտոր հաց ձարելու, մի բնակութիւն դտանելու կամ մերկութիւնը ծածկելու համար: Իմ ազգասէրը պատասխան է միայն նորա համար, որ օդով ամենայն բան ցանկանում է, ամենայն բարեխիղճ մարդու հետ համաձայնում է և օգնում ազգին, մի քանի աղքատի երկու երկք մանեթ ողորմութիւն տալով: Նա գոհում ազգը, նա օտարի առաջև ծածկում նորա պակասութիւնքը: Նա այնքան սիրում է այդ ազգը, որ նորա պակասութիւնքը խոյտառակողներին տանելով տալիս, բամբասում և հայհոյում նորանց և.... ի՛նչ այլ ևս կամիք, օրհնում ստար աշխարհում, պանդխտութեան մէջ իւր կեանքը և հարստութիւնը ինքած մի անբաղդի գերեզման....

Այսպիսի մի մարդ, ահ, ցաւելի ձշմարտութիւն, յարդ ունի իմաժամուժ ամբոխի աչքում, այսպիսի մի մարդ, որ փորը հասատացրել էր և ընչացքը պրել, համարձակվում պատիւ ու յարդանք պահանջել մեզանից, որովհետև նա հարուստ էր, իսկ մեք ոչ:

նա կառքերով էր մեռնում, իսկ մեք ոտով։ Հեռի՛ մեզանից, դու յանդուգն յիմար, կորի՛ր մեր աչքից ստախօս և անպատիւ դու, մեք ձանձրացանք քո խաբեբայութիւնը, քո արհեստը ընթացք չունի մեր մէջ։ Ազգասէր· ո՛ր տեղից ո՛ր տեղ· ինչո՞ւ փոթռտաբը, արծաթասէր չես կոչում քեզ· ի՛նչ է, ախանջիդ լա՞ւ է եկել ազգասիրի անունը, դու առանց ղրկանքի կամիս առաքինի՞ լինել· ի՞նչպէս կարելի է այդ, մինչ առաքինութիւնը ղրկանք է մի մարդուհամար, որ առաքինութիւն էր դործում։ Վկանիք յանձն առնո՞ւս· քառ լեցի, դու երկու կոպեկով, ոչ միայն ազգասէր պատուանունը, այլև քո բոլոր ազդը և քո հօր ոսկերքը կը հանես դերեզմանից և կը վառնուես։

Նթէ մեր ազդի մէջ կան և այսպիսի մտածութեան տէր մարդիկ, մարդիկ, որ կարող էին միանալով իւրեանց նման կարողութեան տէր պարոնների հետ օգնել ազդի ողորմելի և թշուառ դրութեանը· բայց Պ· Շ՚ահբեգի տասձի պէս բաղդին մարդն դառնալով, պարարտանին դիշեր ցերեկ իւրեանց փորը և այնու ամենայնիւ հառաչմունեն ազգասէր· ապա ուրեմն Պ· Պարկոսը, մի խելօք մարդ, արժանի է, որ մի միայն ազդին բարի ցանկացած լինելու պատճառով, հառաչմի ազգասէր։

Պ· Պարկոսը հոգեկից բարեկամ էր Պ· Շ՚աքարեանցին։ Նորա երեխայութենից սիրած դրացի էին միմեանց, և համարեա թէ միասին աճելով, եղբօր պէս վարմունքին մինչև այժմ· թէպետ Պ· Շ՚աքարեանցը աւելի հարուստ էր, քան թէ Պ· Պարկոսը, որովհետև Շ՚աքարեանցի հայրը թողել էր մի քանի անշարժ կալուածք, որոնց արդիւնքով կառավարվումէր նա առանց դժուարութեան։

Պ· Շ՚աքարեանցը, իւր բոլոր կեանքը 18 տարեկան հասակից բռնած մինչև այսօր (այժմ կը լինի նա 36 տարօք) անդադար պարապումէր զանազան դիւթական դրքերով· ինչ հին, ձեռագիր ախտագրք ասես, որ նա չունենար, ինչ մադաղաճի վերայ գրած կարմիր ու կապոյտ դիերով Ուրբաթագիրք ասես, որ չունենար· նա դեռ ևս պարծենում, թէ վեցհազարեակ ևս ունի....

Շ՚ատ անդամ տեսել են Շ՚աքարեանցին փակված մի ախոռի մէջ, որ, մի ձեռքին դրչագիր մադաղաճի, իսկ միւս ձեռքում կաւիճ, մի բոլորշի դիծ էր քաշում դեռևի վերայ։ Նորա ծա-

ոայքը, շատ անգամ գտել են ախոռի մէջ, այդ բոլորշի գծի կիսատնուռ մի մոլեռած սև հաւ, առանց ամենայն պիտակի, և մի սև կոթով դանակ: Կնոջական բաներից ցաւումէր Պ. Հ. աքաբեանցի գլուխը, նա սիրում էր ոգիների և փերիների հետ խօսակից լինել միշտ. նոցա բան ապազարել, և շատ անգամ հաւատացուցած է իւր ընկերներին և բարեկամներին, թէ նա, իւր դիւթական արարողութեան միջնորդութեամբ, հասել է շատ բաների: Վոցա կարդումն է և այն, որ մի շատ գեղեցիկ աղջկի, որի վերայ սիրահարված է եղած երկար ժամանակ, և որ Պ. Հ. աքարեանցին ամենևին մարդու տեղ ևս չէ դնում եղած, ինքը, իւր ոտքով, միայն մի շապիկով եկել է կէս գիշերին Պ. Հ. աքարեանցի ախոռը և ծունկ չոքած նորա առաջև, աչքը արտասուք խնդրել է....

Ընդ այս պատմեն էր Պ. Մարկոսին տոմնակ գրողը, և սա էր, որի մօտ գնաց Պ. Մարկոսը, ուր կը տանենք մեք և մեր ընթերցողքը:

Ը.

Պ. Մարկոսը, ներս մնանելով Հ. աքարեանցի տունն, չգտաւ նորան այն տեղ: Հարցանելով ծառայից իմացաւ, որ դիւթութեամբ պարապում դարձեալ ախոռում: — Ի՛նչ անբրիատոնեայ մարդ է դարձել դա — մտածումէր Պ. Մարկոսը Պ. Հ. աքարեանցի մասին: — Ըատուած, հրեշտակները, սուրբերը, նահատակները թողած, բան է բռնում սատանաների հետ. ահա ի՛նչ է նշանակում դաստիարակութեան պակասութիւնը: Նթէ նա կարդացած լինէր այն գրուածքը, ինչ որ ես կարդում եմ, այն ժամանակ, մաղերը գլխի վերայ ցցվելու էին: Նա երանելի մարդ եմ, — մտածումէր նա, — որ երեկոյ ժամանակից աշակերտվեցայ Աիմոն վարժապետին, այնպիսի կարդացող և ստուգածաբան մարդու: Ի՛նչ գլուխ ունէր, ի՛նչ ուսում ունէր. կարճ խօսելով, փիլիսոփայ մարդ էր: Ի՛նչպէս գեղեցիկ մեկնում էր Ժողովածուն. ապա եկեղեցի և կաթողիկոս բառերի մեկնութիւնը, չկարծեմ, որ եպիսկոպոսները ևս այնպէս իմանան: Ըստուած լուսաւորեսցէ քո հոգին, Աիմոն վարժապետ, եթէ դու չլինէիր, եթէ քո գըր-

Հանքը ինձ ժառանգութիւն չձեռային, ով դիտէ, ով կարող է երաշխաւոր լինել, գուցէ ես ևս Հ. աքսարեանցի նման գլուխս տայի դիւական պատրաստմունքի։

Այս տեղ Պ. Մարկոսը երկար անդամ երեսը խաչ հանեց, օրպէս թէ հրաժարվելով գևերից և վահանափակելով իւր անձը սատանայական փորձանքների երեսից. յետոյ հարց արեց Ծառայից, թէ վաղուց է արդէն, որ նորա պարոնը գնացել էր ախոռ։ Ծառան պատասխանեց, թէ բաւական ժամանակ է։ — Լայց — յաւելացրեց նա — ես վկայեմ, որ այսօր շուտ աւարտվի նորա հանդէսը. պատճառ, շատ պատրաստութիւնք տեսաւ ախոռը մտանելուց յառաջ։

«Ո՛նչ պատրաստութիւնք, — սկսեց Պ. Մարկոսը հարց առնել։

— Լսանայել էր ինձ գտանել մի բոլորովին սև կատու, մի սև հաւ, մի հայելի, մի որձ ջղջկի կուրծքի կարճաձև ոսկր, մի պտուկ և այլ մանրամասնութիւնք, որ ուրիշ ժամանակ էլը դործ ածում։

«Այս կ'երթամ նորա մօտ, և կ'ասեմ, որ թողուս այժմ այդ բանը մի այլ ժամանակի....»

Ձգնաք, չգնաք — աղաչեցի եմ, — գոռաց Ծառան, համարեա թէ արտասուքը աչքերում, — այդ ինքնակալը կը լինի և ձեղ և իմ պարոնիս։ Նա միշտ այդպիսի դիպուածներում արդելում մտանել ախոռը և մօտենալ նորան, որովհետև չար ոգիների ազդելուց կարելի էր խեղդնալ իսկոյն կամ անպատճառ ծվել։

«Այդ հաստով խոսովանիմ ևս օրի համար է, յիմար, Նարեկացու աքանչելի և դիւահալած աղօթքները։ Բայց ի դորանից, ես միշտ իմ վերայ պահում եմ կտորը այն ծառի, որին կապել էին Կրիստոսին Գեթսեմանի պարտիզում մատնութեան դիշերին։ Այս գևերից երկիւղ չունիմ....»

— Գուցէ ձշմարիտ էք խօսում, ասա ուրեմն, այդպիսի վատաբաղդ դիպուածում ինչտը կը հատանի իմ պարոնին։

«Ման չկայ, գոնէ կը խելքանայ և կը պատրվի այդ բաներից։ Յոյս տուր ինձ ախոռը. արի գնանք։

— Ամենևին. կամիք սպանեցէք ինձ, այնու ամենայնիւ յան-

ձեռաւս չեմ գնալ, ես ձրի չեմ գտել իմ կեանքը, որ յիմարաբար վտանգի մէջ ձգեմ.

Անդրդուն Պ. Մարկոսը խօսումէր ծառայի հետ, և ահա Պ. Հաքարեանցը բարկացած, շողքերը բերանէց թափելով ներս մտաւ:

«Ա՛յդ անկարելի է.... այդ անհնարին է.... չեմիմ ամենևին տեսանել. այդ ի՛նչ սոսկալի կերպարանափոխութիւն.... կապիկ է միանգամայն: Ափսո՜ս աշխատանքիս, ափսո՜ս սիրելուս, որ ղուր տեղը կորաւ.... երկինք, փուշ աբի իմ վերայ.... երկիր, կուլ տուր ինձ. ո՛հ, մի օգնութիւն, սիրոս պրծաւ.... ո՛հ.... ո՛հ» — և մի քանի այսպիսի կցկտուր խօսքեր դեռևս արտաբերելով, ընկաւ աթոռի վերայ ամենևին ուժաթափ:

Պ. Մարկոսը նայուածքը զարմացած: Նոտան դուրս փախաւ սենեկից, հայր մեր ասելով: Պ. Մարկոս տեսանելով, որ բանը վատ է, փոքր է մնացել, որ իւրեանց մոքրութիւնը պրած լինջոյքը դէպ ի տրամութիւն փոխվի, իւր կարգով սկսեց դործ դնել իւր արհեստը, և, կանդնելով Պ. Հաքարեանցի դլխի տակ, սկսեց մրմնջել մի աղօթք, և երկար անդամ կրկնելով հալէ դէպ, հալածէ դէպ խօսքերը, այլև մի փոքր ջուր սրսկելով Հաքարեանցի երեսին, զգաստացուց նորան:

Պ. Հաքարեանցը վեր կացաւ և կովի նման նայուածքը Պ. Մարկոսի վերայ. յետոյ սկսեց, մի քանի արաբական խօսքեր արտաբերելով, պատյտ դալ սենեկի մէջ տեղուամ: Պ. Մարկոսը տեսանելով, որ մի աղօթքով բան չդարձաւ, բռնեց Հաքարեանցին, նաեւյուց բռնութեամբ աթոռի վերայ և սկսեց անդիր կարդալ մի այլ աղօթք, որ աւելի նեղդործական էր նորա աչքում: Պ. Հաքարեանցը քնեց.... Դեռ ևս ամբողջած էր նորա շնչառութիւնը, սիրտը մի առանձին խառնութեամբ բարախուսէր կուրծքի մէջ. երեսի վերայ, երբեմն, երբեմն երեւումէին ակամայ և անզդայ ցնցողական զարկողութիւնք:

«Փուռք Ըստուծոյ, — ասաց Պ. Մարկոսը, — գո՛նէ քնեց: Աբի մի գնամ դորա սիտող. ի՛նչ կայ այդ տեղ, որ այս խեղճի լերդը պատռել էր»:

Թէև Պ. Մարկոսը, զանազան դիւահարած աղօթքներով վհատանալակիլ էր իւր անձը, այնու ամենայնիւ հարկաւոր հա-

մարեց հանել շապիկի տակից մի փոյտի կտոր, որ արծաթեայ շղթայով կախած էր կուրծքի վերայ, համբուրեց, և յառաջ գնաց.... Ա՛յս տեսաւ, որ ախոռներից մինի դուռը բաց է, ուստի կարծելով որ այդ տեղ պիտոյ է կառավաճ լինի դիւահարյուծիները, նորա մտաւ նորա մէջ: Ախոռի յատակի վերայ քարշած էր կաւիճով մի շրջանագիծ, նորա մէջ տեղում մի ահագին սև կատու թաթելով բռնելով մի գլխատած հաւի մարմին ուտում էր մեմուալով: Դորա մօտ դրած էր մի պատուկ: Պ. Մարկոսը մօտեցաւ պատուկին, տեսաւ որ ջրով լիքն է, շրջեց պատուկը, և ահա նորա միջից դուրս ընկան ջղջկի կուրծքի կարճաձև ոսկրը և Յուլիա Պոստոմայի (1) պատկերը: Այս բանելը մեծ զար-

---

(1) Հարկաւոր ենք համարում այս տեղ մի փոքր ծանօթացանել Ցուլիա Պոստումայի մասին: Դա մի աղջիկ է, Մեկսիկոից, 23 տարեկան. հասակի բարձրութիւնը 4 ոտնաչափ և 6 բթաչափ, զարմանալի կանոնաւոր կազմուածքի տէր: Կզակի վերայ բուսած է երկայն մօրուք որ միաւորվում նորա ընչացքի և թուշերի մօրուքի հետ: Ցօնքերը թանձր որպես և գլխի մազը, սաստիկ սև և առանց գանգուրների: Երեսի միւս մասերը, որպես և բոլոր մարմինը, բայ ի արմուկներից, ձեռքի ափերից և ոտքի գարշապարից, պատած է կարճ մազերով: Կուրծքը սաստիկ կերպարանագործված և լիքը: Փոքի պնչերը տափակաձև և քարշված, այնպես որ առիթ են տալիս եղրակացնելու թէ ածան չկար նորա մէջ: Բերանը մեծ, շրթունքը դեպ ի դուրս դարձված: Ներքին ծնօտի վերայ կան ատամները ամբողջապես, իսկ վերին ծնօտի ատամներում երեւումն պակասութիւնք: Դէմքի գծագրութիւնը չունի նեգրի բնաւորութիւն, բաւական փոքր է երեսի անկիւնը: Ձայնը կանացի է, մանաւանդ բարձր, ոճերը: Թէև անկիրթ է նա, այնու ամենայնիւ ունի լաւ խելք և հակացողութիւն:

Այս աղջիկը, որին, շատերի հետ, և մեք ականատես եղանք, աւելի նմանութիւն ունի կապկի քան թէ մարդու, և նայելով զանազան բնագէտների և եւրոպական օրագրերի և լրագրերի խօսքերին, դեռ ևս մի հատ է ամբողջ երկրագունդի վերայ: Անտարակոյս մեր ընթերցողներից ամենք տեսած կը լինին նորան, մինչդեռ դատնվուաձր Նա 1858 թուականին Պետերբուրգ և Մոսկվա մայրաքաղաքներում:

Այս աղջկայ ծագումը ծածկած է անյայտութեան վարագուրի տակ: Չէ կարելի դրականապես ասել, թէ նա պատկանում է Արմատակերների մի ցեղին. պատճառ ունի շատ զգուշութիւնք, որով բաժանվում նոցանից: Չկամինք այս տեղ երկարաբանել մէջ բերելով այդ զանազանութեան, ուզացղյները, չկամինք նոյնպես յիշել այն լուրը խօսք ու զրոյցը այս աղջկայ մասին, այլ միայն դնում ենք այս տեղ այն, ինչ որ մեծ մասով ընդունելի է եղած և որ երևում է աւելի ստոյգ:

1830 թուականին, Արմատակերների ցեղից մի քանի կանայք կօպալչից, գնացին սարի տակ ջրի մէջ լուացվելու: Իւրեանց տեղը վերադառնալով նկատեցին, որ չկայ իւրեանց մի ընկերը: Շատ որոնեցին, շատ հարց ու խնդիր արեցին, բայց բոլորը զուր եղաւ, և ամենքին հաւանեցան կարծել, որ խեղդված լինի ջրում: Վեց տարի յետոյ այս անցքից մի հովիւ իւր ոչխարները սարերում արածեցնելու ժամանակ, մի քարայրի միջից լսեց մի ձայն, որ համարեց Մեկսիկացու ձայն: Նա սկսեց որոնել ձայն տուողը և գտաւ. նա էր կորուսած հնդկական աղջիկը: Սա պատմեց, թէ լուացվելուց յետոյ, մոլորվելով սարերի մէջ, ընկել էր Արմատակերների մի այլ ցեղի ձեռք, որ

մաղք բերեցին Պ· Մարկոսի վերայ, բայց Հալոցաց գրականաւպէս պատասխանել նորա հարցասիրութեանը, թէ ի՞նչ դիպուածով յատկապէս ընկել էր Հ՚աքարեանցը այդ վիճակի մէջ: Հ՚աքարեանցի ծառան գրսում կանգնած զարմանումէր Պ· Մարկոսի քաջասրտութեան վերայ, որով նա համարձակվել էր ներս մտանել մի բնակութեան մէջ, ուր ստէպ հաւաքվումէին փերիներ և դևեր:

Պ· Մարկոսը, թողնելով իւր հետաքրքրութիւնը, ներս մտաւ Հ՚աքարեանցի սենեակը, ուր քնած թողել էր իւր բարեկամը: Սա զարթեցաւ Պ· Մարկոսի ներս մտանելուց· առաւ քրտինքը թափվումէր նորա ճակատից, և ամենևին չհամանալով իւր գլխից անցածը, հարցրեց, թէ նոր է գալիս Պ· Մարկոսը: Ա՚յս պատճառով վեր կացաւ տեղից և կամեցաւ, յառաջ գնալով, ողջունել իւր բարեկամը· բայց Պ· Մարկոսը յառաջից խօսել·

«Ի՞նչպէս է այժմ առողջութիւնդ· ես, ճշմարիտն ասեմ, շատ վախեցայ····»

—Չկամ թէ առաւօտուն վաղ մարդ ուղարկելուս պատճառով: Օրհնած հոգի, ո՞չ ապաքէն տոմնակուսն գրել էի հրաւիրելուս պատճառը· վասն Ըստուծոյ· ի՞նչ վախենալու բան կայ· պիտոյ էր ուրախանալ:

«Ա՚ն ուրախութիւն կը գայ քո գլխին, եթէ չէի կարգացել···· ի՞նչ օր էին ձգել քեզ քո բարեկամքը· հաւատա՛, Հ՚ա-

---

այսքան ժամանակ արգելել էր նորան, վարվելով բռնակալի պէս: Բայց տեղը ուր գտել էր հովիւը այդ կնոջը, քանի հարիւր մղոնով հեռի էր մարդկային բնակութենից և գոնվումէր այնպիսի կողմում, ուր լէք էին կալիճներ և արջեր: Այդ միջոցին կերակրումէր նա մի երկու տարեկան աղջիկ, որին շատ սիրումէր, թէև հաւատացնումէր թէ ինքը չէ նորա մայրը, այլ գտանելով նորան անհոգ և անխնամ, գարմանէր տանումէ: Այդ աղջիկը անուանեցին Ճուլիա Պոտորանա, և իւր մայրացուի մահից յետոյ դրեցին նորան Ուլօայի գաւառապետի վերդաստանի մէջ, որպէս աղախին: Այս տեղ մնաց Ճուլիան մինչև 1854 թ· ապրիլը և յետոյ գնաց դէպ ի միացեալ նահանգները: Այդ օրից սկսեց նա երևել միացեալ նահանգների մէծ քաղաքների մէջ և ամենայն տեղ գրգռեց լժիշկների և բնագէտների հետաքրքրութիւնը: երբ որ Ամերիկայումէ լուսական տեղ երևել էր, ապա եկաւ Եւրոպա, համարեա թէ իւր վերայ դարձուց լոկը մայրաքաղաքացիներն ուշադրութիւնը: Ա՚օտ իւր վեց, եօթն ամիս մնաց Պետերբուրգ և Մոսկվա մայրաքաղաքներում· յետոյ ճանապարհորդեց դէպ ի Գերմանիա: Նորերումս Լուս օրագրերը հրատարակեցին նորա վերադարձը դէպ ի Պետերբուրգ, ուր երևումէ լսազութեանը մի Ալբինոս կնոջ և մի 30 լիաչափ դաճաճի հետ:

քարեհանց, դու մի օր յանկարծ կը մեռանիս, և հոգիդ բայ այչ քով կը մտանես, որ կերակուր լինի սատանայի։ Մինչեւ ամէն չունիս. դու քրիստոնեայ մարդ ես, ինչպէս կարելի է սատանայական բաներով պարապիլ ....»

Պ. Մարկոսի այս բաները խօսելու ժամանակ, Հ. աքարեանցը ընկաւ մի տխուր մտածութեան մէջ։ Նրանք նման յիշումէր իւր տխուրից ներս վազելը և Պ. Մարկոսին տեսանելը։ Հաւատելու համար, թէ այդպէ՞ս էր արդեօք, կամեցաւ յառաջ ուրանալ այն խորհրդով, որ եթէ Պ. Մարկոսը ստուգապէս տեսել էր ամենայն բան, ապա ինքն ևս խոստովանելու էր բոլորը. այս դիտմամբ կտրելով Պ. Մարկոսի խօսքը, ասաց. «Նշանայր, ինչեր ես խօսում. ինչ դև, ինչ աղօթք, ինչ բան. խելքդ գլխիդ է թէ ոչ։»

—Իմ խելքս գլխս է, բայց քոնը եկաւ թէ չէ. մի ժամ յառաջ խելագարվիլ էիր տխուրից ներս վազելով, այնպէս, որ քեզ հանդստացնելուց յետոյ, ստիպվեցայ դնալ և հալցաւորել քո խելագարութեան պատճառը։ Տխուր ներս մտայ, տեսայ մի մեծ շրջանագծի մէջ, մի սև կատու, որ լափումէր մի գլխատած սև հաւի մարմին, տեսայ մի ջրով լիք պտուկ. բայց ասա՛ խնդրեմ, մինչեւ Յուլիա Պոստրանայի պատկերը ևս անհրաժեշտ առարկայ է գիւթութեան մէջ, որ, ջղջկի ոսկրի հետ միասին, դրել էիր ջրով լիքը պտուկի մէջ ....

«Մինչեւ դու մի բան տեսա՞ր—կտրեց խօսքը Պ. Հ. աքարեանցը։

—Նշանայր, ես կոյր չեմ, և ինչ որ մարդկային աչքով կարելի է տեսանել, միշտ տեսանումեմ։ Ո՞նչպէս չտեսայ Պոստրանայի պատկերը, և դեռ ևս նեկրով նկարած։

«Վա՛յ, վա՛յ, վա՛յ, ես այժմ հասկանումեմ,—ասելով զարկեց երկու ձեռքով ճակատին։»

«Ես խաբվել եմ .... ախտս և հազար ախտս, այդ մի յիմարութիւն է եղել, երևի թէ դրացուս կողմից, որովհետև նա նկարել դիտէ .... այո՛, նորա բանն է, անիծածը երևի երևկոյեան երևի լսել է իմ ձայնաւոր խորհրդածութիւնը իմ հետ, և այդ բանը բերել է իմ գլուխը։ Փոյթ չէ, դրացի, ես մի օր քո դրան առաջև ևս կը չոքեմ ....»

—Ըսա, խնդրեմ, ի՛նչ խորհուրդ ունի այս բոլորը. ես ոչինչ բան չեմ հասկանում. և քո ընթացքը, ախոռի հանդիպածանքը, այժմեան խօսակցութիւնդ, իմ համար, եգիպտական առեղծուածներից (հանելուկներից) անցան։

«Պարո՛ն Պարիսս, հոգիս, դու գիտես, որ ես քեզ հոգուս պէս սիրում եմ, և քեզանից երբէք մի բան ծածկած չեմ, ուրիշին լսիր և այս գաղտնիքս, որ ոչ ոք չգիտէ, և առաջինը դու պիտոյ է լինիս, որ իմանաս։ Ես քո բարեկամութեան վերայ երկբայութիւն չունիմ, ուստի և անկասկած կարող իմ հաւատալ քեզ իմ գաղտնիքը, որովհետև ճակատագիրը այնպէս է բերել, որ դու իմանայիր նորան։ Փոյթ չէ, դու ևս մի կարդացող մարդ ես, այսօր դարձիր և խոստովանահայր, ի՛նչ կայ որ։»

Գ.

Պ. Հ՚աքարեանցը, այս իւր յառաջաբանով, պրլև ձեռների և դէմքի շարժուածքով մի այնպիսի ձև ցոյց տուից Պ. Պարկոսին, որ սա կարծից, թէ նորա հաւատալու գաղտնիքը մի քաղաքական մեծամիշտ բան է, վասն որոյ Պ. Պարկոսը, պատրաստվելով լսել, աւելորդ չհամարից վերստին հաւատացնել Պ. Հ՚աքարեանցին իւր դէպ ի նա անկեղծ բարեկամութիւնը։

—Հ՚նարհակալ եմ, շնորհակալ եմ,—ասաց Հ՚աքարեանցը.—ես գիտեմ քո բարեկամութիւնը, և այդ էր պատճառը, որ յօժարեցայ հաւատալ քեզ իմ գաղտնիքը, լսի՛ր ուրեմն։

—Մի քանի ժամանակ է, որ երազում մի գեղեցիկ աղջիկ տեսանելով, սիրահարվել էի նորա վերայ, այնպէս, որ ոչ ցերեկ ցերեկ էր, ոչ գիշերս գիշեր։ Նէթէ միայն մեռելի տանս և ընկերակի մտածութեան մէջ, յանկարծ մի շարժողութենից, մի աղաղակից դուրս գալով այդ խոր մտածութեան միջից, և աչքս դարձնելով դէպ ի այն կողմը, որ տեղից լսել էի աղաղակը կամ շարժողութեան ձայնը, այն սիրուն աղջիկս, ուրուականի պէս երևումէր աչքիս և անյայտանում դարձեալ։ Հ՚ատ մտածեցի, շատ որոնեցի մեր քաղաքի մէջ, թէ կա՞ արդեօք այդպիսի մի աղջիկ. Հշմարիտն ասեմ, եթէ լինէր, այնուհետև ամենայն ջանք

պիտոյ է գոյծ դնէի, այդ ազջկիկը ինձ կին խնդրելու, որովհետև ինձ թվումէր, թէ սանդծուած եմ միմիայն նորա համար, և մի միայն նորա հետ ամուսնանալով, կարծումէի, թէ կարող էի երջանկանալ։ Այլ բոլոր իմ հայց ու խնդիրս, բոլոր աշխատութիւնս զուր կորան. իսկ ազջկայ պատկերը ասես թէ բևեռել էին աչքիս որովհետև աչքերս այս կամ այն կողմը ձգելու ժամանակ, անդադար տեսանումէի նորան։ Ծուլացայ, մաշվեցայ. մարդու հետ խօսելու ժամանակ, շատ անգամ չհասկանալով նորա խօսածը, որովհետև միտքս թռչումէր այն ազջկայ քամակից, ամենևին մեքենաբար պատասխանումէի մի անորոշ բան, ոչ ատրաստական և ոչ բացատական, այն խորհրդով, որ վիճակիս կանդնած մարդը հակառակախօսութեան պատճառ չդտանելով, թողնէր ինձ հանդիստ։ Ամենայն ջանք դործ էի դնում հևուի փախչել որի և իցէ ընկերակցութենից. այն մարդիկը, որ յառաջ շատ սիրելի էին ինձ, այժմ դարձել էին իմ աչքում վախտալական փոշի. նոցա իմ մօտ ներս մտանելը ատելի էր ինձ, որովհետև ընդհատումէր իմ մտածութիւնը. ես երջանիկ էի, մինչև անդամ միմիայն երևակայելով այն հրեշտակային պատկերը։ Ահա այսպիսի հոգեմաշ հանդամանքների մէջ կորուսի բոլոր հոգեկան և մարմնական կարդութիւնքս, փոքր էր մնացել որ մահիճ ընկնէի։

—Ընդհանրերը .... մի օր, քաղաքից դուրս դնացած լինելով, մի ծառաստանի մէջ մեն դալու ժամանակ, յանկարծ, ծառերի քամակից տեսանումեմ այդ ազջկիկը, որ կանդնած, կամենումէ բռնել մի թիթեռնակ։ Ինձ թուեց, թէ աչքիս է երևում .... շփումեմ ձախաոս, սրբումեմ աչքերս, որպէս զի, եթէ երևոյթ է այդ, ատա արիւնը երակներում ընթացք ստանալով, անհետանայ այդ երևոյթը .... բայց ահա զարմանք .... ազջկիկը նոյն դրութեան մէջ, կանդնած ոտքի մատների վերայ և պարզած ազ ձեռքը, աշխատումէ բռնել մի մեծ թիթեռնակ, որ նրստած մի թուփի վերայ, շարժումէր իւր պոչծաւ, ծաղկանկանկար թևերը։ Մի անգամ դարձնալ սրբումեմ աչքս .... և դարձնալ տեսանելով նորան վազումեմ դէպ ի նա .... բայց, աւաղ .... ազջկիկը, մի զարհուրելից երկիւղ ցոյց տուող ձայն արձակելով, անյայտացաւ ծառերի քամակում։ Շատ որոնեցի նորան անտառի մէջ, այնու ամենայնիւ չկարողացայ դտանել։ Այդ բա-

նից յետոյ, սկզբը, առաւել և առաւել զօրացաւ իմ մէջ, որ հալումաշ սրից ինձ. Թվումէր, Թէ մի վէրք գոյացել էր սրտումն և ձգտակումէ սորան: Վասնը իսպառ փախաւ աչքիցս օրը ինձ տարի էր Թվում. վերջապէս, զրկվելով ամենայն բարեչաջող յոյսերից, մտածեցի գործ դնել եմ գերմարդկային զօրութիւնը.... ես յառաջ ևս կարող էի այդ բանը առնել, բայց չէի կամենում, յուսալով, որ առանց դորան ևս կարող եմ մի բան իմանալ: Վանի օր էր ալդէն, որ վճռել էի կատարել մի մեծ վհկական արարողութիւն, բայց ձեռացել էր այդ իմ դիտաւորութիւնը անկատար, չգտանելով մի բոլորովին սև հաւ, որ անշուշտ հարկաւոր էր. միւս այլ բաները վաղուց պատրաստել էի: Նրանք, երևոյեան, ապատաւորս գտել էր մի այդպիսի հաւ, և այնպէս ուրախ էի դորա վերայ, որպէս Թէ այդ հաւի մէջ տեսանելումէի այն գեղեցիկ օրիորդը, որ խելքս առել էր դլխիցս: Ուրախ ուրախ մանն էի գալիս դիւռումը ամբողջ դիշերը. լուսնի արծաԹափայլ ճառագայԹները խաղումէին տանս պատուհանի ապակիների հետ: Կապոյտ երկինքը զարդարված անհամար գոհարներով, ասես Թէ, ուրախակից էր լինում ինձ. մեղմիկ քամին ողջունումէր ծառերի ամեն մի տերևը, այս բոլոր բանաստեղծական հանդամանքները, այնպէս վառեցին ու բորբոքեցին հոգիս, որ չկարողացայ զսպել սրտիս խորհուրդը, որ հուսած ջրի նման վեր ու վայր էր լինում իմ մէջ: Ակսեցի բարձր բարձր խօսել իմ հետ, կատարելի վհկական արարողութեանս մասին: Զգնաւոր մտածումէիւնք էի առնում և նկարագրումէի այն օրիորդը, որ անշուշտ համարումէի յաւերժահարսն:

— Նրը որ ամենայն բան խօսել էի և մի փոքր հանդարտել էի, Թափելով սրտիս ուրախութեան աւելորդը, լսումեմ ահա, որ մի մարդ, պատպի միւս կողմից ծիծաղումէ բարձրաձայն: Նա ամբոխվեցայ, որովհետև իմ բոլոր խօսակցումէիւնքը անտարակոյս պիտի լսած լինէր այդ անպարկեշտ մարդը: Ո՞վ էր երկայ պատսպի վերայ, կամելով տեսանել Թէ ո՛վ էր այն, և ահա ոչ ոք չկար.... բայց.... արդարացի կասկած ունիմ դրացուս վերայ, որի հետ անցեալները կռուել էի մի մարահաւի համար:

— Վհնալով անկողին մտածեցի հոգ տանել և մեր կատարելի խնջոյքի վերայ, որովհետև երջանկութիւն առացեալը ոչինչ

յարդ ու արժանաւորութիւն չունի, եթէ փակվում է միայն մի մարդու մէջ, և եթէ այդ մարդը չէ կարող ուրիշներին էս հաղորդել նորան։ Գիշերը, երազում տեսայ իմ յաւերժահարսը, որ, մի բարակ բատիստեայ շապիկով, դուրս էր գալիս դեռից։ Ջուրը թացացնելով նորա շապիկը շինել էր բոլորովին թափանցիկ, և այդ պատճառով աչքերս վերստին կախարդվեցան նորա գեղեցկութենից....

— Այսօր առաւօտ ուղարկեցի քեզ այն տումտակը, որ ստացար։ իսկ ինքս գնացի ախոռ կատարելու իմ վհկական արարողութիւնը։ Այդ դիւթութեան խորհուրդը այն էր, որ անմաքուր ոգիների միջնորդութեամբ գանձէի իմ գեղեցկութեան գաղտնիքի ուրուականը, որ անտարակոյս պիտի երևէր ինձ, եօթն ջրհորի ջրով լցրած պտուկի մէջ, և հալցանէի նորանից, նորա ով և ինչ լինելը։

— Վհող արդէն յայտնի է, որ ես շատ անգամ կատարել իմ և աւելի ծանր գործեր, այս պատճառով ոչինչ տարակոյս չունէի իմ յառաջադիմութեան վերայ։ Յանկարծ, մինչ բոլոր արարողութիւնը կատարած, մեծ և անզովանալի փափագով աչքս ձգումեմ պտուկի վերայ, երևում է ինձ մի կերպարանք, որ սատանայ լինելու համար, մի միայն կոտոշ չունէր գլխին։ Ես նայումեմ զարձեալ, երևում է նոյն կերպարանքը և ինձ թուեցաւ, թէ այդ կերպարանքը ժպտումէր.... բայց այնպէս ահարկու էր նորա տեսիլը, որ մահու սարսափ բերից վերայս։ Իմ գեղեցիկ օրիորդի ուրուականը գանձելը և այդ հրեշտ ինձ երևելը ապացուցանում էր, թէ օրիորդը, որի վերայ սիրահարված էի, արդարև աղամորդի չէր, որ խայտառակելով իմ թեթևամտութիւնը, երևել էր ինձ այդ դիւական կերպարանքով, դեռ ևս ծիծաղելով իմ վերայ.... Այս տեղ կորուսի ես ինձ.... գիտեմ միայն, որ նեղս վազեցի.... բայց թէ ինչ էր պատահել այնուհետև, դու պիտոյ է ինձանից լաւ իմանաս, որովհետև ներկայ էիր։

Պ. Շ աքարեանցը, այնպիսի անկեղծ ոգևորութեամբ խոսեց այս բանները, որ Պ. Մարկոսը շարժվեցաւ։ Նորա երեսի մեռելատիպ կերպարանքը, վշտահար աչքերը, դողդոջուն ձայնը, և հակիրճ ընդհատված կարճ և արագ շնչառութիւնը —

այս բոլորը միանալով կազմուածին արդարև մի տխուր և սրտաշարժ ներդաշնակութիւն։

Պ. Պարկոսը աշխատելով այս խառար մտածութեան ամպերը ցրուել իւր բարեկամի դլխից, ասաց. «Ես, մտանելով ախոռը, զննեցի քո արարողութեան համար պատրաստած բանների հնացորդը և տեսայ մի ջրով լիք պտուկի յատակում Յուլիա Պոստրանայի պատկերը, որ ձեռքով և բաւական կոպիտ նկարած էր, հանեցի և ձգեցի նորան յատակի վերայ....

— Ո՛նչ բան ունի այդ հրէշի պատկերը իմ պտուկի մէջ, որ սատանան ձգել է նորան այդ տեղ, և ովի՞ թէ ճշմարիտ է այդ, միթէ ես երկիւղ կրելով այդ չիմար պատկերից, անկատար թողեցի իմ արարողութիւնը, որ դուցէ հասուցանէր ինձ իմ նպատակիս։

Պ. Հաքարեանցը, այս խօսքերը ասելով, սկսեց երեսայի պէս լալ և գլուխը ծեծել ձեռներով։ Այս մտածումէր, որ եթէ կիսակատար չթողուր իւր վհկական արարողութիւնը, ապա երևելու էր նորա յաւերժահարսը և ինքը հասանելու իւր փափագելի նպատակին։ Պ. Պարկոսի կարեկցութիւնը ստացաւ մի դործնական բնաւորութիւն։ Այս մտքումը դնելով անպատճառ գտանել այդ օրիորդը, որի համար խելքը թռուցել էր Պ. Հաքարեանցը, խնդրեց սորանից նկատագրել այդ օրիորդը։

Պ. Հաքարեանցը թէև բանաստեղծ չէր, թէև չունէր մի առոյգ և կայտառ հոգի, մի կենդանի լեզու, այնու ամենայնիւ, այս դիպուածումն, այնպէս խօսեց, որ, ասես թէ, նորա բոլոր շարժողութիւնքը, դէմքը, աչքերի փայլը, ձայնը, և այլն և այլն, ամենևքին իւրեանց համար ջոկ ջոկ լեզու դարձած խօսումէին Պ. Հաքարեանցի փոխանակ։ Այս յայտնեց, թէ այդ օրիորդը բարձրահասակ է, սպիտակ, մազերը շեկագոյն, աչքերը պարզ երկնագոյն, շրթունքը կարմիր, որի երեսը նմանեցնումէր թաւիշի. իրանը շատ կանոնաւոր, կուրծքը կատարելապէս կերպարանագործված և պարարտ, իսկ հագուստը վերջին — ամենանոր ձևով, որ կրումէին փարիզում։ Պ. Հաքարեանցը կարծումէր նոյնպէս, թէ այդ օրիորդը պիտոյ է գեղեցիկ և սուր ձայն ունենայ, նա եզրափակումէր այսպէս նորա աղաղակից, որ արձակել էր անտառի մէջ, Պ. Հաքարեանցի երևելու ժամանակ։

Պ· Ա՛ակոսը, այս բոլոր նշանները գրելով իւր ծոցի տետրակի մէջ, խոստացաւ ամենայն հնար գործ դնել, ամենայն հարց ու խնդիր անառես չառնել, այդ օրիորդը գտանելու համար, եթէ միայն կար ապրարև մի այդպիսի օրիորդ իւրեանց քաղաքում:

Երբ մի փոքր հանդարտել էր Պ· Հ՛աքարեանցը, Պ· Ա՛արկոսը խնդրեց մի բաժակ ապաղ, և մի փոքր նախաճաշիկ: Նա ասումէր, որ այդ կ՛ամրացնէ Պ· Հ՛աքարեանցի թուլացած զօրութիւնքը: Ուրդարև մի րոպէ հոգի առնելուց յետոյ, երկու սրտակից բարեկամների խօսակցութիւնը ստացաւ բոլորովին այլ ուղղութիւն:

Գ·

«Այժմ խօսենք մեր խնջոյքի մասին, — ասաց Պ· Ա՛արկոսը, ապաղը լամելուց յետոյ, ցած դնելով բաժակը:

— Խօսենք, եղբայր, խօսենք, — պատասխանեց Պ· Հ՛աքարեանցը մեքենաբար, ցանկանալով մոռանալ անցած գնացածը:

«ՎՀո պատրաստութեան մէջ, ես տեսանում եմ թերութիւնք, — շարունակեց Պ· Ա՛արկոսը, — եղբայրացնելով այն ծանօթութենից, որ տուեցիր ինձ այսօր քո կարճառօտ տումնակով: Դու մոռացել ես հոգալ, նախ, Լօմ, երկրորդ, անզլիական ձին, երրորդ, Կօնեակ, չորրորդ Սարեպտի բալասան, միւս ինչ որ հոգացել ես, լաւ է: Բայց այսքան պիտոյ է իմանալ, որ ուրախութիւնը ուրախութիւն չէ լինում, եթէ նորա շինուածքը հաստատ պահող հիմքերը չկային, այն չորս տեսակ ըմպելին այնպիսի սիւներ են, որոնց վերայ կարելի է ուրախութեան պալատներ ևս շինել:»

— Եղբայր, ներէ՛ր, մոռացել եմ· մի՛ գուցէ այդ բանը վերագրես իմ ժլատութեանը· ես իսկոյն կը հոգամ, և շնորհակալ եմ, որ ասացիր, թէև կարող էի ես ևս միտք բերել, բայց այսպիսի շփոթութեան մէջ.... գուցէ մոռանայի ևս: Հ՛աստ ստոյգ է, թէ ոչինչ բան այնպէս հիմնաւոր չէ ինչպէս միաբան խորհրդով կատարվածը· և ահա ես իսկոյն կը հոգամ ինչ որ պակաս է· էյ սարդի՛ս:

Սարգիսը Հ՚աքարեանցի սպասաւորն էր, որ իսկոյն երևեցաւ իւր պարոնի ձայն տալու վերայ։

«Տես, ի՛նչ է ասում պարոնը, — շարունակեց Հ՚աքարեանցը ծառային, ցոյց տալով Պ. Մարկոսի վերայ. — իսկոյն պատրաստիր ինչ որ կը հրամայէ քեզ։»

— Երկու շիշ Նամայկայի լաւ Ռոմ, երկու շիշ Կոնեակ, երկու շիշ Անգլիական ձին, և երկու շիշ Սարեպտի բալասան, — իսկոյն կցորդեց Պ. Մարկոսը։

Սարգիսը դուրս տուէց և դուրս գնաց։

Պ. Հ՚աքարեանցը շարունակեց. — ուրիշ ի՛նչ այնպիսի բաներ կայէն, որոնց վերայ պիտոյ էր խօսել։

«Դու գրումիդիր, թէ պիտոյ է խորհուրդ կատարել, ովքեն հրաւիրել և ովքեն ոչ» — պատասխանեց Պ. Մարկոսը։

— Այո՛, այդպէս։ Նա շինել եմ ահա մի ցուցակ, որի մէջ գրել եմ, մեր հրաւիրելի բարեկամների և ծանօթների անունները։

«Արդա տեսանեմ»։

Պ. Հ՚աքարեանցը հանեց սեղանի վերայի թղթերի տակից, որ խառնիխուռն ընկած էին, մի թերթ թուղթ և սկսեց կարդալ։

— Ուրեմն բոլորը տասն մարդ, — ասաց Պ. Մարկոսը, — մեզանով կը լինի տասնեկու. առաքելական թիւ է, խորհրդաւոր է։ Մի՛այն դիտեմ, ես այդ մարգերից մի քանիսին չեմ ճանաչում, իսկ այսպիսի հրաւէրի ժամանակ, հարկաւոր էր որ վերահասու եղած լինէինք դոցա բոլորի բնաւորութեանը, որովհետև առանց այսպիսի խորութեան, հանդիպողին հրաւիրել, իմ կարծիքով, յիմարութիւն է։ Նախ, այն պատճառով, որ մեր ընջոյքի մէջ կարող էր մի անախորժ դիպուած յառաջանալ, պատճառած որ և իցէ յիմարութենից. երկրորդ, զանազան խօսակցութիւնք ծագել, որ ընդդէմ էին մեր ուրախութեամբ ողևորված ընկերութեան ուղղութեանը։ Պատահումն մարդիկ, որ առանց ուշադիր լինելու տեղին, հանդամանքներին և պատշաճին, փիլիսոփայութիւն է, որ առնումն և այդ կերպով գլուացաւութիւն պատճառելով ներկայ դտանված մարդկերին, արդէն հերիք պատճառ են դառնում, որ նոցա հոգին ուրախութենից դէպ ի տրտմու-

թիւն փոխադրվի։ Եւ ձշմարիտը պիտոյ է ասել, ուրախութիւան մէջ ի՛նչ հարկաւոր են ուսումնական խօսակցութիւնք. մարդը ուրախանալու ժամանակ, պիտի մոռանայ իւր անձը, իւր ոլորիսութիւնը, իւր շրջակայքը և հանգամանքները, որ ուրախութիւնը համ տայ նորա բերանին։ Խօսքը մեր մէջ մնայ, մարդը այդպիսի ժամանակ պիտի մի փոքր անասնանայ.... կարծեմ, դու ևս ընդդէմ չես այս իմ կարծիքին։

«Ա՛յո ասածը դուստ ձշմարտութիւն է, ի՛նչպէս կարելի է ընդդիմանալ նորան, ամենայն ժամանակ ուսումնականութիւն հա ուսումնականութիւն անտանելի է, մարդու գլուխ կը ձաքեցնէ. միւս կողմից ի՛նչ մի մեծ վնաս է, եթէ մարդը երբեմն երբեմն անասնանայ նոյնպէս. հաւատա՛ ինձ, ան ասունի կեանքը մեր կեանքից շատ վատ չէ աշխարհի երեսին։»

—Դու ևս ձշմարիտ ես խօսում։

«Ահայ ի դորանից, մարդը ինչով է զանազանվում անասուններից, և ի՛նչ բանով դերազանց է քան թէ անասունքը, միթէ նորանով, որ խելքնելը և ուսումնականքը գոռում են, թէ մարդը բանականութիւն ունի, թէ նա մի բարոյական էակ է և այլն և այլն. ամենևին ոչ։ Մարդու զանազանութիւնը և գերազանցութիւնը անասուններից այն է, որ անասունը խմում է այն ժամանակ միայն, երբ ծարաւի էլ, իսկ մարդը և ծարաւի չլինելով կարող է բաժակներ դատարկել։ Անասունը խմում է միայն լոկ ջուր, իսկ մարդը, ցոյց տալով իւր մեծութիւնը և անասուններից գերազանցութիւնը, խմում է օդիաւոր հեղանիւթք, երբեմն 30^0 և երբեմն աւելի բարձր աստիճանի։ Արի՛, ձշմարիտը խօստովանինք, պ. Մարկոս, միթէ մարդը ևս մի տեսակ անասուն չէ. բայց մեր թշնամիքը, այն ուսումնական անուանված յիմարքը, պիտի ասեն, թէ մարդը բանական հոգի ունի, մարդը խօսում է և այլն։ Նախ, ով է տեսել այդ հոգին, մարդու վիզը որ կտրես, ո՞չ ապաքէն այնպէս մեռանում է, ինչպէս այն սև հաւը, որ տեսար ախոռումն. երկուքի ևս մեռելութիւնը մի և նոյն է, երկու դիպուածում ևս մահ, և ոչ ոք մինչև այժմ չէ տեսել, մարդու մեռանելու ժամանակ նորա հոգու դուրս գնալը մարմնի միջից։ Երկրորդ, միթէ անասունքը բան չեն հասկանում, ասա, թէ մարդ ես, վեր ա՛ռ գետնիցը մի քար և տես թէ քիզանից ոչ շատ

հիւթի նստած ձ նձղուկը, ագռաւը, կամ շունը կ՚սպասեն որ դու զարկեիր նորանց։ Ես ի՛նչ տեղից գիտենք, որ այդ անասունքը չեն խօսում միմեանց հետ իւրեանց լեզուով, մեր նոցա լեզուն չհասկանալուց կարելի՞ է եզրափակել նոցա անբանութիւնը, ոչ ապաքէն մեր խօսածը ևս նոցա համար այնպէս անհասկանալի է, որպէս նոցանը մեր համար։ Այդ փիլիսոփայութիւնքը և գիտութիւնքը խաբեբայութիւնք են։ Գոնէ, իմ կարծիքով, վերին աստիճանի փիլիսոփայութիւնը այն է, որ մարդու փորը կուշտ լինի, ըմպելիքը առատ, օրը ուրախ, սիրական կինը կողքումը։ Եթէ, սորանից աւելի, կայ մի երջանկութիւն, ասա, ընդունեմ։»

— Ինչ որ ճշմարիտ է, ճշմարիտ է· սիրելի Հ՚աքարեանց, ուրեմն համաձայն ես ինձ, որ պիտոյ էր ընտրութիւն առնել հրաւիրելի մարդկերի մէջ։

«Ամենևին համաձայն եմ, և այդ պատճառով ևս խնդրել եմ քեզ իմ մօտ, արի՛ նստինք և կատարենք մեր գործը։»

Հ՚աստ բարի, բայց, ինչպէս ասացի, այդ մարդկերից շատերը անծանօթ են ինձ։ Ընդհակ, աւելի լաւ չէի՞ լինելու, եթէ այդ խորհուրդը կատարէինք Պ· Մանթուխեանցի ներկայութեամբ. նա, դոցա բոլորին ճանաչումէ, և բարեկամ լինելով մեզ, ի հարկէ ճշմարիտը կ՚ասէ մեր օգտի համար։

«Այոմնի բան է, այդ լաւ էր, բայց դաւը այս է, որ նա հաղիւ թէ ժամանակ ունենայ. նորա պարապմունքը կը նեղի՞ն արդեօք ժամանակ կորուսանել այս խորհրդակատարութեան վերայ։»

— Դա ի՛նչ մի երևելի գործ ունի, ի՛նչ մի տլքունի պաշտօնի տէր է, որ չկարողանայ բարեկամներուն համար մի քանի ժամ յետ դնել իւր պարապմունքը։

«Ճշմարի՛տ է, նորա բուն գործը մի երևելի բան չէ, ինչպէս քեզ ևս յայտնի է, և նա այնպիսի մարդ է, որ ոչ թէ մի քանի ժամ, այլև օրեր պատրաստ էր զոհ բերել իւր բարեկամներին. բայց ի՛նչ առնես, այս րոպէին նա այնպիսի դրութեան մէջ է, որ ժամանակը շատ թանդ արժէ նորան։ Ես քեզանից գաղտնիք չունիմ, — յաւելոցրեց Պ· Հ՚աքարեանցը, բարեկամաբար զարկելով Պ· Մարկոսի ուսին — և յոյս ունիմ, որ դու այնքան խորհրդապահ կը լինես, որ ոչ ոքի չասես այն գաղտնիքը, եթէ երդում տալով հաւատացի քեզ։»

— Չրեք հարիւր տասն և ութն հայրապետների նզովքը գլխիս լինի, եթէ մի մարդու ևս յայտնեմ այդ բանը, — ասաց ջերմ ջերմ Պ. Մարկոսը։

«Լաւ իր ուրեմն, Պ. Մանթուախեանցը շուտով այնպէս հարստաց կը դառնայ, որ Ծօթշելլը կոպէկ չարժէ նորա առաջև։»

— Ո՛նչ ևս խօսում։

«Լաւ իր, նա պարապում է Ալքիմիայով....

— Ո՛նչ ասել է Ալքիմիա, խնդրեմ հասկացրու, — վեր առաց շուտով Պ. Մարկոսը։

«Դա մի գիտութիւն է, որ ուսուցանում է հասարակ մետաղները, զոր օրինակ, երկաթը, պղինձը, անագը, և այլն, ազնուացնել, այսինքն ոսկի և արծաթ փոխարկել նորանց։»

— Մի՞թէ կարելի՞ է այդպիսի բան։

«Ընտրակոյս. հարկաւոր է միայն լաւ ուսանել Ալքիմիան,»

— Շ՛շմարի՛տ, առաջին անգամ լսումեմ այդպիսի բան։

«Այդ ի՛նչ էիր կարծում, սիրելիս։ Ալքիմիան քո կարդացած բաների նման չէ. ի՛նչ քո կարդացած, և իմ թալեսմաններին ևս նման չէ. դա մի ջոկ բան է....

— Ո՛նչ տեղից է այդ գիտութիւնը, և ի՛նչպէս ուսել է Պ. Մանթուախեանցը։

«Ես ի՛նչ տեղից է այդ գիտութիւնը, երկար կը լինի պատմել, մանաւանդ ևս ևս հաստատ չգիտեմ, թէև միանգամ պատմել է ինձ Պ. Մանթուախեանցը, իսկ թէ ի՛նչպէս հասել է նա այդ գիտութեանը, այդ բանը մի գաղտնիք է, որ ինձ ևս չէ բացել։»

Տարակոյս չկայ, որ շատ թէ փոքր տեղեկութիւն ունէիս այդ գիտութեան վերայ, գոնէ այնքան պատմի՛ր ինձ որքան գիտես, յետոյ ես ինքս կան կը գամ գլուխի մէջ։

«Դու զուր տեղը մի՛ որոնիր քո գլուխի մէջ, ոչինչ գտանելու չես. իսկ թէ շատ խնդրուամես ինձ, ուրեմն ևս ցոյց կը տամ քեզ մի թուղթ, որի վերայ գրած է Մանթուախեանցը մի քանի ծանօթութիւնք Ալքիմիայի մասին։ Այս տուից ինձ այդ թուղթը հաւատացնելու համար ինձ, թէ կայ մի այդպիսի գիտութիւն և թէ շատ խելացի մարդիկ եղած են դորա սպասուորք։»

— Աստուծոյ սիրուն ցոյց տուր ինձ այդ թուղթը, ես շատ ուրախ կը լինիմ և շատ շնորհակալ, և դորա փոխանակ կը տամ քեզ մի գրչագիր աղօթագիրք, որի գլուխները չեն դիմանում ոչ թէ հասարակ դևերը, այլև բէեղզեբուղը, բելիալը և սատանան իսկ։

Պ. Հ. աքարեանցը վեր կացաւ տեղից և գնալով միւս սենեակը բացեց պահարանը և սկսեց որոնել։ Նորա պահարանի անկարգութիւնը անցել էր Օսմանեան սուլթանի կանոնոցի անկարգութենից, և, ինչպէս ասում են Հուսաց առածը, սատանան ոտը կը կոտրէր մտանելով այդ անկարգ պահարանի մէջ։ Գրչագիր ախտալքների, ուրբաթագրքերի, կարմիր թանաքով գրված մագաղաթների թիւը համարը չկար, բոլորը խառն ի խուռն ծալ ված ձնշված, որը առանց երեսի, որի թերթերը ցիրուցան, որը ցեցակեր մի խօսքով, բաբելոնեան խառնակութիւն։ Ահա այս պահարանի մէջ սկսեց որոնել Մանթուխեանցի, Ալքիմիայի մասին տուած, ծանօթաբանութիւնքը։

Պ. Մարկոսը, մնալով միւս սենեկում, կամաց, քթի տակից, երգում էր մի մեղեդի։

Պ. Հ. աքարեանցը երկար որոնելուց յետոյ գտաւ Մանթուխեանցի գրչագիրը և ինքնաբաւական կերպով եկաւ միւս սենեակը, ուր Պ. Մարկոսը երգում էր իւր մեղեդին։

— Գտայ, գտայ, — գանչեց Պ. Հ. աքարեանցը։

«Տնաքանդ, խօսելու ժամանակ չէ, բեր կարդանք» — իսկոյն պատասխանեց Պ. Մարկոսը։

— Ըո, կարդա, բայց ձայնով, ես ևս կամիր լսել, որովհետև մոռացել եմ դորա բովանդակութիւնը, — ասաց Պ. Հ. աքարեանցը, տալով թուղթը Պ. Մարկոսին։

«Ընչպէս կարդամ, որ հիանաս» — պատասխանեց Պ. Մարկոսը ջերմեռանդութեամբ։ Եւ այդպէս նորա անդադար նարեկ կարդալը շատ ձեռնտու էր եղել նորան ընթերցանութեան մէջ վարժվելու։

Պ. Հ. աքարեանցը նստաւ իւր բազկաթոռի մօտ։

Պ. Մարկոսը սկսեց կարդալ։

«Ծանօթաբանութիւն Ալքիմիայի մասին, քաղուած մի հին գրչագրից։» Այդ գրչագիրը գրված էր Ուհա քաղաքում

Հայոց ՈՒԸ. Թուականին։ Զհոս երթայ, զիրս ձեռայ, ակար մարմինս ի հող դառնայ։ Յիշեցեք միով հայր մեզայիս զաշխատողս, զնեղլեւեալ ոդիս Աստուծոյ ծառայիդ ծառայ զՄանթուխեանց։

«Ալքիմիայի սկիզբը յայտնի չէ. չէ պիտոյ որոնել նորան ոչ Յունաց, ոչ Եգիպտացոց, ոչ Հնդկացոց և ոչ Չինէացոց մէջ. այս խնաստուն ազգերը չէն մտածել մարմինների վերլուծութեան վերայ։ Պիտոյ է, որ Արաբացիք համարվին աւենահին Ալքիմիկոսք, նոցա մէջ միայն այդ դիտութեան խորհուրդը էր ոչխ չքնել ուսուցանել։

Սկիզբը կարծիքի, թէ կարելի բան էր զանազան նիւթերից ոսկի շինել, նոյնքան հին է, որքան ագահութիւնը դէպ ի ոսկին։ Յուլիոս Փիրմիկ Մատուռնոսը չորրորդ դարու սկզբումը, և Հնէաս Կլասիուս, հետևեալ դարում, խօսում են այդ դիտութեան վերայ, որպէս սովորեն բոլորովին յայտնի առարկայի վերայ։ Ալքիմիկոսներից ոմանք հաստատուում են թէ իւրեանց դիտութեան հետքը երևում են եդիպտական քուրմերի սրբազան մատեաններուն մէջ, և թէ Եդիպտացոց ձեռքով Պտղոմեոսի նուիրված տաճարը կանդնեցուցած էր Ալքիմիայի պատուի համար. ոմանք, թէ այդ դիտութիւնը վեր է քան թէ մարդկային խելքը, և թէ աստուածակոյս կողմից յայտնված է նա մարդկերին. նոքա Աբեպ+ անուանում են իւրեանց և աւելի քան չունէին հաստատել ուրիշները իւրեանց գաղտնիքին, ասելով, թէ սարսափելի տարաբաղդութիւն անպատճառ հասանելու էր նոցա, գաղտնիքը բանալու համար։

«Ալքիմիայ դարու մօտ, ասրել է Արաբացոց մէջ Գեբիր կամ Ջաբիր անունով դիտնականը, որ ծնած է Խորասանում։ այդ մարդը հելինակ է Ալքիմիայի մասին գրված աւենահին աշխատութիւններին։ Այդ աշխատութիւններից մինի մէջ, որ լատին թարգմանութեամբ յայտնի էր անունով Summa perfectionis, նա հաւաքած ունի այն բոլոր տեղեկութիւնքը Ալքիմիայի մասին, ինչքան եղած էին դոքա մինչև նորա օրը։ Այդ աշխատութեան խորհուրդը է, բանալ մետաղների դէպ ի ոսկի փոխարկելու գաղտնիքը և գտանել ընդհանուր դեղը — կենսական կամիկը։ Նա արդարև Ջաբիրը, իւր կարծիք կարելի, որ լուծած ոսկի էր, տալիս է որ-

պէս մի հնար, կեանքը անորոշ ժամանակով երկարացնելու և մանկութեան ծաղիկը վերանորոգելու։

*Ան*ը բոլոր հին և նշանաւոր Ալքիմիկոսներից Նէլսոպայումը էր այն սալամանդրի կախարդը, որի անունի հետ կապակից է այն հրաշալի «պղնձեայ գլխի» յիշատակը, — Ֆլանսիսկեան կարգի աբեղայ, Ռօճեր Բէքոնը։

«Ռօճեր Բէքոնը ծնած է Սոմերսետ կոմսութեան մէջ 1214 թուականին և ուսումն է առած նախ Օքսֆորդում, յետոյ Փարիզում։ Նորա աշխատութիւնքը կարդալով չէ կարելի չզարմանալ հեղինակի բազմահայեաց գիտութեան վերայ, յայտնի բան է հաշուի տակ ձգելով նորա դարու անկրթութիւնը և տգիտութիւնը, որի մէջ երևել է Բէքոնը։ Նորա Opus majus գործը հաստատում մեզ, թէ մի քանի Ալքիմիկոսք կարող են ոսկի շինել և գտել են այն դեղը, որի օգնութեամբ կարելի է քանի հարիւր տարիներ ապրել։ Ֆլանսիսկեան կարգի աբեղայքը, նորա նախանձոտ եղբայրակիցքը, դատապարտեցին նորան որպէս կախարդ, երևի թէ պղնձեայ գլխի համար, որ խօսում էր, և համարում էր ոչինչ պակաս, քան թէ կարող էր մարդը, և խեղճ Ռօճեր Բէքոնը իւր պատանեան կարգակիցների ձեռքով ձգվեցաւ բանդի մէջ։

«Այդ միջոցին Ալքիմիայի ասպարիզում փայլում էր մի այլ նշանաւոր մարդ, ոչինչ պակաս իւր գիտութեամբ քան թէ Բէքոնը։ Սա էր Ալբերտոս Մօլատեսեանը, կամ Ալբերտոս Մեծը, որ համբաւած էր որպէս երևելի կախարդ, և ծնած է Շվաբիում 1205 թուականին։ Նա մնաւ Դոմինիկեան կրօնաւորների կարգը Վէօլն քաղաքում, և վերջապէս դարձաւ Բեգենսբուրգի եպիսկոպոս։ Սա էս Բէքոնի նման աշխատութիւն այն ամենայն ուսման և գիտութեան մէջ, որ վերաբերվում էին մարդուն, magnus iu magia, major in philosophia, maximus in theologia. Շատ են այս մարդու աշխատութիւնքը, բայց Ալքիմիայի մասին երկու։ Առաջինը անուանվում է De Alchymia. այս տեղ կարդում է քիմիկական նիւթերի մանրամասնութիւնքը, որ յայտնի էին իւր ժամանակին, նկարագրում անօթները, որ գործածութեան մէջ էին այն միջոցներում, և զանազան փորձեր և նկատողութիւնք, որ յաջողել էր նորան կատարել։ Երկրորդի առարկան են հանքերը,

որ ցոյց են տալիս հեղինակի հասուն գիտութիւնը քարերի, մետաղների եւ աղերի որպիսութիւնների։ Ալբերտոսը վարժապետ էր Քովլնայ Ակուինացու, որ նոյնպէս թողել է մի աշխատութիւն Ալքիմիայի մասին. բայց այդ աշխատութիւնը, նորա բոլոր միւս աշխատութիւնների նման, պատած է ծածկախօսութեան մառախուղով։ Այս աստուածաբանի աշխատութիւնների մէջ առաջին անգամ տեսանում ենք աստեղահմայութեան եւ Ալքիմիայի ըղգակցութիւնը։»

«Ղզդային կարծիքը ասում էր, թէ Ալբերտոսը ունի մի գերբնական գործակից, որ օգնում էր նորան աշխատութեան մէջ, այլ եւ յաղթելու այն բոլոր դժուարութիւններին, որոնց հանդիպում էր նա։ Ալբերտոսը միանգամ ձաշի խնդրից իւր մօտ մի հոլանդացի կոմս։ Իւր երեւելի հիւրը աւելի պատուասիրելու համար հրամայեց նա սեղան դնել այդտեղ եղանակը ձմեռն էր։ Յայտնի բան է, որ կոմսը եւ նորա մարդիկը զարմացան Ալքիմիկոսի այս գործողութեան վերայ, ըստ որում գետնի երեսին ընկած էր մի քանի ոտնաչափ ձիւն։ Բայց Ալբերտոսը սեղան նստած չնստած, անյայտացաւ ձիւնը, մի ակռիժ ջերմութիւն փոխանակից անհամբոյր ցուրտը. ծառերը դեղեցան կանաչ, ծաղիկները անուշահոտութեամբ լցուցին օդը, եւ անհամար բազմութիւն ուրախ թռչունների սկսեցին զըուցել կանաչ ճիւղերի վերայ։ Այս զմայլանքը շարունակվեցաւ ամբողջ ձաշի ժամանակ, բայց դինու վերջին բաժակը խմելով, իսկոյն անհետացաւ ամառը, եւ ցուրտը դարձեալ փչեց իւր բոլոր առաջին խստութեամբ։»

«Երկար ժամանակ, բայց ի Ռենեդիկտեան կարգի Ռասիլիոս վանահին աբեղայից, որ Գերմանիայի Էրֆուրդ քաղաքում ծնած էր 1394 ին, չերեւեցաւ մի օրինաւոր ալքիմիկոս, թէեւ շատ կային անունան մարդիկ, որ պարապում էին այդ գիտութեամբ։ Այս մարդերից մինը, յատկապէս Յովհան դը Մեօն (Jean de Meun) վարդի պատմութեան հեղինակը, մի քանի ոտանաւորների մէջ ցոյց էր տուել փիլիսոփայական քարի դաղանիքը, առանց յայտնելու շահաստացութեան ցանկութիւն։ Պիտոյ է նոյնպէս յիշել այս տեղ եւ Նիկոլայոս Ֆլամելը, որ շատ խօսքերի պատճառ է եղել իւր կեանքի մասին։ Ղզդը ասում էր թէ նա գտաներով փիլիսոփայական քարը, տէր էր դարձել անհամար հա-

լատութեան, որոնց մի մասը գործ է դրել անել և մինչև անգամ եկեղեցիք շինելու համար, և մեռած ձևանալով, իւր կնոջ հետ միասին, գնացել է մի հեռաւոր աշխարհ և անմահանալով այն տեղ թագաւորութիւն անսպառելի գանձերի վերայ։»

«1527 թուականը մի մեծ տարեգլուխ է Ալքիմիայի համար։ Առաջին ամբիոնը գասախօսութեան հիմնվեցաւ Խազըլ քաղաքում և Թէոֆրաստ Պարացելսոսը հրաւիրվեցաւ ունել այդ ամբիոնը։ Այս գերօրինակ մարդը ծնած է 1493 թուականին Յիւրիխ քաղաքի մօտ։ Նորա հայրը, որպէս բժիշկ ուսուց նորան Ֆիզիկա և Խիրուրգիա, բայց Ալքիմիան սիրական զբաղութիւնն էր երիտասարդ Պարացելսոսի. նա ուսաւ այդ գիտութիւնը նախ Տրիթեմիոս մանհէյմեան աբեղայի մօտ, յետոյ Ալիխամունդ Ֆուգգերոսի մօտ։ Պարացելսոսը պարապումէր որոնելով ընդհանուր դեղը և անորոշ ժամանակով կեանք երկարացնելու հնարը։ Իւր աշխատութիւններին մէջ, նա մեծ զանազանութիւն է դնում ընդհանուր դեղի, panacea, և կենսական կոնկի մէջ։ Իւր նպատակին հասանելու համար, նա կատարեց շատ փորձեր. «բայց, — ասում Պարացելսոսը, — ես դեռ շատ յառաջ գիտէի փիլիսոփայական քարի գաղտնիքը, որ ուսել էի Աստանեզնուպօլսում, դառնալով Ռուսաց թագաւորի որդու (?), որ դեսպան էր այդ մայրաքաղաքում, պաշտօնեաների կարգում։»

«Մի զարմանալի հանդամանք հասուցել է դորան այդ պատուին։ Նա այդ ելանելով եւրոպական համալսարանների մեծ մասին, դերի ընկել էր թաթարների ձեռք, և ազատվելով դէպ է Ռուսաստան, ներկայացել էր թագաւորին երեւի թէ Վասիլևս չորրորդին, որ իւր որդու հետ ուղարկել էր նորան Աստանդնուպօլիս։»

«Պարացելսոսը երկար ժամանակ չմնաց որպէս ուսուցիչ Ալքիմիայի։ Մի օտարոտի անցք պատճառ դարձաւ, որ նա հրաժարվի այդ պաշտօնից։ Նա, ուսուցանելով Ալքիմիա, պարապումէր և գործական բժշկութեամբ։ Միանգամ հրաւիրեցին նորան գնալ մի վանդակաւոր ցաւով հիւանդ աբեղայի մօտ։ Պարացելսոսը, յառաջ քան թէ սկսած էր գործ դնել իւր բժշկութիւնը, հարկաւոր համարեց պայման կապել իւր աշխատութեան համար ստանալու վարձի մասին։ Աբեղան խոստացաւ 100 դուբ-

դրին, եթէ միայն առողջանայ։ Պարացէլսոսը պատրաստեց օփիումից երիք հաբեր և քանի և չորս ժամի մէջ առողջացրեց հիւանդ արեղան։ Առողջացած արեղան համարեց, թէ խոստացած արծաթը շատ մեծ էր, համեմատելով Պարացէլսոսի կարճաժամանակեայ բժշկագործութեանը, ուստի և հրաժարվեցաւ հատուցանելուց։

«Հացվեցաւ մի դատաստանական վէճ։ գործը յանձնվեցաւ վերջապէս բժիշկների քննութեան և վերահասութեան, որոնք վճռեցին, թէ հերիք է մի շատ չափաւոր վարձատրութիւն, որովհետև հիւանդը խիստ կարճ միջոցում առողջացել էր։ Պարացէլսոսը կորուսանելով այս վէճը, ցոյց տուեց դատաստանի մէջ իւր արհամարհանքը այդպիսի անիրաւ վճռահասութեան վերայ. այս բանը պատճառ տուեց նորա ընդդէմ մի մեծ թշնամութիւն յառաջանալու, որ և ապա հարկադրեց նորան հեռանալ Բազըլից։ Նա վերված ամենայն օգնութիւնից մեռաւ շատ քաղաքներ, յետոյ հասանելով վերջին աղքատութեան, 1541 թուականի սեպտեմբերին վախճանեցաւ Սալսբուրգ քաղաքում։ Այս մեծ Ալքիմիկոսը սաստիկ անձնատուր էր արբեցութեան, և շատերը ասում են թէ նա զոհ գնաց իւր նախանձորդների վրէժխնդրութեանը, որոնք մի խնջոյքի մէջ գերել էին նորան։

«1703 թուականին, երևեցաւ Անգլիայում մի մեծ Ալքիմիկոս — բժշկութեան վարդապետ, Պրայս անունով (Price)։ Այս բժիշկը պատրաստում էր փոշիներ, սպիտակ և կարմիր, և դոցա միջնորդութեամբ, կամեցածի պէս, ժիպակը փոխարկում էրբեմն ոսկի և երբեմն արծաթ։ Նա հօմն անգամ հրապարակական փորձեր փորձեց, մինչ ներկայ էր մի մեծ բազմութիւն ժողովրդի։ Յաջաւորական Ընտրակութիւնը, որ յառաջուց շատ սառն աչքով նայում էր այս փորձերի վերայ, հարկ համարեց, որովհետև վարդապետ Պրայսը անգամ էր այդ հասարակութեան, մի առանձին ժողով կարգել, ոսկեգործութեան հնարները և եղանակները քննելու համար։ Նրբը հարկադրեցին Պրայսին փորձ կատարել ժողովի անդամների առաջև, նա պատասխանեց, թէ չունի այլևս այն փոշիները, առանց որոց անհնար էր, բայց ի սրանից մէջ բերեց և մի քանի այլ պատճառք։ Ժողովը ժամանակ տուեց նորան փոշիներ պատրաստելու համար, և հետևեալ տա-

լումը պիտի վճռվէր նորա գաղտնիքի գործը. բայց Ալքիմիկոսը չկամեցաւով յայտնել իւր գաղտնիքը, մահադէղ ընդունելով մեռաւ։»

«Բայց ի այս երևելի մարդկերից ուրիշ շատերը պարապած են այս գիտութեամբ, բայց ցոյց տալու համար թէ ուշադրութեան արժանի էր այս ուսումը, հերիք համարվումէ այս հաւանցի գծագրութիւնը։ Այժմ անցանենք համառօտապէս դնել այս տեղ Ալքիմիայի տեսութիւնը, թէ նա ի՛նչ հիման վերայ կարելի է համարում ոսկեգործութիւնը, և թէ ի՛նչ հնարներ ունի այդ մասին։

Ջ՝երերի տեսութիւնը այսպէս է, թէ բոլոր մեռալները բաղկացած են ժիպակից և շատ կամ փոքր մաքուր ծծումբից (բայց ի այս երկու տարրական մարմիններից Ջ՝երերը խոստովանում է և մի երրորդ մարմին — մինդեղը)։ այսպէս տեսանելով բոլոր մեռալները ուրեմն և ոսկին, ապա հարկաւոր էր փորձել և իմանալ թէ այս մարմիններից ոքան և ինչ չափով գտանվումեն ոսկու մէջ, կամ միւս հասարակ մեռալների մէջ. հասկանալով այս բանը, միւս մեռալների բաղադրական մասները հաւասարելով ոսկու բաղադրական մասներին, անտարակոյս անագը, պղինձը, երկաթը և միւսերը փոխարկվելու էին դէպ ի ոսկի։ Այս փորձերի մէջ ներդործողները էին զանազան ազդեր, պաղլեղ, արջասպ, ապակի, բուռա, քացախ և կրակ։

Ջ՝երերի ժամանակից սկսած մինչև երկու հարիւր տարի յետոյ, Ալքիմիան, անբաւական մշակվելով, փոխեց իւր տեսութիւնը և գալաձաւ այսպէս. որովհետև ոսկու բաղկացուցիչ մասները շատ կամ սակաւ գտանվումեն միւս բոլոր մեռալների մէջ, և որովհետև սաստիկ խառնուած լինելով պահանջումեն մի ամենազուտ մաքրողութիւն, այդ պատճառով կրակը է մի մեծ ներդործող որի կարողութիւնը անսահման է։ Ոչինչ չէ յառաջանում առանց նորան, իսկ նորանով ամենայն բան կարելի է։

«Արակի օգնութեամբ, հանքերը հողային վիճակից հեշտութեամբ կարող են յեղափոխվել դէպ ի մեռալ, իսկ կերպարանափոխութիւնը, որ գործվումէ նոցա մէջ կրակի ազդեցութենից, է մի ապացոյց, թէ այդ մեռաները կարող են առաւել ևս կա-

տարելագործվիլ։ Ալքիմիկոսք կարծումեն, թէ կրակի միջնորդութեամբ, ամենախոշոր մետաղները կարելի է յեղափոխել դէպ ի լաւ, այսինքն դէպ ի ոսկի։»

«Այս հանճարօտ ծանօթաբանութիւնը քաղված է վերոյիշեալ գլուխգործից այն դիտաւորութեամբ, որ հասկացող մարդիկ ծաղր չառնեն մեր գիտութիւնը։

«Մեղապարտ ծառայ Կրիստոսի Անթուխեանց.»

— Մեծ Աստուած, — բացագանչեց Պ. Մարկոսը, աւարտելով թղթի կարդալը, — այս ինչ բաներ են.... և զիտորհուրդս քո ո՛ դիտաց.... որպէս զի մեծ են գործք քո, տէր....

«Ըպա, Պ. Մարկոս, այսպիսի բաներ կան աշխարհի երեսին։»

— Հայց ասացէք խնդրեմ, — շարունակեց Պ. Մարկոսը, — եթէ Անթուխեանցը այդպէս սաստիկ պարապած է, ասել է թէ նա խնջոյքում էլ չէ կարող գտանվիլ։

«Ինչու համար. ես յոյս ունիմ, որ նա մինչև եղուց բանը աւարտած կը լինի։ Երեկի երեկոյին նկել էր իմ մօտ, որ աճուկս գնելու համար կէս մանէթ արծաթ խնդրէ։ Ես միջոցին ասայ ինձ, թէ փոքր է մնացել նպատակին հասանելու համար, որովհետև արդէն հօթանասուն հինգ փորձ կատարել է, իրեար հետ միաւորելով զանազան մետաղներ, զանազան չափերով. բոլոր փորձերը բաղկանումեն հօթանասուն և հօթն փորձից, ուրեմն մնացել էն երկու փորձ, որ անտարակոյս կը կատարէ այսօր, կամ եղուց առաւօտ և կը վերջացնէ բանը։ Վաժուարը հօթանասուն հինգ փորձն էր, որ կատարել է, երկու փորձը ի՛նչ բան է նորա համար։»

— Ինչու համար քեզանից խնդրումէր կէս մանէթ աճուկս գնելու համար, ի՛մէթ ինքը չունի՞ այդչափ կարողութիւն, — հարց արեց Պ. Մարկոսը։

«Նա մօտ երկու հազար մանէթ արծաթ ունէր, բայց այդ բոլորը զոհեց Ալքիմիային զանազան նիւթեր գնելով։ Այս վերջին երկք ամսումը զանազան ժամանակ ինձանից է ստանում հարկաւոր արծաթը. ես արդէն տուել եմ նորան մօտ իրր երկք հարիւր մանէթ. երեք հազար ևս կը հաւաստամ, ի՛նչ բան է այդ, մանա-

ւանդ այնպիսի մարդու համար, որ այսօր էգուց դառնալու էր աշխարհի հարստութեան տէր։»

— Ես տեսանում եմ որ դու մի ընկերութեան նման բան ունես նորա հետ։ Աստուած տայ, Աստուած տայ, ես ուրախ եմ, հարստացի՛ր եղբայր և դու, քո նման մարդը, խելացի, հասուն դատողութեամբ, անպակաս լինի մեր ազգից։։։։ բայց թէ գլուխ դայ ձեր բանը չասե՛ս, մի նոր խնջոյք այլևս կը կատարենք։

Ո՛նչ միտ, ի՛նչ տասը։։։։ խելօք, ես քո համար շամպայնից վանեա (բաղանիս) կը շինեմ, որ լուացվիս։ այն ժամանակ ի՛նչ բան է մեր համար արծաթը։ Նորան այն ժամանակ ծանր է դուրս տալ գրպանից, եթէ ձարել ես ձակատիդ դառն քրտինքով, եթէ նորան հաւաքելու համար կոտրել ես մէջքիդ օղը։ բայց եթէ ունէիր մի գիտութիւն, որ հրամայութեամբ պղնձին կամ երկաթին ոսկի փոխվել, և անշուշտ մետալը հնազանդվում էր քո իշխանական հրամանին, այն ժամանակ ի՛նչ յարդ ոսկուն կամ արծաթին։ Ծով ուրիշները որոնեն նորան Ուրալեան սարերում, Ուրալևսկայի և Պալիճոռնիայի մէջ, մեք Պանթուխեանցի քուրայից կը ստանանք նորան» — պատասխանեց Պ. Հ՚աքոբեանցը ինքնաբաւական կերպով։

Այս խօսքերից յետոյ, լսրեց նա ծխամանը թափաքով։ Պ. Պարկոսը ևս, հետևելով Պ. Հ՚աքարեանցի՝ օրինակին, սկսեց ծխել թուլքի թափաքը և, արձակելով ծուխի օղեր, որ շատ յաջողակութեամբ բայ էր թողում բերանից, թվում էր, թէ ընկնում մտածողութեան մէջ։ Մինչդեռ սոքա զբաղված էին, և ահա սենեկի դուռները բացվեցան յանկարծ և շեմքի վերայ երևեցաւ քիմը բերած մրուա մի մարդ։ Նորա հին սերտուկը շատ տեղ ծակոտված էր կրակի կայծերից, ձեռնոցը, գործ ունենալով միշտ ջերմ մետաղների հետ, կոշտացած էին բոլորովին և ձաքձքած, և այդ ձեղքուածքը, լցված լինելով ածուխի և այլ կեղտերի փոշիներով, կազմում էին զանազան ուղղութիւններով սև գծեր։

Նորա ալեխառն մազերը համարեա թէ դեղնած էին բոլորովին և այդ անկանոն գունափոխութիւնը մազերի, երևի թէ, պատճառված էր զանազան քիմիական շոգիների ազդեցութիւնից, որպիսի էին խլոռից բազկացած ազերի շոգիքը, որոնք մեծ ազ-

գեղմբթիւն ունին ներկանիւթի (pigmentum) վերայ։ Երեսի գծագրմբթիւնը բաւական անկանոն, խոր նեղս ընկած աչքերը, իւրեանց անսովոր փայլողմբթեամբ, հաստատուձքին նոյնա հոդու անհանգիստ բնաւորմբթիւնը։ Ձակատը ճաղատացած, ինչպէս թվումձ, ժիպակիդէն բաղադրմբթիւնների շոգիներից, քիթը մեծ, (թէև իւրաքանչիւր ոք մեզանից, որպէս հայ, տեղիք չունի գանգատելու քթի փոքրմբթեան վերայ) որի ծայրը բուի կտուցի նման կեռացած դէպ ի վերին շրթունքը, հանարեա թէ ծածկվումձր թաւ ընչացքի մէջ, որ նոյնպէս գեղնած էր։ Երեսը ընդհանրապէս գեղին, բայց այտերի վերին մասները մոյգ կարմիր։ Ձյդ կարմրմբթեան մասին այսպէս է մեր կարծիքը, թէ սիրտ է, որ այդ մարդը շատ կանգնած լինելր կրակի առաջև, որովհետև այդպիսիների երեսը մեծ մասնով յատկանումձ թշերի վերին մասների մոյգ կարմրմբթեամբ։ Ծարմանք չէ. երեսի այդ մասը զրկված լինելով մազերից, առաւել ենթարկվումձ ջերմռմբթեան ազդեցմբթեանը, որ գրգռելով կաշին, պատճառ է տալիս արիւնի աւելորդ հաւաքվելուն։ Արիւնը անգադար և սովորականից դուրս առատռմբթեամբ մտանելով այդ մազի նման երակների մէջ, լայնացնումձ նորանց, այս ընդլայնողմբթեանը ձեռնտու է լինում և ջերմռմբթիւնը. այս կերպով այդ երակները աւելի մեծ մակերեսոյթ ստանալով դուրս են փայլեցնում իւրեանց գոյնը երեսի վերայ։ Ինչ և իցէ. այդ պարոնը կր լինէր այսպէս 55 տարեկան։

— Խարով, բարով, Պ. Մանթռւխեանց. այս որ քամին փչէց քեզ մեր մօտ, այս լոպէիս խօսում էիր քո մասին։ Պ. Մարկոսը խնդրումձ էր ինձանից, որ իւր հետ միասին գայի քո մօտ, բայց ես խմնալով քո ժամանակի սակաւռմբթիւնը, հրաժարվեցայ, որովհետև անտարակոյս պիտի նեղռմբթիւն պատճառէի քեզ. խնդրում, հրամայեցէք նատեցէք, շատ ուրախ եմ։

«Խարով» — Մանթռւխեանցը, դառնալով դէպ ի Պ. Մարկոսը, և քարշելով մի աթոռ, նատաւ սեղանի մօտ։

— Ձշմարիտը պիտոյ է ասել, այսօր շատ վաստակած եմ....

«Ինչպէս վերջացաւ բանը, յայտնի, թէ անյաջող»։

Պ. Մանթռւխեանցը խօսքերով չպատասխանեց այս հարցմունքին, աչքով միայն ստորասարար նշանացի արեց, նորա

ինքնաբաւականութիւնը երևեցաւ և վէմքի ուրախ ցուցակու-թեան մէջ, որ համարեա թէ գոռանվումէր մի ջերմախտական — ցնցողական վիճակումմ։ Նա չէր կարող բառերով յայտնել իւր ուրախութիւնը և յաջողութիւնը, որովհետև երբորդ մարդ կար այն տեղ, որից թաքուն էր, գոնէ համարումէր թաքուն, այդ բանը։

— Չմարիտը պիտոյ է ասել, այսօր շատ վաստակած եմ, — կրկնեց Պ. Մանթուխանցը, — մի բաժակ արաղ արժէ որ խմեմ, ասումեն, թէ «Ծերից գաւազան է» երկար աշխատութենից յետոյ։

«Լսանայեցէք, անուշ արեցէք»։ Ասլս ասելով Պ. Հ. աքարեանցը լցրեց արաղը մի բաժակի մէջ և տուեց Մանթուխանցին։ Պ. Մանթուխանցը, բաժակը ձեռք առած չառած, կարդաց տակի գրերը....

— Ձկամիք ծխել, — հարց արեց Պ. Հ. աքարեանցը։

«Ի՛նչ է հարցանում այս մարդը. երկնքից ի՛նչ է թափվել երկրի վերայ, որ սա չէ ընդունել»։

Թաբաք ծխողները զարձան երկք հոգի. ծխով լցվել էր ամբողջ տունը, ծխողքը հազիւ հազ տեսանումէին միմեանց. Պ. Հ. աքարեանցի սենեակը դարձել էր մի մըքրատուն։ Մի քանի վայրկենից յետոյ, այս երկք մարդիկը, ամենայն ծանրութեամբ սկսեցին ընտրութիւն առնել մարդերի, որ հրաւիրելու էին իւրեանց ինջոյքին մասնակից լինելու համար։

Ժ.

— Ի՛նչ մարդիկ միտք ունիք հրաւիրել, — հարց արեց Մանթուխանցը։

«Ո՛հա, ցուցակը» — պատասխանեց Պ. Հ. աքարեանցը։

Մանթուխանցը վեր առաւ ցուցակը և հարևանցի նայելով նորա վերայ ասաց. — չէք հրաւիրելու այն մարդուն, որ նոր եկել է այս տեղ և որ ամենուրիք գոռանվումէ, ի՛նչպէս է նորա անունը....

«Ո՛ր մարդը, — կրկնեցին բարեկամքը միաբերան։

— Աստանայական մոռացկ եմ . . . . ա՜հ . . . . այնպէս է, այնպէս, կոմս Նմմանուէլ . . . .

«Ո՛ր սիրուն քո՞ղը ունի, — ասաց Պ. Մարկոսը։

Հ. աքարեանցը աչքերը չորս բացեց սիրուն քուէր անուն լսածի պէս։

— Ըյն նորա քոյրը չէ, — շարունակեց Մանթուխեանցը, — եթէ այն օրիորդի համար էք ասում, որ միշտ պատահում էր նորա անում. բայց այսքան պիտի իմանալ որ շատ օրիորդք մուտ և ել ունին նորա տան մէջ, և այդ օրիորդքը թատրոնախաղ աղջիկներ են մեծ մասնով։

Պ. Մարկոսը, որ, ինչպէս յայտնի է ընթերցողին, մի փոքր յառաջ խօսք էր տուել Պ. Հ. աքարեանցին, ոչինչ հարցուփնդիր անտես չառնել, ամենայն կերպ հնար գործ դնել նորա սիրական օրիորդը որոնելու համար, մեծ ախորժանքով լսեց թատրոնական աղջիկների կոմս Նմմանուէլի մօտ երթևեկութիւն ունենալու պատմութիւնը։ Նա, ինչպէս համարումէր ինքը իւրեան, որպէս բարակ քաղաքագէտ, մտքումը դրեց անպատճառ ծանօթանալ կոմսի հետ, որպէս զի յետոյ կարողանայ նորա միջնորդութեամբ ծանօթանալ և թատրոնական աղջիկների հետ։

«Նրեթէ արժան է հրաւիրելիք նորան էլ, — յաւելացրեց Պ. Հ. աքարեանցը, — ես ծանօթ չլինելով, չէի նշանակել»։

— Կը հրաւիրես, ծանօթ կը լինի կ'երթայ, — խոհրն պատասխանեց Պ. Մարկոսը։

«Ինչ բաներ էք խօսում. ես շատ ուրախ եմ, որ չկայ նորա անունը. և եթէ դուք հրաւիրելու միտք ունենայիք, ես անտարակոյս պիտի խորհուրդ տայի ձեզ հրաժարվիլ այդ մտքից, — ասաց Մանթուխեանցը։

— Ինչու՞ համար, եթէ ամենևքեան հրաւիրումեն նորան. — խօսեց Հ. աքարեանցը։

«Նորա համար . . . . պատասխանեց Մանթուխեանցը, — նորա համար . . . . մի խօսքով նորա համար, որ նա մի անտանելի մարդ է»։

— Ինչո՞վ, — հարց արեցին բարեկամքը.

«Ամենայն բանով . . . . նա խելագար է . . . . վկայ է Աստուած, խելագար է։ Հաւատացէք ինձ, մի մարդ չկայ, որին հաւանէր այդ պարոնը. նորա աչքումը ամենաքեան չիմաղ են, ամենաքեան օբսկուրանտ, ամենաքեան եղուխտ . . . . ինչ ասել է, Աստուած մի միայն կոմս Լամմնաուէլին է խելացի ստեղծել։ Հ՞աա բարի, թէ և այդպէս չէ, բայց ասենք, թէ խելացի է մի փոքր, բայց բնակվելով անխելների և տգէտների հետ, ո՞չ ապաքէն պարտական էր գոնէ պատշաճի ընդդէմ չներգործելով, ինքը և անխելանալ և չիմաղանալ։ Աստծը ասում է, եթէ մի քաղաքումը բնակվող մարդիկը միականի են, դու ևս, մոռանելով այդ քաղաքը, պարտական ես մի աչքդ հանել, որ հաւասարվիս ուրիշներին։ Բայց կոմս Լամմնաուէլ ասած մարդդ այնպէս չէ, ամբողջ քաղաքի, ամբողջ ազգի սովորութիւններին և հասկացողութեանը ընդդէմ պատերազմ է բացում. չէ խնայում ոչ ոքին, ամենի ձեռքատին զարկում, ասացէք այժմ, խելացի՞ մարդու դործ է այդ։ Խելացի մարդը յարդում ուրիշները և եթէ մի բարէկամանման համ հարուստ մարդ, որ յարդելի էր հասարակութեան աչքումն, ասէ թէ այսօր ամնի քառասուն և հինդն է, նա պիտոյ է համաձայնի, ով չդիտէ, որ ամնի քառասուն և հինդը չէ կարող լինել, բայց մէջ տեղում քաղաքավարութիւն կայ, մեր կարծիքով, այսպէս պարտական է ներգործել խելացի մարդը։ Կոմս Լամմնաուէլը ոչ թէ չէ ընթանում այսպէս, այլ իւր տարապայման համարձակախօսութեամբ ազգի պակասութիւնների վերայ, կամ ազգին յարգելի մարդկերի վերայ, թէև վաղուց մեռած էին նորա, զզուեցուցել է ժողովուրդը այնպէս, որ ոչ ոք չկամի լսել նորա խօսակցութիւնը։ Չէ, եղբայր, նա մեր ընկեր մարդ չէ, հեռի ձանք այդպիսիներից, որոնք մարդ խայտառակելը շինել են իւրեանց կեանքի և դոյութեան խորհուրդ։

Այս խօսքերը սաստիկ տպաւորութիւն գործեցին Պ. Մարկոսի վերայ և, վշտանալով նորա անճնասիրութիւնը, որովհետև նորան ևս հաւանելու չէր կոմս Լամմնաուէլը, թշնամական ուղղութիւն տուեցին դէպ ի սա։ Օ՜, արմանք բան է. շատ անգամ պատահում է, որ մեզանից իւրաքանչիւրը ստանում շատ անճանօթ և անտես թշնամիք. ես ոչինչ վնաս հասուցած չեմ Մարկոսին, բայց նիրակոսը անդործութենից ստիպուելով և իմ անձնասէրութիւնը իւր դատարկաբանութեան համար նեխե շինելով

կամ, ասելի լաւ ասել, կերակուր տալով բամբասանքի և նախանձու օձին, որ վաղուց նստել է նորա փորի մէջ, վատաբանումէ ինձ: Պարկոսը, որ չէ ճանաչում ինձ, որ չգիտէ իմ դործելը, իմ սիրտը, իմ հոգին և ուղղութիւնը, որին մի մազի չափ պատս չեմ տուել, որի հետ ոչինչ ունիմ հասարակաց, դատումէ իմ թշնամին, ինձ բամբասող և վատաբանող: Մի՛թէ կարելի՛ է այս, ո՛չ ապաքէն Պարկոսը և Կիրակոսը քրիստոնեայք են: Եւ ի՛նչպէս քրիստոնեայք. ուրբաթի, չորեքշաբաթի, և շաբաթական պահքերը, այլև մեծ պահքը պահումեն ամբողջ, երեկոյ առաւօտ եկեղեցի են դնում, տարին մի քանի անգամ պատարագ և մատաղ են առնում, և եթէ տեղը գայ, ես լ՚ուսաւորչական եմ. դա Աւետարանական է, ասելով, պատրաստ են միմեանց դլուխ ջարդել: Բայց չնայելով այս բաներին վերայ Պարկոսը և Կիրակոսը չեն խղճահարվում կատարել մի բարոյական սպանութիւն, և այս բանը գործվումէ այն քրիստոնէութեան և բարեպաշտութեան դիմակների տակ: Քրիստոնէութիւնը, չարաչար գործ դրված, միշտ պատճառ է եղել անքրիստոնեայ բարբարոսութիւնների. քրիստոնէութիւնը, այդպիսի երկնային և սուրբ բանը, շատ անպիտան և անարժան մարդկերի ձեռքում եղել է դատաստանութեան և արիւնհեղութեան գործիք: Հատ անբարիշտ մարդիկ իւրեանց յանցանքը ծածկել են քրիստոնէութեան վարագոյրի տակ:

Պ. Հաբարեանցը, լսելով Անթուխեանցի կարծիքը կոմն Լմմնոնութեան մասին, որպէս թէ մարդ իսկոյն հատանայ նելով պատասխանեց. «եթէ մի այդպիսի մարդ է կոմն Լմմնոնութիւնը, եղբայր, ապա նզովեալ լինի դուռա ծնունդը. ինչ հարկաւոր է մեզ հրաւիրել մի այդպիսի գազան մեր ազգասէր և եղբայրասէր ընկերութեան մէջ:»

— Մի բան ասեմ. մանաւանդ նորան պիտոյ է հրաւիրել, որովհետև այդպիսի բնաւորութեան տէր մարդ էր, — ջերմ խօսեց Պ. Պարկոսը:

«Այդ ինչ խորհրդով, — հարց արեցին բարեկամքը:

— Որ տեղում կարելի է խայտառակել մի այդպիսի մարդ, եթէ ոչ մի ինջոյքի մէջ, մանաւանդ եթէ այդ ինջոյքի հրաւիրված անդամքը բոլոր մեր մարդիկ էին, — ասաց Պ. Պարկոսը:

«Ո՛նչ մի խայտառակութիւն է. մեր նորան հլուիրելը այդչն մի մեծ պատիւ էր, որ ցոյց էինք տալիս, — շարունակեցին բարեկամքը:

— Ախալմո՛ւնք. մեք կը հարբեցնենք նորան և յետոյ կը ծեծաղինք նորա վերայ: Ընդհակի մարդիկ, որ չեմնած ժամանակ այդպիսի թունաւոր լեզու ունին, որ վա՜ տեղը-ընկած տէր են, հարբելով գառնուածն մի թրջած հաւ, և այնուհետև մեր ձեռքումն էր նա, կարող ենք ամենայն տեսակ լրբութիւն առնել: — յառաջ տարաւ իւր խօսքը Պ. Մարկոսը:

«Պիտոի, որ նա հարբելու էր և դու զգաստ մնալու, որ կարողանայիր քո դիտաւորութիւնդ իրագործել. նա մի ջիլ մարդ է, գուցէ քեզանից շատ խմէ, — ասաց Մանթուխեանցը:

— Նշանա՛լ, դու վշտացնում ես ինձ. նա ի՞նչ մարդ է, որ ինձանից շատ խմէ: Ես մինչև այժմ կարծում էի, թէ դու փոքր ի շատէ ճանաչում էիր ինձ, փոքր ի շատէ յարդում էիր ինձ, բայց այժմ հասկացայ, որ ես մարդ չեմ պատիւ չեմ ունեցել քո մօտ: Մի՛ թէ խաղ է, կամ կատակ է իմ հետ խմել. ես նորան այն օրը ձգեմ, որ շունը ձեռքից հաց չառնու, — պատասխանեց Պ. Մարկոսը մի փոքր վիրաւորված Մանթուխեանցի երկբայութիւնից, որ ցոյց էր տուել իւր խմելու վերայ, — եթէ դուք հրաւիրելը յանձն առնուք, խայտառակելը իմ վիզը, կամ՛ք, դաշն բռնենք մի վեղարս ալաղով:»

«Դուք ինձանից խորհուրդ հարցրեցիք, — ասեց Մանթուխեանցը, — ես յայտնեցի ձեզ իմ սրտի վկայութիւնը, որպէս անկեղծ բարեկամ, թէ արժան էր, որքան կարելի է, հեռի մնալ կռուն կամ վէճ առնելէ ասած մարդուց. բայց եթէ ձեր միտքը հրաւիրել է, հրաւիրեցէք, ինձ մի մասնաւոր վնաս չունի. շատ շատ, միւս օր պիտի մի ուսանաւոր գրէ, կամ իւր յիշատակարանին գրէ իմ պատուասիրութիւնը, անձնասիրութիւնը, ինչպէս սովոր է, թող ինչ կամի առնէ, գլուխը քարը...

— Վորչի դնայ.... մեզ հարկաւոր չէ. նորա խուճուկ ու մամը պէտք չէ, միայն թէ մեր եկեղեցին թող չդայ: Ես տեսանել չիամիմ մի այդպիսի ինքնահաւան մարդ, որ ոդջի վերայ ծիծաղուսէր, — պատասխանեց Շաքարեանցը:

«Այս ի՛նչպէս էր ծիծաղում, հրապարակով .... նզովեալը — լեզուն չինել է օձի լեզու, մի աման արիւն գլխին դրած մանե է գալիս, սուրա կամ նորա վերայ թափելու համար, — կցորդեց շուտով Մանթուխեանցը :

— Ինչպէս հաճոյ է ձեզ, — խաղաղ սրտով ասաց Պ. Մարկոսը, ես շատ դիտաւորութիւնք ունէի .... Հիմա խօսքերը սահուլ ժամանակ մի այնպիսի հայեացք ձգեց Պ. Շաբարեանցի վերայ, որ սա հասկացաւ, թէ Պ. Մարկոսի խորհուրդը, ծանօթանալու կոմս Լամմանուէլի հետ, է ծանօթանալ նորա սիրուն բարեկամ օրիորդների հետ: — Ես կամի մեր լանջոյքի մէջ խայտառակել նորան, — շարունակեց Պ. Մարկոսը, — ես այնպիսի բաներ հայտնեմ, որ բաց ձեռը նորա բերանը, զոր օրինակ, «Ո՞ւր ի՛ր լեբրինն այլակերպեալ ցուցեր դքո զօրութիւնդ»ի՞նչ ասել է, թող մի մեկնէը ինձ: Նա միանգամայն պիտոյ է խայտառակվէը անպատասխանի ձեռով :

«Ինչպէս չէ, կը պատասխանէ քեզ . Հղբայր, նա քո ասած մարդերից չէ և ոչ միայն քո ասած, այլ նա մարդ չէ ընդհանրապէս: Դու կարծուածես, թէ նա կը խօսի քո հետ, երեսը շուրջ կը տայ և կը հեռանայ, մանաւանդ եթէ մի այդպիսի խնդիր առաջարկես . Թող այդ խնդիրը լինէր խելացի և օգտիկական, բայց այդ բոլորը անուանելու է խելագարութիւն և յիմարութիւն: Նա, որ խօսումեմ այս բաները, փորձով գիտեմ: Մի անգամ բնական գիտութիւնից մի բան հարցրեցի, թէև քաջ գիտէի, որ չգիտէր նա այդ բանը և գիտել էլ չէր կարող, որովհետև ոչ մի դպրոցի մէջ չէն ուսուցանում, բայց նա փոխանակ խոստովանելու իւր տգիտութիւնը, հրապարակով ծիծաղեցաւ իմ վերայ: Նա ասաց, թէ իմ առարկան միջնի դարերում ահա խելքից հանել էր Եւրոպայում մի քանի թեւթեւահատ մարդիկ, և թէ նոր այժմ մի չար բաղդով եօթն ուրեն դարերից յետոյ հասել էր Հայերին:»

— Շար բաղդով . ուրեմն չկամի այդ մարդը, որ մեր ազգը ստանայ եւրոպական լուսաւորութիւն, — հարց տրեց Պ. Մարկոսը :

«Աստանան գիտէ նորա խորհուրդը . ով գիտէ թէ ինչ օձեր նստած կան նորա փորում: Նա ասում թէ պիտոյ է հետևել

Եւրոպական այժմեան լուսաւորութիւնն, և ոչ այն լուսաւորութիւն ասված խաւարին, որով պատած էր Եւրոպան միջին դարերում: Չէ իմանում, որ ամենայն հին բան լաւ է, չէ իմանում, որ մի ժանգոտ զրամ լաւ է քան թէ նորը և փայլունը, ինչպէս ամենայն առողջամտութեամբ հաստատեց Մեղու Հայաստանի անունով լրագիրը, որ դուրս է տալիս Թիֆլիզում մեր գիտնական, լուսաւոր, եւրոպացի, և մեծաքանքար Մանդինեանց տէր ստեփանը: Չկամի լսել և հասկանալ, թէ ինչ որ հնումը կայ, այժմ չկայ· ինչ եւևելի փիլիսոփաներ եղած են Յունաց մէջ, ի՛նչ ճարտասաններ Հռոմայեցոց մէջ· նա ասում է, թէ այդ փիլիսոփայքը իւրեանց դիտութեամբ, այժմեան ժամանակումն կարող են միայն աշակերտ լինել եւրոպական դպրոցներին, — պատասխանեց Մանթուխեանցը:

— Ինչպէս է ապա նորա կարծիքը գուշակողների մասին, կամ նոցա գործած գերբնական գործերի մասին, — շարունակեց Պ. Մարկոսը:

«Յատկապէս խօսեցի այդ մասին: Ասում է, թէ այդ իմաստունքը ոչ այլ ինչ էին, եթէ ոչ կրթված մարդիկ, իւրեանց հայեացքով աւելի վերհամբարձ քան թէ խաժամուժ ամբոխը: Նոքա, այն ժամանակի հայեացքով, լաւ ուսած լինելով աղգերի ներկայ դրութիւնքը, նոցա հիման վերայ գուշակութեանն նոցա համար գալոց օրերը: Եւևելեան ազգերը, շատ անձնատուր եղած լինելով երևակայութեան և ֆանտաստիկական պատկերների, առաւել շուտով ընդունում էին մի ձշմարտութիւն, եթէ բնական պատճառներից յառաջացած գործողութիւնը կամ բնական կերպով կատարվելու իրողութիւնը մեկնվէր նոցա գերբնական կերպով, կամ դրվէր ֆանտաստիկական շրջանակի մէջ: Նա ասում է, թէ այժմեան եւևելի պատմաբանների և քաղաքագէտ մարդերի գուշակութիւնքը աւելի ձշդութեամբ կատարվում են, բայց ոչ մինը այդ լուսաւոր մարդերից պահանջողութիւն չունի գուշակողական պատուանուն ստանալու: Հրաշքների մասին ասում է, թէ անհասկ, ընթ, ընացող և ըստ ապրելց պիտի նշան կը խնդրէ· պատճառ, ինքը խելք չունենալով հասկանալ որ և իցէ ձշմարտութիւն, այլև հաւատ և գիտակցութիւն չունենալով պահանջում է, որ ձշմարտութիւն խօսողը մի գերբնական զօրութիւն ցոյց տայ իւրեանից, որպէս զի տեսանելով նորա կարողութիւնը

հեռաւոր կշեռ տայ նորա ստացնելին կամ ընդունէ։ Ու հասարակ ստրկութեան մէջ գոյացած և ստրկութեան ատմոսֆերայի մէջ աճած մարդը բաց ի իւր վրէ լուծից և բռնաւորի դաւաղանից ուրիշ բան տեսած չլինելով, մի մարդու պատահելու ժամանակ, երբէք չէ մտածում, որ այդ մարդը ևս իւր նման Աստուծոյ ստեղծած էր, այլ իսկոյն ծնուցանում է իւր և այդ մարդու մէջ մի թուաբանական յարաբերութիւն, և պատրաստ է ստրկանալ նորան, եթէ նա կարողանայ մի զօրութիւն ցոյց տալ նա չունի մի ամենիւ զգացողութիւն անձնական պատուի մասին. պատճառ, մինչև անձնական պատիւը և անձնասիրութիւնը չվերանան, ստրկութիւնը չէ ծնանում։

«Այս հարց արեց ինձանից, թէ փոքր բաներ կան բնութեան օրէնքների վերայ յառաջացող, որ ազէտ և խաժամուժ ամբոխը ամենայն միամտութեամբ պատրաստ է ընդունել մի գերբնական բանի տեղ։ Ո՛նչ կ՚ասեն այժմ Ընկերիկայի կամ Ամերիկայի վայրենիքը, եթէ տեսանեն, որ շոգեշարժ կառքը, առանց մի պրատի կամ թէ մարդու օգնութեան, որ մինչև այժմ ձանապէլ էին աղեխիւր յառաջ շարժողութեան մի տեղից դէպ ի մի այլ տեղ, վազում անհատատալի արագութեամբ մի օրվայ մէջ կատարելով հարիւրատոր մղոններ. կամ թէ տեսանեն, որ մի աշխարհից դէպ ի միւսը խօսումեն երկու րոպէում, ելեքտրամագնիսական հեռագրով։ Եթէ մի խաբեբայ մարդ, կամենար օգուտ քաղել այդ ազգերի կուրութենից, հրաշքի տեղ չէ՞ պիտոյ կարողանալ ընդունել տալ այս բաները, որ կատարվումէին բնութեան օրէնքներով։»

— Ո՛նչ անդգամ մարդ է դա, ի՛նչ չար լեզու ունի. Աստուած ազատէ, — ասաց Հ. աբբահանդը։

«Ո՛ր անդգամը խելացնոր չէ. եթէ մի մարդ նորա ստացնելին նայելու լինի, անտարակոյս սարսուռ մէջ տասն անգամ զատիկ կը կատարէ։ Իմ կարծիքը այս է, որ ինչքան կարելի է պիտոյ է հեռի մնալ դորանից. բայց այս մի լոկ կարծիք է իմ կողմից, դուք ազատ էք անօրինել ինչպէս կամիք, պատասխանեց Մանթուախեանդը։

Պ. Հ. աբբահանդը, որպէս տանուտէր, նախագահ հանդիսացաւ խորհրդածու ընկերութեան և բոլորովին բացատրեալ

վճռից, որ կոմս Լամմենուէլը, այդ հասարակաց խաղաղութեան վըղովիչը, հրաւիրվի, այլ միայն միացած միւսերով, որ դրված էին ցուցակի մէջ, կառավրի իւրեանց կնջոյքը:

Պ. Մարկոսը խնդրեց յառկացնել կնջոյքի օրը. նորան պատասխանեց Հաքարեանցը թէ լինելու է մայիսի 20 ին:

Պ. Մարկոսը, միաս բարեաւ ասելով, դուրս գնաց Հաքարեանցի տանից, թողնելով այն տեղ երկու բարեկամքը:

Ը.

Պ. Մարկոսը դուրս եկած չեկած Հաքարեանցի տանից, Մանթուխեանցը, որ մինչև այս րոպէս մեծ բռնութիւն գործ դնելով իւր վերայ, վարագուրել էր իւր ուրախութիւնը, վեր թռաւ տեղից, և երկու ձեռքով փաթաթվելով Հաքարեանցի վզին, փոքր միաց, որ իւր ախորժ քնքշութեամբ խեղդէր սորան:

Մի օտարոտի տեսարան էր: Հաքարեանցը ամենևին ոչինչ տեղեկութիւն չունէր այս տարօրինակ ուրախութեան մասին, որ այսպէս բարբարոսաբար դուրս էր երևում Մանթուխեանցից այս պատճառով, ամենայն տառնութեամբ յանձն էր առնում Մանթուխեանցի կոպիտ քնքշութիւնքը: Դորա փոխանակ, Մանթուխեանցը հատած լինելով վերջապէս իւր այսքան տարիներով յղացած ցանկութեանը, խելքը թողնում ուրախութենից: Երկու բարեկամքը ևս բաւական ժամանակ միացին առանց խօսելու: Ընդ միջոցին, նորա միաք հանկարծող միջնորդը չէր ստուգաճեղէն խօսքը և բանականութիւնը, այլ մի տեսակ կատաղի ցնցողական շարժողութիւն: Երէկ մի օտար մարդ նկատէր հեռուից այս տեսարանը, անտարակոյս, կարծելու էր թէ մարդիկ չէին սոքա, այլ վայրենի արջեր, որ թաւալվում էին սոցիայի վերայ, թէպէտ միևնոյն նորանից կարծումեր իւր անձը երևելի դիւթ (чародѣй կախարդ), իսկ միւսը երևելի ալքիմիկոս:

Երբ բաւական զօրութիւն գործ դնելով երկուքը ևս ուժաթափվեցան, Մանթուխեանցը, ուրախական արտասուք աչքերում և հեկեկանքից ընդհատված ձայնով, ասացակից — ասկին ծոցում է....

Հ՚աքարեանցի ականջին շատ քաղցր եկաւ ոսկու ձայնը, վասն որոյ վերջին անգամ համբուրելով Մանթուխեանցի երեսը, շնորհաւորեց նորա յաւաջադիմութիւնը, որ իւրեանց պայմանի զօրութեամբ, պիտի մեծ ազդեցութիւն ունենար և Հ՚աքարեանցի կեանքի վերայ։

Երկու բարեկամքը եւս մի փոքր հանգարտելով նստան աթոռների վերայ, Հ՚աքարեանցը լցրեց արաղը բաժակների մէջ։ Մեծ սիրով բաժակները միմեանց զարկելուց յետոյ խմեցին։ Բայց Մանթուխեանցը արաղի վերջին ումպը կուլ չտուաճ, սկսեց պատմել, թէ ինչ կերպով վերջապէս յաջողել էր իւր խորհրդական խառնուրդից ստանալ անարատ ոսկի։

— Վ՚երջին փորձն էր մնացել, — ասաց Մանթուխեանցը, մի կողո հայ բերանը դնելով, — և ձշմարիտը պիտոյ է ասել փոքր մնաց, որ մեղանչէի այս սուրբ դիտութեան ընդդէմ. Աօթմանասուն վից զուր փորձերը դըզրել էին իմ յոյսի և հաւատի հաստատութիւնը, և այդ վերջին փորձը եթէ զուր դնար նոյնպէս, պիտոյ է դըզրէր ինձ յուսահատութեան ծովը։ Բայց Աստուած ողորմեցաւ երեսս ջրին։ Վ՚առելի կրակը, շարելի քուրայի մէջ զանազան մետաղներով լցած հոդերէն ամանները և սկսեցի փուքսի գործադրութեամբ զօրացնել կրակը, որով և բարձրացնել ջերմութեան աստիճանը, որ անպատճառ հարկաւոր էր դժուարահալ մետաղները հալեցնելու համար։ Խաւսկան չէր միայն նորա հալվիլը, այլ և հարկաւոր էր որ եռ գայիս. այս պատճառով Թողեցի այդ սաստիկ կրակի մէջ իմ պատրաստութիւնքը, դուրս գնացի արուեստանոցիս մի փոքր մինպէղ բերելու, մետաղների հետ խառնելու համար։ Բայց երբ վերադարձայ դէպ ի արուեստանոցս, չես կարող երեւակայել, թէ ինչ աստիճանի հաւատ իմ կատարելութիւնը։ Հոդերէն ամանները ոչը ճաքվել էին և ոչը բոլորովին փշրվել, այնպէս, որ ոչինչ նիւթ միացած չէր նորա մէջ։ Երկաթի գաւազանով խառնելով քուրան, հասկացայ, որ հալած էին մետաղները կրակի տակ քուրայի մէջ, որ նախատեսութեամբ յատաջուց պատել էի բարակ մոդած մոխրով։ Հետացուցի կրակը։ Հալած մետաղները, որ խառնվելով միմեանց հետ կազմուէին մի փոքրիկ ձման, և որի երեսի վերայ սերի պէս կանգնել էր կապտադոյն կեղևը, պրաւեցին իմ ուշադրութիւնը։

կանաչ ու կապտագոյն — բայց կտրմիր բարձրանալէն նորանից։ Ամբոխ կոտրած էր բոլորովին, որովհետև համարումէի թէ գուր է գնացել աշխատութիւնս, քան որում մինդէղը պահաս էր։ Վ՚երջապէս սառեցաւ խառնուրդը և կարելի եղաւ քննել նորան.... Ո՛վ բարդիս, գործողութիւնը յաջողվել էր այնպէս, որ առաւել լաւ չէր կարելի ցանկանալ....»

Ա՚յս խօսքերը խօսելով, Մանթուխեանցը հանեց կեղտոտ և հնոտի սերտուկի ծոցից մի սևագոյն գեղին մեռալի կտոր և պրեց սեղանի վերայ։ Նայց նորա սիրտը և հոգին այնպէս ջերմացած էին այդ մեռալի վերայ, որ իսկոյն յարձակեց գարձեալ սեղանից և բռնելով ձեռքում գնտումէր, չտալով Հ՚ափսոսանցի ձեռքը։

— Լ՚աւ է, լաւ, թող ես էս տեսանեմ — ասաց Հ՚ափսոսանցը — դու տեսել ես և գարձեալ կը տեսանես։ Նայ ի դրանից, քո համար մի զարմանալի բան չէ, ոչ ապաքէն դու ես դորա արարիչը, ոչ ապաքէն էդուց փուշերով կպող ես ստանալ. թող մի լաւ գնեմ դորան։

«Որովհետև իմ աշխատութեան վաստակն է դա, այդ պատճառով էս ինձ աւելի քաղցր է նայել դորա վերայ, քան թէ մի այլ մարդու։ Մի՞թէ չգիտես, որ ծնողին աւելի քաղցր է իւր զաւակը, քան թէ մի օտարին։ Գիտես, թէ ինչքան քրտինք եմ թափել ես, մինչև հասել եմ դորան»։

Մանթուխեանցը այս խօսքերը ասելով տուեց մեռալը Հ՚ափսոսանցին, բայց աչքի հայեացքով, ասես թէ, հետևից լափումէր այդ մեռալի կտորը։

Հ՚ափսոսանցը, սեղանաւորի աչքով քննելով մեռալը, խոստովանեց նոյնպէս, թէ ոսկի էր այն, — բայց մի բանի վերայ շատ զարմանումեմ, ասաց նա, — ի՛նչպէս է, որ առանց մինդէղի ստացվել է։ Ո՞չ ապաքէն ուրիշ անգամ, սոյն իսկ նիւթերով որ այժմ բաղկացնումեն այս մեռալը, փորձ արել էիր, ինչո՞ւ ապա այն ժամանակ չյաջողվեցաւ ու այժմ այսպէս....

«Ի՛նչ, ինչ առնենք, եթէ փորձը չյաջողվեցաւ այն ժամանակ, մի՛ թէ դատապարտվեցա՞ն այդ նիւթերը, երբէք չյաջողվելու։ Դու փոխանակ ուրախանալու, սրամոլես....» ասաց Մանթուխեանցը տհաճութեամբ։

— Ձեմ տրամուա՛, — բացագանչեց Հ. Ալբարեանցը, — միայն....

«Գուցէ կասկածուաձես, կամ երկբայութիւն ունիս այդ մեատալի արդարև ոսկի լինելու մասին. եթէ կամիս, տար ոսկերիչների մօտ, նոքա կը վկայեն քեզ, որ սուռզատէս ոսկի էր»:

— Ոսկի եղածը ոսկի է, խօսք չկայ....

«Ուրեմն ինչ: Այդ պրծած բան է. այժմ ցնծանք և ուրախանանք: Ծող պարծենայ Ընգլիան իւր հարստութեամբ, Թող և Ուրալեան սառցագլուխ սարերը ուռչին իւրեանց մէջ, թէ ոսկու մայր էին: Կեցցէ գիտութիւն, կեցցէ աշխատութիւն: Ասացի, այս վերջացած բան է, այժմ մոռանանք խնջոյքի վերայ»:

— Խնջոյքի վերայ ի՛նչ մոռանալու բան կայ, այնպէս խնջոյք կարելի է առնել, որ աշխարհը զարմանայ: Հ. ամպայն ասածդ հեղհեղն պէս կը թափուի, կը բանայ քսակիս բերանը, Թող մեր Սարգիսը դիմանայ միայն խցանը բանալով. բայց բանը այդ չէ, մեք ուրիշ մոռանալիք ունինք:

«Օրհնած, մոռանալուց գլուխներս ձաքեցաւ, փոքր մնաց, որ գլխիս ուղեղը հոսի, Թող մի փոքր հանգստանանք, ուրախանանք»:

— Բայց լսի՛ր, իմ ասած մոռանալիքը զուարճալի բաներ են, և կարծեմ, որ դու ևս հետի չմնաս այդ բաներից. անտարակոյս քո յօժարութիւնը ևս հարկաւոր է, այս տեղ ևս համարեա թէ ոչինչ եմ:

«Ո՛նչ բաներ են ասա», հարց արեց Պանթուխեանցը:

— Ոսկին, որ առաջին անգամ այդքան փոքր շինուցիր, երկրորդ անգամը շատ պիտի շինես, այնպէս չէ՞:

«Ընտարակոյս. այս մի փորձ էր, և ես հաւատի չէինելով յաջողութեան մասին, խնայաբար դրծ էի գնում միշտ նիւթերը, որ թէև թեթևագին բաներ են, այնու ամենայնիւ իմ պէս մարդու համար, ինչպէս էի մինչև ներկայ րոպէս, այդ փոքրը ևս բան արժէր: Ձեզ քաջ յայտնի է, որ քանի քանի անգամ ընկեր արծաթիներ խնդրած իմ քեզանից ածուխ գնելու համար: Այժմ որ Ստուած ամենակարողը յաջողութիւն տուեց ինձ, ես պատրաստութիւն կը տեսանեմ դեռ յառաջ մի փուդ պատ-

բաստելու. յետոյ գարձեալ կը շատացնեմ, այժմ չէ կարելի ըստ ոյնմ անօթենալս փոքր են, հարկաւոր է անօթենալ և գործիք բերել տալ օտար աշխարհներից»:

— Հա՛ստ լաւ, եթէ մի մի փուդ ևս պատրաստելու լինիս, այնու ամենայնիւ կարճ միջոցում մեծ հարստութիւն կարելի է դիզել:

«Դիւրութիւն չունիմ այդ մասին»:

— Այդքան հարստութեան տէր դառնալուց յետոյ, ասելիքս այս էր թէ ի՛նչ պիտոյ է առնենք ազգի համար:

«Ասրեմն քո առաջարկած մտածելի բաները ազգի՞ն են վերաբերվում»:

— Այո:

«Այդ ուրիշ բան է. ես այդ խնդրի մասին պատրաստ եմ օրերով խօսել, սիրական Հ՛աբաթեանց, և բացայայտ կերպով հասկացնել քեզ իմ տեսութիւնս, թէ ի՛նչ էր մի Հայի պարտականութիւնը, իւր ազգի առաջև»:

— Դու մի դիտուն մարդ ես, մի գուցէ սկսանես այժմ խոր փիլիսոփայութիւններ, իմ գլուխս դուրս չէ գալիս այդպիսի բաներից. հասարակ կերպով հասկացրու ինձ և յայտնիր քո դիտաւորութիւնը: Իմ կարծիքը այս է, որ շատ ոսկի շինելուց յետոյ, վաճառենք նորան և գոյացնենք մի մեծ արծաթագլուխ, որ և դնելով մի շահաւէտ գանձարանի մէջ, կարօղանանք մի հոյակապ գպրոց բանալ և այդ դուռարի տարեկան շահովը կրթել ազգի խելօք ողջմիտ զաւակները, որոնց մասին այսքան աղաղակում են օրագիրքը և հեղինակները:

«Ո՛վ սէր Աստուծոյ ձեռք վեր առէք այդպիսի խորհրդից. եթէ կամիս, որ պատճառ լինինք ազգի կործանութեանը, ապա բանանք այդ գպրոցը»:

— Ո՛նչ ես խօսում:

«Ո՛նչ սիտի խօսեմ որ գպրոցի աշակերտը տեսար, որ ազգը սիրէր ու նորա օգուտը պաշտէր: Ամենայն ոք, որ փոքր ի շատէ ուսումն է ստանում, մոռանում իւր ազգը, իւր հաւատն ու օրէնքը, ոչ պահք է խմանում, ոչ մատաղը, ոչ քաւութիւն, ոչ թողութիւն: Եթէ մի փոքր մեղադրես այդպիսուն նորա սխալ-

նելի պատճառով կը տեսանես ահա, որ յիմար Ֆանատիկոս առնուն կը բևեռէ ձակատիդ։ Մի ազդը ինչպէս որ Աստուածոյ (մատաղ գնամ նորա զօրութեանը) ստացել է իւր կրօնը, ինչպէս պաշտուածն Աստուածոյ լոյս հաւատը, պէտք է աշխատինք, որ այդ հաւատը ամուր և անխախտ պահպանվի, մեզ հարկաւոր է ոչ թէ հաւատի թշնամիք յաւելացնել, այլ հաւատի պաշտպանք և պատուպատիղք։ Արժատուն ասած բանդ, ճշմարիտ է, ուսուցանուածդ մարդու զանազան լեզուք, զանազան պրօֆէսիաներ, բայց եթէ առողջ բանականութեամբ քննինք, այդ բոլորը հոգու փրկութեան պատճառ չէ կարող լինել, այլ մանաւանդ կորստի։ Ինչ ունինք, սիրելի, այս աշխարհիս մէջ, ինչ պիտի տանինք այս տեղից. մի չոր հոգի ունինք, պէտք է աշխատել որ դժոխքի բաժին չլինի մեր խեղճ հոգին։ Ուսում ստացողը նոյնպէս պիտի մեռանի՞ թէ ոչ, ուսում ստացողն կանքը նոյնքա՞ն է որքան ազէտները թէ ոչ. ուրիմն ի՛նչ գործնական օգուտ ունի հոգին ուսումից. որ սուրբերը ուսեալ էին։ Արդարէքը հովիւ չէին, առաքեալքը ձկնորսք չէին։ Աստուած ողորմիր ինձ ասել չուսանողը, այլ, դորա փոխանակ, Աստուած, ես քեզ ողորմիմ ասողը չէր, որ ծովի վերայ ոտքով վազից դէպ ի նաւը, որով Աստուած ողորմի՛ր ինձ ապօթքը ուսուցանող վարդապետը գնում էր։ Եւ այս վարդապետը չէր որ տեսանելով այն ամիկ մարդու սրբութիւնը, որով, անտարակոյս, որպէս ցամաքի վերայ մեռն էր գալիս նա, ասաց թէ քեզ ոչինչ աւելի հարկաւոր չէ, երանի՞ թէ ես էս քո պէս անգէտ լինէի, բայց քո ապօթքի պէս իմ ապօթքը էս արժանրպուհակ լինէր։ Մի գլխաւոր պարտականութիւնն է, եկեղեցիք շինել, եղած եկեղեցիների պահպանները արծաթասպառել, քառանիցը անպակաս առնել, Աննջեցեալների վերնզմանը օրհնել տալ, մատաղը չմոռանալ և պահքը պահել. եթէ սորանից աւելի կամենանք, ընդունելի և աստուածահաճոյ բաներ դեռ էս շատ կան, ջրհոր փորել, ուռը ճանապհի աղջիկ լոյս ու արև հանել, ուռնի, գամկի, ազքանչելին հանգերձ բաժանել։ Ընտարակոյս այս բոլորը կ'ուռնինք մեք քո հետ. բայց ի սորանից հարկաւոր է, որ պրպտ ուզպիկնք Աստուածմէ, Աշու սուրբ Նարապետ և այլ այսպիսի ուխտաւորները, որ երկնքում են։ Ահա ինչ գեղեցիկ են այդ օրհնութեան գրիչի ոճը և շարադրութիւնը։ Ի սուրբ և Աստուածընկալ պատ-

նէ .... աստուածային օրհնութիւնն եկեալ հանդիցէ, ծաւալեսցի ի վերայ ձեր և համայն ձերայնոց .... և այսպիսի օրհնութեան դիր շատ անգամ կարելի է կէս մանկէթով ստանալ: Ինչ է մարդուս երջանկութիւնը սորանից աւելի. «Եայտ լեցի աստուածասիրութեանդ», կը շարունակէ օրհնութեան դիրը, «զի զոր առաքեալ էիք ձեռամբ (այս ինչ անձին) զմի թեթեւ վէրք, ընկալաք մեծաւ օրհնութեամբ և զանուն ձեր և համայն ննջեցելոց ձերոց զրեցաք առաջի սուրբ սեղանոյն յորոյ վերայ սուրբ պատարագն մատչի և այլն: Քանի որ այդ վանքերք կան, քանի որ անմահ պատարագը կը մատուցանվի այդ տեղերում, այդ արծաթը տուողի և նորա բոլոր ննջեցեալների անունը պիտի յիշատակվի: Երանի՛ մեզ, Հ՚աքարեանց, երանի — հազար երանի: Ծո՛ղ ուրիշները զըվիս կոտրին ուստում ստանալու, մեք քո հետ հոգիներիս պատրաստութիւնը տեսանենք: Հարկաւոր է մեր ձանրելու հարստութենից մասն և բաժին հանել Վ՚արագայ սուրբ նշանին, Վ՚անկոյ սուրբ նշանին, Ղեմամարայ սուրբ նշանին, Գուդարեցոյ սուրբ նշանին, Օթեանց սուրբ նշանին (1) և այլ միւս սուրբ նշաններին, որ զրված կան իմ մօտ դտանված զրչագիրների մէջ: Ես այս անպատճառ հարկաւոր է, որ այդ սուրբ նշանների բարեխօսութիւնը ևս անպակաս լինի մեր վերայից: Սուրբ նշանները անբաբառ բարեխօս են հաւատացեալներին, բայց ի պողանից, «մեք՝ի յայն փայան ևմք յուսացեալ, յոր Տէր Յիսուս բևեռեցաւ» ասում էր խաչի տաղը: Իմ կարծիքով ազգը եկեղեցին է, հոգևորքն են, մեք մանաւոր մարդիկ ենք, մեք մեր հոգու փրկութեան մասին մտածելուց աւելի ուրիշ պատրաստութիւն չունինք, իսկ ազգի բաները,եկեղեցու բաները թող հոգան, փառք Աստուծոյ, կաթողիկոս ունինք, Ի՚ւստաւորչի յաջորդը,

---

(1) Օթեաց Սուրբ նշան անուանվում այն խաչ քարը, որ ինչպես պատմվում Այսմաւուրքի մէջ, Թադէոս և Բարթողիմէոս Առաքեալքը միմեանց հանդիպելով Պարսկաստանի և Հայաստանի սահմաններին մօտ և մի տեղ օթևելով դիւերը առաւօտուն օձել էին այն քարը որպես յիշատակ իւրեանց միմեանց հանդիպելուն. այս պատճառով ևս ասվում Օթեաց սուրբ նշան: Մի թերանցի աւանդութիւն, որ հասել է ինձ Ծերունի մարդերից, ասում էր նոր-Նախիջևան քաղաքի մօտ գտանված սուրբ խաչի անունով վանքը չինած է այդ սուրբ նշանի անունով, և թէ այն խաչի նշան ունեցող քարը, որ դրած է վանքի ձախակողմեան պատի մէջ, ուր կայ և Թադէոս Առաքելու պատկերը, է այն Օթեաց սուրբ նշանը: Բայց այս մի աւանդութիւն է. գրաւոր յիշատակարան գտանելու համար այդ մասին, իմ բոլոր հարցասիրութիւնս դուր է անցած մինչև այժմ:

պատրիարգներ, առաջնորդներ, վանքերը լի են վարդապետներով, քիչ նորա մնացեն այդ բաները, և մնացել են և մնացումեն եւս։ Դու ինչ ես կարծում, եթէ նորա չլինէին, մեր լոյս հաւատը կը պահպանվէր մինչև այժմ։ Աստուած կեանք տայ մեր հոգևորներին, Աստուած նոցա շուքը մեր վերայից անպակաս առնէ։»

Այսպէս էր Մանթուխեանցի քարոզը, որ կարգայ Հաքարեանցի գլխին։ Հաքարեանցը մի դիտնական մարդու տեղ դրած լինելով Մանթուխեանցին, խոկայն հնազանդեցաւ նորա ասածներին, մանաւանդ ինքը պարապելով դիւթական բաներով, մի փոքր կրկիսել եւս ուներ, որ մի՛ դուցէ Աստուած բարկանայ իւր վերայ, ուստի և յօժարակամ ընդունեց այն բոլոր առաջարկութիւնքը, որոնց խորհուրդը և նպատակը էր մօտ մնալ եկեղեցուն և հոգևորներին, որոնց միջնորդութեամբ կարող էր թողուլ Աստուած իւր դիւթութեամբ պարապելու մեղքը։

— Մենք այս բաների վերայ ուրիշ անգամ աւելի ընդարձակ կը խօսենք, — ասաց Մանթուխեանցը, ձեռքը պարզելով դէպ ի արտի շիշը։ Հաքարեանցը յառաջամասոյց դառնալեցաւ և խոկայն լցրեց բաժակները արաղով։ Այս րոպէից սկսած Մանթուխեանցի և Հաքարեանցի յարաբերութիւնը ամենևին այն չէր, ինչ որ քանի մի օր յառաջ։

Մանթուխեանցը, ասկին շինելուց յառաջ, գալիս էր Հաքարեանցի մօտ, որպէս իւրեանից առաւել մեծ մարդու մօտ, բայց որում, ինչպէս ասել ենք իւր տեղում, Հաքարեանցը ունէր մի փոքր կարողութիւն։ Այդ էլը գուցե ասկի շինելու գաղտնիքը, Հաքարեանցը սկսեց նայել Մանթուխեանցի վերայ նոյնպիսի մեծարական աչքով։ Եւ Մանթուխեանցը, որպէս մի ոգեշունչ մարդ, խոկայն սկսեց օգուտ քաղել իւր դիւթութիւնից, վոխանց իւր խօսակցութեան ոճը Հաքարեանցի հետ, և կրօնաւորական բնաւորութիւնը դէպ ի ներդործական։ Ճշմարիտը պիտոյ է ասել, Հաքարեանցը իւր ժամանակին այս աչքով նայած չէր Մանթուխեանցի վերայ։ Ինչ և իցէ։ Մենք թողունք առ ժամանակ սրանց այս տեղ, և տեղափոխվինք մեքով դէպ ի մի այլ ընկերութիւն։

(Շարունակութիւնը մեւս տետրակներում.)

ՆԵՐՍԷՍ ԼԱՄՊՐՈՆԱՑԻՈՒ

ԹՈՒՂԹԸ

ԴԷՊ Ի ՀԱՑՈՑ ԹԱԳԱՒՈՐ ԼԵՒՈՆԸ (1)։

Պատրաստ եղէք հեղուլեաւք պատասխանի տալ ամենայն մարդու որ հարցանուի ձեզ յոյսի մասին որ կայ ձեր մէջ — խրատուի մեզ Առաքեալների գլխաւորը, Պետրոս, և մեք Աստուծոյ շնորհովը, որ ղօրացուցել է մեզ խօսքի կարողուլեաւք, պատրաստ ենք պատասխան տալ նոցա, որ տգիտուլենից ու սնոտի համբաւներից դայլակղուին մեր լարի ընթացքովը։ Բայց նոքա որ նախանձուց ղայրացած, կամայաբար կուրացնուին իւրեանց մտքի աչքը, որ չտեսանին ճշմարտուլիւնը, դէպ ի այգպիսիքը խրատլուին Քրիստոսից լուռ կենալ և աղօթել որ տրվի դոցա լուսաւորուլիւն։ ըստ որում՝ անարժան էր տալ սրբուլիւնը շներին, կամ թէ մարգարիտը ձգել խոզերի առաջև, անարգելու և ոտնակոխ առնելու նորան։ Բայց և Պաւղոսը խրատուի, հերձուածող մարդուց, միանգամ կամ երկու անգամ խրատելուց յետոյ, հրաժարվիլ, գիտելով որ այնպիսին թիւրված (ծռված) է և մեղանչուի, չգիտէ թէ ինչ է խօսում և ի՛նչ բանի հետևից ընկել է։ Սորանից խրատված լինելով մեր չափաւորուլիւնը, անտես արեցինք այն խառնակ գրերը որոնց մէջ Ջորագետի վանքից կուտած են մեր վերայ զզպարտուլեան քարեր։ մեք ողորմեցանք նոցա անհանճարուլեանը, որ ոչ թէ հեռի են հոգևոր և անօսր գիտուլենից, և անկարող համեմատել հոգևորը հոգևորի հետ, այլև մարմնական իմաստուլենից անմասն են ցուցանուի նորանց իւրեանց գրուածները։ տխմար և անկարգ մարդիկ և

---

(1) Այս թուղթը գրած է Լամբրոնացին, իւր անձը արդարացնելու այն գրաւոր մեղադրուլենից, որով բամբասել էին նորան Ջորագետացիք և Հաղբատեցիք որպես թէ նա եկեղեցական արարողուլենների մէջ խոտորվել էր նախահարց շաւղից և հետևուի էր աւելի Ցունաց և Լատինացոց կարգերին։

յիմար բաներ խօսողք որ և բուն տգէտքը կարող են ճանաչել նոցա այդպիսի յետսամտութենից։ Մեք հանդերեցինք նոցա շատախօսութեանը իբրև երկայնամիտ մարդ, և շատ խորհրդներով։ մեք չունէինք նոցա հետ հարցուփորձ և ոչ ծանօթութիւն, և նոցա անդուռն բերաններից նախատվելով, ուրախացանք, մանն յուսալով այն երանութենից որ աւետարանումն Քրիստոս ասելով։ «Երանի է ձեզ, երբ որ նախատումէին ձեզ և ստութեամբ ասումէին ձեր մասին մի չար բան, իմ պատճառով։ ցնծայէ՛ք և ուրախ եղէք, որովհետև ձեր վարձքը շատ են երկնքումը։»

Որանից յետոյ չենք մեք և ոչ Ձեր աստուածպաշտութիւնը ձանձրացուցած, և ոչ ևս մեր ճշմարտութեան համար, որին տեղեակ էք յայտարարութեամբ ևս, վրէժխնդրութիւն ենք պահանջած Ձեր աստուածաղօր կարողութենից։ նախ, որ բաղմահոգս էք Դուք, և երկրորդ, մեք հետևելով քրիստոսական պատուիրանին, սիրումենք անյիշաչար լինել դեպ ի բանիասողքը։ երրորդ, որ Դուք սովոր էք ձանձրանալ Սուրբ գրքի ասածների ունկնդրութենից, որով կարող էր մեր ճշմարտութիւնը փայլել։ պատճառ, մի այլ անգամ եղած է այսպիսի հարկ, և դուք խնդրեցիք մեզանից խօսուածք, որպէս վկայ մեր ուղղութեանը։ այդ բանը տուեցինք ձեզ Սուրբ գրքի վկայութեամբ, որ բոլոր հակառակողքը խոնարհեցնումեր դեպ ի հաւանութիւն երբ որ սիրումէին ուղղութիւնը։ բայց ծանր եղաւ ձեզ ընթեռնուլ (կարդալ) մեր գրածը, կամ նորան յուսանել միւսերին, ինչպէս և ունիք հրաման Աստուծուց, ըստ որում անխորհուրդ չէք սուր կապել Ձեր մէջքին, այլ, որ վրէժխնդիր լինիք նոցա, որ գործումեն չարը։ Բայց երբ որ մեք թոյլ և դանդաղ տեսանք Ձեզ դեպ ի այն քննութիւնը և վրէժխնդրութիւնը, յանձն առանք խոնարհութեան լուծը և նստած ենք լռութեամբ մեր տան մէջ։ Մեք ներս ու դուրս արած չենք Ձեր թագաւորական ապարանքի մէջ։ որոնած չենք հոգևոր ուղղութենների առաջնորդութիւն և ոչ մարմնաւոր բարիք։ Պարծենումէ չենք Ձեր տոհմակցութեամբ և ոչ մեր հայրենի ժառանգութեամբը, ոչ գրով և ոչ խօսքով։ մեր պատուի չափից դուրս ձգտած չենք և ոչ միւսի ձեռքից կամեցած ենք յափշտակել նորա պատիւը։ ոչ ձիանքով և ոչ ջորինեռնով փարթամացանք և ոչ մեր քահանայութիւնը շինեցինք մեր մարմնի երկրորդական աշխատութիւն։ Ձեր քաղաքների մէջ չվարվեցանք համարձակապէս և ոչ հարստահարեցինք ձեր գործակալները։ զրկվեցանք նոցա ձեռքով և համբերեցինք, զղուեցանք և լուռ մնացինք, բայց Ձեր ականջին ձանձրութիւն չտուեցինք։ Այն կատարեալ իմաստութեամբը որ ունինք Աստուծուց, Ձեր առաջև երևեցանք որպէս տխմար մանուկ,

թէ հոգու և թէ խօսքի թևթևուԹեամբ. և այն տաղանդը որ ունիմ իմ մօտ, պահած ու թագուցած կայ, ըստ որում խրատուէ մարգարէն, ասելով. Դուրսումը առեցին յանդիմանողներին, և սուրբ խօսքերը պիղծ չինեցին։ Ահա պատճառով, ով որ խնաստուն է, լռելու է այդպիսի միջոցում, որովհետև չար է ժամանակը։ Ահա, այս լռութեամբս գտադարած կամ և Աստուծոյ հետ խօսակցութեամբ պարապած. նորա առաջև կանգնած եմ մեռաւոր հառաչմամբ, աղօթս հնծութեամբ և միշտ արտասուք թափելով. բայց թողնելով երևելիքը, խնդրումեմ աներևոյթքը և վերինը, ուր Քրիստոսը նստած է Աստուծոյ աջակողմումը, և այն տեղ ջանքումեմ լցուցանել իւր աղօթքը դէպ ի ինձ, որ ասել է այսպէս. Հայր, կամենումեմ որ, ուր ես կը լինիմ, լինէին և սոքա, որ տեսանեն իմ փառքը որ տուեցիր ինձ։ Այն փառքի և այն տան վայելչութեան փափագումը զբաղված է իմ աղքատութիւնս. թևթև են իմ աչքումը Ջորագետի եղբարց և վարժապետների անարգանքը և ձեր փառքը։ Եւ ես լուսաւորված լինելով այդ վայելչութեամբը, արտասուք եմ թափում Հօր Աստուծոյ առաջև, որ նա Յիսուսի Քրիստոսի, միջնորդի ձեռքով լուսաւորէ և ձեզ նոյն տեսութեամբ, և այս դիտութեամբս տայ ձեզ արհամարհող լինել երևելի բաներիս։

Երբ որ ես այս ընթացքի և այսպիսի զբաղմունքի մէջ էի, իմ ելքը աշխարհիս և Քրիստոսի հետ միասին լինելը լաւ համարելով, և իմ կենալը մարմնի մէջ ոչ հարկաւոր, որովհետև չեմ ձեզ օգտակար, և ահա եկաւ այդ մեր իշխող Հեթումը և բերեց ինձ Ջեզանից մի հրամանի պատուէր որպէս մի տհաս մանուկի մօտ. և այս էր բանի համառօտ միտքը, թէ անկարգ և անօգուտ է իմ ընթացքը, և ոչ այն շաւիղներով որով ընթացել են Գրիգոր վկայասէրը և նորա համանունը Եգիպտոսի մէջ, և որ ներանից յետոյ եղել է այս տեղ Հայրապետ, Գրիգորիոսը և նորա եղբայր Ներսէսը, այլ, թէ ես նոցա շաւիղներից խոտորվելով, ունիմ ղարտուղի գնացք, բայց դուք և միւս Հայերը նոցա ընթացակիցք էին։ Եւ եթէ այս ծուռ ճանապարհի վերայ չլինէի ես, գրած էիք դուք, ապա արժանի էի հայրապետական պատուի. բայց այն բանը անհնարին է կայացանում ինձ այդ պատուի պատահումը. այլև լինումի ձեզ նախատանքի պատճառ Ջորագետայիների կողմից, որ և անիմաստաբար անէծք են խօսում իւրեանց գլխին, և Դուք աղաչումիք մեզ, նոցա գայթակղութիւնը վերացնելու համար, չիտ գտնալ մեր մոլորութիւնից. ապա թէ ոչ. կը ղրկվինք մեր պատուից որ միևնոյն այժմ ստացել ենք Ջեզանից։ Ես Ձեր այսպիսի հրամանի մասին, դոհանումեմ Աստուծուց անխոով կամքով որ արժանայնումի ինձ, սուրբ ճշմարտութեան վկայութեան համար, կոչվիլ դէպ ի անարգու-

թիւն· Երանի թէ արժանի լինիմ և գործով վայելել այդ աստուածային շնորհը։

Շ՚նորհակալ եմ պարգեւողին, որ տալիս է ինձ ոչ միայն հաւատալ դէպ ի նա, այլև նորա համար նախատվիլ և չարչարվիլ· և պատրաստ եմ այսուհետև ընդունել Նրանից այս անարգութիւնը, քան թէ մինչև այժմ Նրա պատիւը։ Եթէ քո արքունական տեեանը արդարացի կը համարէ առանց քննելու և դատելու ձգել ինձ անպատուութեան մէջ, և այդ կ՚ընդունեմ ես սիրով որպէս քրիստոսի աթոռակցութիւն։ Բայց եթէ քննութիւնը իրաւացի կը համարէք, դորանից չեմ հրաժարվում, այլ պատրաստ իմ պատասխանի տալ և Ձորպետի ընակիչներին և մեր աշխարհի մարդերին և ամենայն հակառակորդի, որ չեմ մոլորված և ոչ սուրբ եկեղեցու ուղիղ շաւիղներից ծռված, ոչ հաւատի և ոչ բարեկարգութեան մասին։ Այնու ամենայնիւ, իմ ուղղութեամբս պատասխաղ եղած չեմ նոցա մոլար ընթացքին, որպէս արդարև ճշմարտութեան ուսուցիչ այլ ընդունել իմ նորանոյ իւրեանց անկարգութեամբը որպէս իմ բարեկարգութեանս եղբայրարար հաղորդք, և միշտ աղօթել իմ նոցա վերայ, ինչպէս աղօթքի լսող Աստուածը կը վկայէ։

Այլ որովհետև այժմ դանչուեցաք ինձ Ձեր տեեանը, պատրաստ իմ պատասխանել, Ո՛վ են ոսոխները, թէոդ գան, յանդիման լինին, ասեն ու լսեն։ Բայց եթէ Դուք առանց քննելու, փոքրացնուեցաք իմ բարեկարգութիւնքը և ուղիղը կամենուեցաք արհամարհելի կացուցանել որպէս անօգուտ բաներ, և ճշմարիտը որպէս անպիտան, և մեծը որպէս փոքր, և ճշմարիտը որպէս սուտ· չեմ հաւան դորան, և այս ճշմարտութեան վերայ կը նախատվիմ և կը մեռանիմ։ Պատճառ, կայ քրիստոսը և աստուծ իւր ծառաներին։ Ով որ մի բան կը լուծանէ այս փոքրիկ պատուիրաններից և այդպէս կ՚ուսուցանէ մարդերին, փոքր է ասվելու երկնքի արքայութեան մէջ· բայց ես ցանկանուեմ մեծ ասվիլ այն տեղ և ոչ փոքր։ Եւ նորա առաքեալները ուսուցել են պատասխանել այժմեան աւելորին, որպէս նորա պատասխանել են Հրէաներին, այսինքն· Հնազանդել պարտ է Աստուծոյ աւելի, քան թէ մարդերին։ Եւ Պաւղոսը ասում համարձակ· Եթէ մարդերին հաճոյ լինէի, ապա քրիստոսի ծառայ չէի։ Ուրեմն, ակ, բարեպաշտ իշխան, այս բանի մեծութիւն ու փոքրութիւնը քննենք, որ ասում ես թէ պէտք էր արհամարհել, մարդերին հաճոյանալու համար· քննենք, արդեօք փոքր է մերը քան թէ այն, որի համար քրիստոսը մեռաւ, Յովհաննէս մկրտիչը պլխատվեցաւ, միւս Յովհաննէսը (Ե.ւտարանիչը) աքսորվեցաւ, Յու-

սիկը [1]) փայտի տակ ջարդվելցաւ, և Ներսէսը [2]) դեղատուութեամբ նահատակվելցաւ։ Աստուած օրէնք է դրել շաբաթանալ (ալատ լինել և հանգստանալ) ոչ ամենայն բանից, այլ միայն ծանր գործերից։ Հրէայք շատ սիրում էին դատարկութիւնը և Քրիստոսին օրինաղանց էին ասում, շաբաթ օրին բժկութիւն գործելու պատճառով։ և նա որովհետև դիտեր թէ աստուածադիր օրէնք չէ այս, բժշկումէր շաբաթ օրերի մէջ։ Նա չշահեց նոցա կարքը և միւս օր չփոխեց շաբաթը, այլ պատուեց ճշմարտութիւնը և այս պատճառով խաչվեցաւ նոցանից, որպէս թէ շաբաթքը պահած չէր։ Ուրեմն, ինչու համար չփրկեց նորանց աստուածասպանութենից, փոխելով բժկութիւնը դէպ ի մի այլ օր։ բայց որովհետև օրէնքը չէր, օրէնքը իւր չափի ու սահմանի մէջ պահեց և գորանից առաւելը խափանեց։ Իսկ ես ունելով Քրիստոսը ամենայն օր, իմ համար, պատարագ Հօր Աստուծոյ առաջև, մի՛ թէ խափանումեմ նորա սպասաւորութիւնը քահանայական սուրբ զգեստներով, բաց գլխով և պաշտօնեաների սպասաւորութեամբ, ինչպէս հրամայել է Աստուած Մովսէսի բերանով, որոշելով զգեստների կարգը, և Պաւղոսը գլխի բանալը և սուրբ հարքը պաշտօնեաների դասը։ բայց ես — ասումեն իմ բարեբասղքը — հագնումեմ դիշտը (բուրգից շինած գդակը) որպէս Հաղբատի եպիսկոպոսը և երկու թիկ կնգուղ վրայի սաքուլայով (գլխարկով) և պատարագումեմ հաղբատեցի սև փիլոնով և փակումեմ գուռը վերաս և ձգումեմ վարագոյրը և անհաղորդ եմ առնում ժողովրդը իւրեանց Աստուծոյ քաւիչ մնհուանից։ Բայց քո վանորայքը վերևումը և ներքևումը ի՛նչ են առնում, մի՛ թէ դոքա պատկառում չեն նոյն իսկ պատարագի խորհրդից, որ երբեմն ասումէ թէ Սերովբէների հետ համաձայնեցէք։ երբեմն, թէ Տուր մեզ համարձակաձայն բարբառով կարդալ զքեզ, հայր։ Երբեմն թէ, Դպիրք, սաղմոս ասացէք քաղցր ձայ-

---

[1]) Դրիդոր Լուսաւորչի թոռը, որ իւր վերթանէս հօրից յետոյ 6 տարի կացաւ հայրապետութեան աթոռի վերայ, և Աստուծոյ օրէնքին նախանձաւոր լինելով, խորտակեց Ցուլիանոս ուրացողի դիւանկար պատկերը, և այդ պատճառով Տիրան թագաւորից բռնաճե լինելով կատարվեցաւ։ Խորեն. գիրք 3. գլ. 11 և 14։

[2]) Ներսէս մեծ, Ցուսիկի թոռը, Աթանագինէ հօրից։ Սա կացել է կաթողիկոս 34 տարի, հայոց թագաւոր Արշակի օրերումը և արել է հայաստանի մէջ մեծ բարեկարգութիւնք և առաքինական վաստակներ։ Փաւստոս բիւզանդացու վկայելովը, չկամելով Ներսէս մեծը ընդունել արհանոսական հաւատս, վալենս (վաղէս) կայսրի հրամանով աքսորվեցաւ դէպ ի մի անապատ կղզի Եգեկեան ծովի մէջ։ Երկրորդ տիեզերական ժողովումը Կոստանդնուպօլսի, որ կատարվեցաւ ընդդէմ Մակեդոնիոսի Մակեդոնիոսեան հերետիկոսներին, ներկայ լինելով Ներսէս մեծը, շատ մեծարվել է կայսր թէոդոս մեծից։ Մահ է գտել հայոց թագաւոր Պապի ձեռքով ծածուկ դեղատուութեամբ, որովհետև յանգիմանումէր թագաւորին նորա զազիր վարքի համար։ Խորեն. գիրք 3. գլ. 20, 33 և 38։

նով և օրհնեցեք Տէրը երկնքում։ Հրամայիր և տես քո վանորայքը, արդեօք այդ օրէնքը կատարվո՞ւմ դոցա մէջ։ Բայց այժմ ինձ հրամայումես հրաժարվիլ այս օրէնքից որպէս անօրէնութենից և նորանց առանց դատելու թողումես իւրեանց անօրէնութեան մէջ անշարժ մնալ, նորանց որ լեղուագար են և անդուռն բերանով. բայց որի՛ց կամիմ նոքա աւելի ճարտար լինել։ Նոքա իւրեանց ստութեամբ կարողանումեն քո պարզամտութիւնը վախեցնել, և ես իմ ճշմարտութեամբ մի՞ թէ արժանի եմ իմ մեծաւորիս քարշանքին (անարգանքին) այն բանի վրայարէն, որ ես իմ բարեպաշտութեամբս հրապարակատես իմ առնում քրիստոսի պատարագը որ փրկանք է ամենեցուն համար և նորա պատարագի խորհուրդը լցուցանումեմ որպէս սպասաւոր. և այս բանը որպէս չնչին իր չեմ արհամարհում ես և ոչ ծուլումեմ այս շաւիղներից, այլ յօժարութեամբ յանձն կ՝ առնում մահ քրիստոսի պատարագի բարեվայելչութեան համար, ինչպէս նա իւր բժշկութեան համար շաբաթ օրի մէջ։

Իմ երկրորդ անկարգութիւնը այն է, որ բոլոր քրիստոնեաների հետ հաղորդակցութիւն ունիմ։ Գիտելի լինի իմաստուն քննողներին, որ քրիստոնեայ ազգերը որոշվումն միմեանցից ինչ ինչ բաներով։ Բայց Աստուծոյ շնորհը ղօրացուցել է ինձ, այս նոցա անոտի աւանդութիւնքը գիտութեամբ արհամարհել և նախապատուել սերը. և իմ համար Հայը է որպէս Լատինացին, և Լատինացին որպէս Հելլենացին և Հելլենացին որպէս Եգիպտացին, և Եգիպտացին որպէս Ասորին։ Ո՛րեմն, եթէ ես լինէի մի հատ ազգի յատակով, ի՛նչպէս կարող էի հաղորդութիւն ունենալ միւսերի հետ. բայց դոցա ամենների հետ որ միմիանց թշնամիք են, խառնվելով, գրաւումեմ բոլորեցուցնց սիրտը, նմանելով քրիստոսի առաքեալն, և ունիմ պատճառ, որ ամենայն հարցողի կարող իմ պատասխանել թէ ուղիղ է իմ ընթացքը. և քրիստոսի սիրովը քակումեմ ամենայն կրճիմ (բաժանող պատ), որ սովոր էր մի քրիստոնեայ բաժանել միւսից. և այսպէս բարեհոչակվումեմ Լատինացոց, Հելլենացոց և Ասորոց եկեղեցիների մէջ և կամ թէ մեր Հայաստանումը, Հայերի մէջ, որոնց աւանդութեան վերայ հաստատ եմ ես անշարժ և անփոփոխ։

Բայց եթէ նոքա չար աչք ունին և բորբոքվումեն նախանձով դէպ ի իւրեանց մեծաւորքը, ինչո՞ւ համար ապա չեն միխիթարվում այն բանի վերայ, որ իմ հանճարը հաճոյացուցել է Հայաստանը այս ազգերին և դոցա սերը միշտ ձգումէ դէպ ի մէջ, ինչպէս տեսանումէք և լսումէք Դուք որ ունիք աննախանձ կամք։ Բայց նախանձը նսեմացաւ

քրիստոսի լուսից, պարտական չէ եթէ խաւարվումէ իմ լուսից։ Եւ այս գործի մէջ օտար չենք մեք մեր Հարց շաւիղներից, այլ անսխալ ընթացակից· պատճառ, ոչ թէ Ձորագետումը, այլ մեր մօտ են գրուածքը Գրիգորիս վկայասիրի և նորա համանուն Գրիգորիոսի Եդիպտոսումը և մեր տէրանց բանքը· մեք գրով ունինք նոցա հաւատի դաշնը և տնօրէնների լսելով նոցա վարքի և կարգերի օրինակքը· և երբ որ կը դանք Ձեր ատեանը, կարող ենք ցուցանել, որ մեք նոցա շաւիղների վերայ ճանապարհ ենք կատարում, և հաստատ ենք նոցա հաւատի և կարգերի հիմքի վերայ, և ոչ թէ նորա, որ մեղ նախատումեն։ Եւ մեք ունինք մեղ առաջնորդ ոչ թէ վերոյիշեալ հարքը միայն, այլև այն Սուրբերը որ նոցանից յառաջ եղած են· եթէ սոցա հիմքի վերայ կամենումեն մեղ դատել, չենք պապանձվելու, այլ մեծ պանծանքով նորանց կը պատասխանենք· պատճառ, ունինք մեք նոցա հաւատի դաշնը· սուրբ պատարագի ղարդը, աղօթքի կարգը, քահանայագործութեան ձեվերը, աստիճանների որոշումը, կրօնաւորութեան օրհնութիւնը, նոցա միաբանութիւնը, միշտ դատելով ուղղելը հոգևորների ընթացքը, խրատը աշխարհական քահանաների համար, քաղաքի եկեղեցու պայծառութիւնը, տօների վայելչութիւնը, իւր խղճմտանքի դատաստանը, որ ըստ օրէ սխալանքների խոստովանութիւնը, հայեցողութիւնը դէպ ի երկնային լոյսը, և տենչալով նորան, արհամարհութիւնը երևելի բաներիս, և այս փափագի վերայ ատասուքի առուների թափելը· որից դոքա, որ մեղ դատումեն, կամ շատ մանով կամ թէ ամենայն մանով պակասաւոր են գտանվում։ Եւ ես յիմարված չեմ, որ լուռ եմ կենում, այլ նոքա որ շատախօսումեն այն բանի վերայ, որ չգիտեն· պատճառ, քրիստոս հրամայել է, թէ ծառը իւր պտղից կը ճանաչվի· մեր պտուղը յայտնի է ահա մեծատոհմութեամբ, ձեր պատուովը և հայրենի ժառանգութեամբը, և Անեցու պտուղը Դուք էք լսել· Ձորագետինը նոյնպէս և այդ տեղերի ծնունդ Տուտէորդին և քօթարեցին· գիտեն և միւսերը որ տեսած էին նորանց։ Այսպէս, Տուտէորդին, անարգութենից յառաջացած, իւր լեզուագարութեամբը փառք է որսում մարդերից և Աստուծոյ փառքը չգիտէ։ Ուտելով ու խմելով աշխարհականների հետ, պարարում է (հաստացնում) պորտը, բայց թէ եկեղեցու դուռը դէպ ի ներ կողմն է, չգիտէ։ Դա, որ համարձակվում է մեղ ուսուցանել, և իւր թուրք եղբայրը (այսինքն իւր դրացի թուրքը կամ պարսիկը, ըստ որում Անին և Ձորագետը Պարսկահայքի մէջ էին) չկամի կամ թէ կարող չէ ուսուցանել, և ոչ իւր տան վերայ գիտէ բարւոք վերակացու լինել, որ ինքը իւր անձը յառաջ է ձգում դէպ ի եկեղեցու սուրբ աստիճանը, և ինքնահաճութեամբ նստում

նախապատիւ բարձի վերայ։ Իսկ այն, լըրութեան մէջ վարժ հաղբատացիքը, այնքան կուրացած են միմեանց նախանձուց, մինչև մինը խօսելու ժամանակին միւսը վեր քարշելով քիթը, կատականք ու ծաղր էին բոլոր վանականների մէջ։ Դոքա Տիրոջ տաճարի սեամքը (շէնքը) չեն կոխում իբրև անարժանք, բայց մեր սպասաւորելը առանց ճանաչելու բամբասումն և վատաբանումն։ Սոցա չկամեցանք մեք ոչ պրով խօսակից լինել և ոչ ըներանացի ընդունելութիւն առնել, այլև գոյա կողմից չկար լեզուադարութիւն դեպ ի մեզ և ոչ ևս տուրևառութիւն մեր հետ մեր Տիրոջ Գրիգորի օրերումը, երբ որ մեք նոյն կարգով երեւելի էինք ամենեցուն մէջ, այնպէս որ Ձեր աստուածպաշտութիւնը հրաւիրեց մեզ հանդիսակից լինելու մանուկ կաթողիկոսի ձեռնադրելու միջոցին։ Բայց յետոյ դուրս հանեցիք մեզ ամբոխից և կոչեցիք դեպ ի քննութիւն։ Մեք հրաժարվեցանք, բայց Ձեր հրամանի գիրը մի, երկու, երեք, չորս և հինգ անգամ բռնապատեց մեզ։ Եկանք, և ինչ որ Դուք արեցիք այն ժողովումը, համաձայնեցանք. գիտեինք և մեք, որ մարդիկ էին մեռած Հռոմ-կլայումը, և դուք այն տեղից արծաթ ու ոսկի էիք առել։ Մեք տկար չէինք լեզուով քան թէ միւսերը, և ոչ խորհրդակից ձեզ այդ բանի մէջ, ինչպէս մի քանի մարդիկ։ ունէինք և մարմնաւոր ժառանգակցութիւն հանդուցեալների արծաթին, բայց, իբրև Աստուծոյ հրամանի, հնազանդվեցանք ձեր իշխանութեանը, և յանձն արեցինք Աստուծուն տալ քեզ խնստութիւն այդ գնաքի մէջ, գիտելու քո անձնի պակասութիւնը. այդպէս աղօթեցինք մեք և ստացանք մեր աղօթքի պտուղը, ըստ որում և դու բարեսէր ես։ Բայց եթէ այն օրի խաժամուժ ամբոխը վախեցաւ քո իշխանութենից, և մեզ, փոխանակ քո, իւր նախատանքի նպատակ արեց, և խռոված հոգիքը և մնափառները շարժեց դեպ ի իւր կողմը, Դու քո նախատիչների նախատինք յանձն առողս ինձ նախատումես նոցա հետ միասին, և մեր ճշմարտութիւնը, որ դու քո աչքով տեսած ու վայելած ես, նախատումես նոցա պարտելու պատճառով։ Աստուած հեռի առնէ քեզանից Պիղատոսի դատողութեան ճանապարհը. պատճառ, այսպէս էր նորա դատաստանը. չունենալով նախանձու դառնութիւն, հրէաների մոտի աղաղակովը մոլորվեցաւ և հաղորդակից եղաւ նոցա մեծ չարագործութեանը։ Բայց Աստուած քո առեանը թող արդարակշիռ առնէ ինչպէս բարեպաշտ կոստանդիանոսի և Թէոդոսների առեանը, որ դու լինիս ճշմարտութեան չատագով և ոչ թէ շատախօսութեան։ Դեպ ի այդ դատաստանը աղաղակումեմ ես թէ նախանձեցի ամենակալ տիրոջ նախանձը և բահաղի մարգարէքը յանդիմանեցի. այս պատճառով գոքա խնդրումեն իմ անձը, և իւրեանց անէծքը որ կարծումես դու դեպ ի քեզ է ձգտված, յետ

կը գառնայ իւրեանց գլխի վերայ և ամբարիշտների տան վերայ. այն անէծքը վերաբերվում ոչ դէպ ի քեզ և ոչ դէպ ի մեզ, որ հաղորդ եմք քեզ, այլ նորանց միշտ կը ձգե այն պատժի տակ, որ ասաց Քրիստոս, թէ «Ով որ հոգին սուրբ կը հայհոյէ, թողութիւն չկայ նորան ոչ այս և ոչ հանդերձեալ աշխարհումը»։ Ինչպէս Հրեայքը բժշկութեամբ հրաշագործ Քրիստոսին զըպարտեցին որպէս բէկզըւըրուղով հալածող դևերի, և լսեցին այս դատաւճիռը, նոյնը լսելու է և Թանձրապորտ Տուտէորդին. և չարութեան ժողով Հաղբատացիքը ոչ քննեցին և ոչ հաւատացին թէ մեք արդար իրաւունքով ընդդէմ կենք մանուկ կաթողիկոսի ընտրութեանը և խոժոռ աչքով նայումէինք այն իշխանութեան վերայ որին մօտ ու տեղեակ էինք։ Բայց Տուտէորդին բացակայ լինելով և նորա ծանօթութենից և մեր ճշմարտութենից, կամեցաւ մանուկ հայրապետ ունենալ և իւր անձը դնել այն վայի տակ որ ասում է իրը. Վա՜յ քեզ, քաղաք, որի թագաւորդ մանուկ է. և քո իշխանները ուտումեն առաւօտուն և գնումեն ըգուս (արաղի) քամելից։ Դոքա մտածումէին մանուկ հայրապետի ձեռքի տակ արձակ համարձակ պարապել իւրեանց գինեպզութեանը և որովայնապարարութեանը և այլ չարագործութեան, որոնց մէջ վեր ի վայր թռչումեն, բայց այժմ տրամելով թևերի կարճատելու վերայ, անտես արեցին աստուածահաստատ իշխողդ և քո համախոհ եպիսկոպոսների ժողովի դիրը և այն արժանաւոր եպիսկոպոսի հրեշտակութիւնը. և անհանճար մանուկի գիրը նոյնպիսի մանուկների պատգամաւորութեամբ պատուեցին, որ Հեղի քահանայի որդիների պէս վստահացած էին նորա քահանայապետութեանը քրիստոսի հօտի վերայ, և ասումէին. «Ցուր միս խորովելու, ապա թէ ոչ, բռնութեամբ կ՚առնում»։ Մի Տիգրանի ձեռքով որ ծառայութենից աղատվելու պատճառով, ձայնակից եղաւ Հայերին, դոքա քեզ, աստուածասէր և աստուածահաստատ թագաւորդ և մեզ Ձեր հետ միասին յանդուգն բերանով զըպարտեցին պատգամաւորութեամբ մի մեռոդնի (աբեղայի), որի անունը և Աստուծուն անգիտելի է։ «Դու իրաւացի ես առնում, նոցա բանքը արձանագրելով և մեզ անարգելով իբրև մի դարշելի անձն» ասումէին նոքա. արդարև մարդիկ որոնց բերանքը անէծքով ու գառնութեամբ լի են, որ իժերի թոյն ունին իւրեանց շրթունքի տակ, որոնց ոտերը արագընթաց են արիւն թափելու համար, որ խաղաղութեան ճանապարհը չճանաչեցին, և Աստուծոյ երկիւղ չկայ նոցա աչքի առաջև։ Թէ այս վկայութիւնը նոցա սուտ չէ, այդ ցուցանումեն նոցա գրերը, որ քեզ պարտաւորեցին այն բանի մէջ, որի մէջ չէիր դու, և մեզ նոյնպէս. ոչ թէ անգիտութեամբ, այլ կամայակէս զըպարտութեան կրակը դուրս ժայթքելով։

Ա՛յժմ, եթէ քո աստուածպաշտութիւնը արժանացուցել է նորանց պատասխանական լանի, մեր իմաստութիւնը անարժան է համարում պատասխանել նոցա· պատճառ, մեք խրատվումենք, անզգամին պատասխան չտալ· և որովհետև նոքա, որ յուսացանումն այդպիսի յանդգնութիւն, շատ ստոր են այն բոլոր եկեղեցական վարդապետներից, որ մեր ճշմարտութեանը ջատագով են· նոյն ինքն մեր աշխարհը և այս սուրբ սարը և սորա մէջ գտանված սուրբ հովիւները, բոլոր գաւառը Վասպուրականի և այն տեղի հռչակաւոր Վարագ վանքի միաբանքը, երևելի մարդիկ Ստեփանոս Տիրացուն, մեր ուսուցիչը, Գէորգ ճգնաւորը և մեր ուսումնակից Ստեփանոսը, Քրիստոստուր և Տիմոթէոս ճգնաւորները աչքով տեսել են մեզ և հաւանելով մեր մեծ եղած ճշմարտութեանը, երանի են տալիս իւրեանց, որ կարող են ձայնակցել մեզ· Բոլոր գաւառը Տարոնի և այն տեղ եղած իմաստուն եպիսկոպոսը Եսայի և վարժապետ Թէոդորոսը որ բարեհռչակումեն մեր բարեկարգութիւնը և բաղդաւոր են համարում նորանց որ մասնակից են այդ բարեկարգութեանը: Եկեղեցաց գաւառը և սուրբ Գրիգորի սարը և այն տեղի հոգևոր հարքը և եպիսկոպոսքը որ իւրեանց գրովը բարեհամբաւումեն մեր ճշմարտութիւնը և անբաղդ են համարում իւրեանց անձը, որ աղքատութեան ու անօրէնների բռնութեան պատճառով չունին հնար մեծաւոր հաղորդակցութեան մեր հետ: Խաչենի իշխանները և այն տեղի վանքերը որ մեր աշակերտ Յովսէփին և մեր կարգերի վարժապետին պատուումեն հրեշտակի պէս և առաջարկումեն, որ գա Աղուանից կաթողիկոս ընտրվի: Թողունք մերայինքը· Լատինացոց եկեղեցիքը որ թէ այս տեղ արևելքումն և թէ արևմուտքումը կան, որոնց հաճոյացել է մեր իմաստութիւնը, այն միջոցին երբ որ մեք եպիսկոպոսների ժողովով գնացած էինք դէպ ի Հռոմի (Յունաստանի) ինքնակալը, տեսանելով մեզ իւրեանց կարգերին համաւտ, և մեր կարգերին լուսաւորիչ, այս բարեգործութեան համար փառաւորեցին Հայրը որ երկնքումն է: Անտիոքի եկեղեցիքը Լատինացոց և Հելլենացոց որ Պաւղոսի անունով բարեհամբաւումեն մեր նուաստութիւնը և վկայումեն թէ մեք նորա աթոռի արժանապատիւ յաջորդ էինք, և որոնց դուռները բաց են մեր համար, և եկեղեցական պաշտօնեայքը աշակերտված մարդիկ էին: Ասորոց պատրիարգը որի նամակները մեր մօտ են, իւր բարի վկայութեամբ մեծապէս հռչակումէ մեր փոքրութիւնը: Կիպրոսի թագաւորութեան պաշտօնեայ Գուդեստապլը [1]) որ այն միջոցին, երբ եկած էր օգնութիւն

---

[1]) Comte d' estable հին ֆրանսիական յարմարագրութեամբ, որ այժմ գրելի էր Comte d' etable, այսինքն կոմս սխոռի, արքունի սխոռապետ:

հաստատանելու Հեղ, հաճութեամբ ու գովութեամբ ընկալաւ մեր բարեկարգութիւնը։ Գունդհեոին (այն անուանի զօրապետը) որ Պաղեստինացոց թագաւորութեան է ընծայված, որ և դուք այս տարուս ըներած էիք դէպ ի Տարսոն, իւր խօսակցութիւնը մեր հետ սկսեց այսպէս. «Թէ ոչ մի մարդ գտած չեմ այսօր այնպիսի բարի անունով հըռչակված շատերի մէջ, ինչպես քո երկիւղածութիւնը»։ Առաջին կաթողիկոս, իմ Տէրը Գրիգոր, իւր վախճանի ժամին ասաց ինձ այս բանը. «Եթէ մարդահաճոյ կամքով հարստահարել եմ քո ճշմարտութիւնը, թող ինձ ներողութեամբ»։ Ա՛յժմեան Հայրապետը, որ բնաւորութեամբ և խոստութեամբ ընթացակից լինելով մեր ճշմարտութեանը, այս մասիս նախատինք ևս ընդունումէ յօժարութեամբ։ Բաց ի այս արտաքին վկաներից, ունինք մեք և մեր խղճմտանքի վկայութիւնը որի վերայ հաստատված ենք թէ բարի մտքով ենք և ամենայն բանի մէջ կամենումենք բարի գնացք յուցանել։

Ա՛յժմ, մի՛ թէ արժան էր ինձ այս բոլոր, Հայերից և այլ ազգերից տուած, այլև իմ խղճմտանքի վկայութիւնը անտես առնել, և Հորագետի երկու մարդերի կամքը հաճեցնել. դոյա, որ այն Անեցի արբածը խաղ դանդողների միջից, որ ուխտանամոլութեան և արբեցութեան միջից դէպ ի կամաղեկոսութիւն քարշելու համար, որին հակառակ էինք մեք, նախատումեն մեզ, Նորա մասին լաւ վկայութիւն են տալիս և մեզ ծաղր են առնում։ Մեք մեր իշխանի համար գայթակղութեան քար ենք, թէպէտ և նոցա հաճոյ գտանվում չենք. պատճառ, նոցա կամքի լրութիւնը Բարսեղի կաթողիկոսութիւնն է և ոչ թէ իմ մոլորութիւնը ճշմարտութենից։ Ա՛յս պատճառով աղաչումեմ քո բարեպաշտութիւնը, ինձ որպէս տգէտ և անուս մարդ չդանչել այդ բռնադատական գործին մասնակից լինելու։ Ես Աստուծոյ կամքով ճշմարիտ ճանապարհի վերայ եմ, և Հայաստանի մէջ նորոգիչ մեծ ուղղութենների որ նսեմացած էին։ Եթէ կամենումեք ընդունել, կը վարդապետեմ և Հեղ ինչ որ կիտեմ, և կ՚առաջնորդեմ Հեղ այն ճանապարհով որ տանումէ դէպ ի Աստուած, բայց եթէ անտես կ՚առնէք, այնու ամենայնիւ լռելու չեմ, այլ կ՚աղօթեմ առ Աստուած. «Տէր, յայտնի է քեզ որ ես քո արդարութիւնքը չծածկեցի իմ սրտի մէջ. ասացի և ոչ թագցրեցի նորանց մի մեծ ժողովրդից և նոքա կապել են իմ ջրոս կողմը այնքան չարութեամբ որոնց թիւը չկայ»։ Եւ բոլորին յօժարութեամբ տանուտեր, որ Քրիստոսին հաճոյանամ և գտանվիմ նորա մէջ. և այս յոյսի վերայ խնդալով հեռանումեմ քո ատենի երեսից, Քրիստոսի համար անարգված։ Բայց եթէ չես հետևելու նոցա շատախօսութեանը և նախանձուն, այլ կը պատուես մեր պատգամաւորութիւնը աստուածակոյս

կողմից, ապա կը լցուցանես քրիստոսի հրամանը որ ասումէ. որ կը լսէ ձեզ, լսումէ ինձ, և ով որ կ՚ընդունէ Ձեզ, ընդունումէ ինձ. և ով որ կ՚ընդունէ ինձ, իմ առաքիչին է ընդունում. և ինքն մեր տէր Յիսուս քրիստոսը կը ղօրացնէ քեզ այդ բաների մէջ, որ մեր ձեռքովը լսես նորա խօսքը և ասես չարախօսներին. «Հեռո՛ւ կացէք ինձանից ամենևքեան, որ գործումէք անօրէնութիւն. պատճառ, Տիրոջ խօսքը քաղցր է ինձ քան թէ մեղրի խորիսխը և ցանկալի քան թէ պատուական քարերը». որ պահելով դորան, հատուցումն ստանայր, այս երկրաւոր մեծութեան հետ և մեծ կոչվիլ երկնքի արքայութեան մէջ, որին ժառանգաւոր առնէ քեզ քրիստոս իւր անուան փառքի համար, որ է օրհնեալ յաւիտեանս, ամէն։

Պարձեալ, այս ևս աւելորդ չեմ համարում յայտ առնել քո աստուածպաշտութեանը, որ ամենայն պատուիրանների գլուխը սէրն է, ինչպէս ասաց սուրբ առաքեալը Պաւղոս։ Եւ Տէրը նոր պատուիրան է տուել մեզ, «որ մեք սիրենք միմեանց». ոչ թէ նշաններից, ոչ թէ բժշկութեան աքանչելիքներից կամեցաւ նա որոշելի կացուցանել իւրայինքը, այլ թէ «Սորանով կը ճանաչէն ամենևքեան, թէ դուք իմ աշակերտ էք, եթէ կը սիրէք միմեանց»։ Այս օրէնքից դուրս գալ կարող չենք և նախանձով լինել քրիստոնեայ աղգերի ժողովների հետ, որ դորանով հաճեցնենք Ջորագետացոյ միտքը։ Այլ, թէև ատելի ենք նոցա, բայց չենք ատում նորանց, այլ սիրով գրկախառնումենք և մեր Հայաստանեայքը և Լատինայիքը և Հելլենացիքը և ամենները ճանաչումենք մին քրիստոսով, Աբրահամի հաւատի զաւակ, ինչպէս ասում է առաքեալը. և կարող ենք շնորհով մեր գիտութեանս սուրբ գրքի մէջ, ապիրեթան կացուցանել Հելլենացին, եթէ նա կարծումէր թէ Հայը ծուլել է ուղղափառութենից, և Հայն և միւս աղգ. և որովհետև մեր դէպ ի քրիստոս հաւատի աղբիւր և հիմն նոքա են եղած, և մեք նոցա ծնունդն ենք, ինչպէս ասվումէ մի երգի մէջ որ երգումեն մեր եկեղեցում. Կեցուցի՛ր քո ծառայի որդին, որ դու Հոռոմի (Յունաստանի) գահիյը. վերապատուեցիր, ուր դրեցին հաւատի հիմնաքարը սուրբ եկեղեցու։ Ուրեմն Հայոց վարդապետի բանքը հիմք են ասում նորանց և մեզ նոցա վերայ շինած. և նոցա լեզուով ունինք շատ բաներ սուրբ գրուածների մէջ, որ թողած են հելլենարէն ի պատիւ նոցա. զոր օրինակ քրիստոս, որ թարգմանվումէ Հայերէն էֆեթա. եկեղեցի որ թարգմանվումէ ժողովարան. կաթողիկոս որ թարգմանվումէ ընդհանրական, եպիսկոպոս, որ թարգմանվումէ պզծեր. Ստեփանոս, Լէոն, Գրիգոր, պրոսթումէ, որքիլ և այլ շատեր։ Եւ որովհետև այս այսպէս է, կաթուղիկէ եկեղեցու մէջ սովորութիւն կայ, որ մեծ ասների միջոցին

կոստանդնուպօլսի եկեղեցիներում կարդումեն աւետարանը նախ լատիներէն, յետոյ իւրեանց լեզուով, և Հռոմի, Անտիոքի և Երուսաղէմի եկեղեցիներում նախ հելլենական լեզուով են կարդում, ապա Լատինական, և այսպէս սիրով պատուումեն միմեանց։ Տարսոնի կաթողիկէ եկեղեցին եկեղեցի է ինչպէս նոցանից մինը, և դու մեր թագաւորն ես, ինչպէս նոցանը իւրեանց։ և ժողովրդի մեծ բաժինը հելլենացիք էին որպէս և քահանայքը որ ծաղկաղարդի շաբաթին աղօթակից էին մեր հետ։ և վերևում ցոյց տուեցի որ հելլենական լեզուն չէ մեր մէջ արհամարհած, այլ պատուած։ Եթէ ես հարց արեցի, կամի՞ն արդեօք նոցա բարբառով կարդալ աւետարանը և յետոյ մեր բարբառով, չանօրինեցայ ես, այլ ընդհանրական եկեղեցու օրէնքը պատուեցի։ և այդ փոքրութիւն չէր քո պատուին, այլ բարձրութիւն, որպէս այն թագաւորներին, որ վերոյիշեալ եկեղեցիներումը պատահումեն։ Չէլ պարտ էր եկեղեցու օրէնքը Թողուլ ինձ, որ իշխան էի եկեղեցուն, և հնազանդութեամբ լսել ինձ, և ապա բարեմիտ կամքով քննել պատճառը։ Բայց դուք իմ իրաւունքը անտես արեցիք, և ես հաւանութեամբ պատուեցի ձեր հրամանը ոչ թէ իբրև ոգէտ, այլ իբրև իշխանութեան հնազանդ մարդ։ Բայց այս հելլենացոց աղգս ոչ թէ մեր մօտ միայն և ու մուտք ունին սուրբ եկեղեցու մէջ, այլև ձեր թագաւորական ապարանքի մէջ։ Դուք ինչո՞ւ չէք հալածում նորանց ձեր գաւիթներից, որպէս անսուրբ և օտարահաւատ ազգ, տեղիք տալով Զօրագետացոց կամքին։ Բայց դուք այդպէս չէք ընթանում դոցա հետ։ այլ սորա հակառակ դոքա ունին իշխանութիւն Չելանից, և պատիւ և ոտճիկ և սեր և անընտրողաբար հաւասար Հայերին ընդունելութիւն։ Ապա եթէ դուք սիրու օրէնքը պատուումէք, ի՛նչ պատճառով ստիպումէք մեզ դեպ ի ատելութիւն։ Երբ որ դոքա մտանումեն մեր եկեղեցիքը, դորանց տեսանումեմ ես հաւատով երկրպագող և ձեռքերը ընծաներով, լապտերով, խնկով և ձիթով լի։ այնպէս որ, Աստուծով ասեմ, նոցա ընծայաբերութեամբ որ տալիս են և նուիրումեն սուրբ Աստուածածնի պատկերին, լցուցանվումէ Տարսոնի եկեղեցու և այս մեր վանքի օրական պէտքը մոմեղէնից ու խնկից։ Սորա հետ կապակից ունին և հաւատք և ջերմեռանդն դուխ դեպ ի Աստուած և եկեղեցու պայծառութեան մասին։ այս բանները տեսանելով, կարող չեմ ատել, և գիտեմ գրուածներից, որ և հաւատի մասին չունին թերութիւն։

Պարձակ, Լատինացոց աղգից ևս հեռացնումեն Զօրագետացիքը ոչ թէ միայն Չէլ, այլև մեզ և չեն կամենում նոցա սովորութեամբ վարվիլ, այլ Պարսից որոնց մէջ բնակումեն ինքեանք և ուղղումեն իւրեանց ընթացքը այնպէս, ինչպէս ընտել էր նոցա։ Բայց հաւատով

մին ենք, և իշխանք և Հայոց ազգս, դուք որպէս մարմնի իշխան, մեք իբրև հոգևոր իշխան։ Ինչպէս Դուք հրամայեցիք մեզ մեր առաջին հարց շաւիղներին հետևող լինել, եղիք նոյնպէս և Դուք ձեր նախահարցը։ Մի՛ կանգնեցեք բայց գլխով ինչպէս Լատինացոց իշխանքը և թագաւորքը, որ Հայերը բերանը փրփրած կատաղի մարդերի կերպարանք են ասում, այլ գրեցեք սարիուշ ինչպէս ձեր նախնիքը, աճեցուցեք ձեր հերքն ու մօրուքը ինչպէս ձեր հարքը, հագեցեք լայն ու թանձր գուբայ (հանգերձ) և ոչ փիլոն և սեղմած պատմուճաններ։ Հեծեք ճուշանով (կրծքակալով) սախտած երիվարների (ձիերի) վերայ և ոչ անսախտ լատինական ծածկոցով ձիերի վերայ։ գործ ածեցեք պատուաւոր անուններըը ամիրայ և հեճոապ և մալըպան և սպայսալար և սոցա նմանները, և ոչ Սէր, պռոֆէսոր, կոնֆեսոպալ և մաքաֆոփ և չիաոբ և լեճ, ինչպէս սովորութիւն է Լատինացոց մէջ։ Ուրեմն փոխեցէ՛ք դուք այս լատինական ձևերը և պարսիկներից առած անունները դեպ ի հայկական ձևեր և հայրենական անուններ, և բարեզարդեցեք Ձեր արքունիքը առաջիններուն սովորութեան պէս, և մեք կը հաւանինք Ձորագետացիներին և կը փոխենք մերը և կը կատարենք պատարագը սաքուլայով և երկու կանգուն վեղարով։ կը ժողովենք մեռոպեայ զգեստը և կը մոռանենք Աստուծոյ առաջև բրդեայ գլխարկով և կրօնաւորութեան պեմով (հագուստով) կը լինինք խարաշնազգեստ (մաղեղէն հագած) պատարագի մէջ, ինչպէս նորա են կամենում, և ոչ քաթանազգեստ, ինչպէս Աստուած հրամայեց առնել Ահարոնին և նորա որդիներին կատեայ պճղնաւոր պատմուճաններ, որ Ձորագետացիք տգիտութեամբ բամբասումեն։ Մեր մասին ասումեն, թէ լինումենք հրապարակով մռակեր և թռուրքերի նման հաւկիթ, կաթ և իւղ ուտող։ ինքեանք ի՛նչ են և իւրեանց ընտրած անեցին։ Ո՛վ է տեսել, որ մեք գինի խմինք չանկակեայ տօղտօքանով և հաճոյանայինք գինարբութեան ընկերներին, ինչպէս նա է առնում։

Ի՛պց եթէ Ձեր իշխանութեանը ծանր է այսօր Լատին ազգի (որ Ֆռանկք են) անօսր և լարակ սովորութիւնը թողուլ և չետ դառնալ դեպ ի հին Հայաստանի թանձրութիւնը և չկամիք ոչ հերքը ժողովել և ոչ մօրուքը երկայնացնել և ոչ զգեստները լայնացնել, ապա և մեղ աւելի ծանր է այն կատարեալ բարեկարգութիւնը, որ նոյանից օգտվել ենք սուրբ եկեղեցու փառքի համար, արհամարհել, Ձորագետի երկու աղուէսների սիրտը հաճեցնելու համար։ Պատճառ, մեք Հայոց եկեղեցիքը գտանք առանց քահանայական զգեստների, և նոյանից օրինակ առնլով, նորոգեցինք հին սովորութիւնը։ մեք գտանք, որ մեզանում երրորդ, վեցերորդ և իններորդ ժամը միասին էին կատա-

րում, և նոցանից քաջալերութիւն ստանալով, ամէն մի ժամատացութիւն իւր ժամանակին ենք կատարում այժմ, և եօթն անգամ օրի մէջ օրհնում ենք Աստուած։ Մենք գտանք, որ մեր վանքերից պակասել էր խաղաղական աղօթքը, և նոցա մէջ տեսանելով այդ բանը, հաստատեցինք և մեր մէջ, նախ ժողովվիլ եկեղեցու մէջ աղօթելու, և ապա գնալ հանգստանալ։ Գտանք, որ չունէին կրօնաւորների օրհնութիւն, այլ քահանայ չլինելով, տալիս էին միայն ձևը։ Բայց մենք հաւանելով յունական և լատինական կարգին, նախ օրհնում ենք կրօնաւոր, ապա սարկաւագ և քահանայ։ Մենք գտաք որ այդ եկեղեցիքը սահմանադրութեամբ ցուցանում էին ողորմութիւն դէպ ի աղքատքը և ոչ պատահմամբ միայն։ Նոյն բարի նախանձը նախանձելով մենք, Ձեր ողորմութենից, Տարսոնի եկեղեցումը սահմանել ենք ուրբաթ և չորեքշաբաթի օրերին երկու և երեք հարիւր աղքատի հաց ու բակլայ բաժանել։ Եթէ Աստուած տայ և հաճոյ լինի Ձեզ ևս, կ'առատացնենք այդ տուրքը։ Գտանք որ կրօնաւորք տարու կէս մասը ուտում էին միանգամ։ Նոյնը օրինագրեցինք և մեք։ Այժմ, այս բարի սովորութիւնքը, մի՛ թէ Տուտէորդուն հաճոյանալու համար, պիտոյ էր մեզ արհամարհել։ ապա թէ ոչ, լինելու ենք պիղծ, ինչպէս ինքն է, որ հանդարտէ նա։ կամ տգէտ, ինչպէս նա է, որի իմաստութեան չափը ճանաչվում իւր գրից ու խօսքից, որ և իմ ձեռնասուն աշակերտներից բուն յետինը ևս կարող չէ լինել։

Բայց եթէ սորանից յետոյ Աստուածայայտնութեան տօնի մասին յանդգնում դատել մեզ, վկայութիւնք բերելով Հայոց գրերից, և այդ մասին պատասխան տալ կարող ենք, վարժ և տեղեակ լինելով այդ ինդրին։ բայց ես կամք չունիմ երկարախօսութեամբ ձանձրացուցանել Ձեզ, այլ իմ ոսոխը որ հակառակ է վեր կենում, աստուածային ճշմարտութեամբ նոյն գրքերից և սուրբ հարց խօսքերից որ պատուեալ են և Հայերի մէջ, ոտքի տակ կը դնեմ։ Նմանապէս և երրորդ ամուսնութեան հրամանը, որ տուած ենք, միտ դնելով ներկայ ժամանակիս սակաւածնութեանը, կարող ենք հաւանելի կացուցանել կանոնական գրքերով և ազատել մեր անձը լեզուագարների թունից։ Նոյնպէս և այն մեր բոլոր ընթացքը որ նախանձաբեկներին և տգէտներին գայթողութեան պատճառ է, կարող ենք ցուցանել թէ համեմատ է սուրբ գրքի հետ և ոչ թէ ինքնահաճոյ ճանապարհի դիւտ։ սուրբ գիրքը թողուլ և մնոտի աւանդութիւնների հետևել կարող չենք, մի՛ գուցէ որ լսենք Քրիստոսից նախատինք, որ ասում։ «Թողեցիք Աստուծոյ պատուիրանը,ով կեղծաւորք, որ ձեր աւանդութիւնը պաշտէք»։ Բայց մենք սուրբ գրքի օրէնքը յաղթող ու կործանող ենք կացուցանում աւան-

գուԹեՆների վերայ և գայԹակղածՆերին Թոյլ ենք տալիս, Երկրորդելով նոցա վերայ Քրիստոսի խօսքը· ԹԷ կոյր են և կոյրերի առաջՆորդք, որ սխալվումն և ձգումն իւրեանց անձը մոլորուԹեան փոսի մէջ· բայց մեք Աորագետացոց նախանձողների համար չկամինք ընկղմել մեզ փոսի մէջ, այլ մեր իմաստուԹեան լոյսը Ձեր իշխանուԹեան աշտանակի վերայ բարձրացնելով լուսատու ենք կուրացածներին և գանչւմենք դէպ ի մեր և դէպ ի Քրիստոսի ճանապարհը· և նոցա լուսաւորուԹեան օգտի համար, Ձեր կամքովը, յօժարուԹեամբ և աներկիւղ գնալու ենք նոցա մէջ· և ինչ որ խօսումենք Ձեր ականջին, կարող ենք քարոզել նոցա առաջև տանիքների վերայ, չվախենալով նոցանից, որ սպանումեն մարմինը, բայց Հոգին կարող չեն, հաւատալով Աստուածուն ԹԷ կարող է քարերից յարուցանել Աբրահամու որդիքը, և ահա պատրաստ եմ այս Ձեր հրամանը կատարել։

Ապա ԹԷ սորան խափան լինելու է իմ ազգականների գուԹը և աշխարհի հեռաւորուԹիւնը, Թող Ձեր իշխանական հրամանով գան մեր առաջև, Հանդէս մնանելու մեր հետ· պատճառ, վնասուորի քաջուԹիւն չէ այգ, իւր ապարանքի մէջ Թուր շողացուցանել և զարկել օդը, այլ որ աստարէղի մէջ կ՝ երևի և Հակառակորդի Հանդէպ կանգնած է։ Նմանապէս իմայի՛ր, որ ուղիղ չէ այն Հոգևոր պատերազմը, որ վարումէ նա որ Ձորագետումը նստելով, Սիլիկիայի մէջ բամբասումէ Թշնամաբար· Թող գան այս Հանդէսի տեղս, վերք Հասուցանեն և վերք ստանան, և ով որ յաղԹող կը լինի Քրիստոսի ճշմարտուԹեամբը, ընդունէ գովուԹիւնը։ Նոքա գրած են ինձ երկու, երեք ԹուղԹ որպէս նախատինք, ես մի ամբողջ գիրք եմ՝ շարադրել Հայոց ազգի անկարգուԹիւնների վերայ, որ յետոյ ժամանակում՝ ներս են մտել· Համեմատենք միմեանց Հետ իմ և նոցա բանքը, և տեսանենք ԹԷ ով աւելի զօրաւոր էր ճշմարտուԹեան մէջ և որի՝ բանքը Համաձայն էին սուրբ գրքի Հետ, իմը ԹԷ նոցանը։ Ապա ԹԷ չկամիք մարդ ուղարկել այն տեղ և կոչել նորանց այս Հանդէսի տեղս, Թոյլ տուէք և մեզ մեր բարեկարգուԹեամբս մեալ Աստուծոյ առաջև, և մեք կը տանենք նոցա բամբասանքին և շատխօսուԹեանը ինչպէս մանուկների շաղակրատանքի· այլև կ՝աղօԹենք, որ Աստուծոյ շնորհովը դան նոքա դէպ ի ուղղուԹիւն։ Եւ եԹէ Դուք մտածումէք այնպէս վարվիլ, ինչպէս այն գիշերային աստուածապաշտ Նիկոդիմոսը կամ ԹԷ այն իշխանքը որ Հաւատացին դէպ ի Քրիստոս, բայց ոչ յայտնեցին, որ դուրս չգան ժողովրդի կարգից, աւելի սիրելով մարդկերի, քան ԹԷ Աստուծոյ փառքը, ապա կ՝ աղօԹենք առ Աստուած ՆերողուԹեամբ ընդունել և տալ Ձեզ ժամանակ յառաջանալու շնորհի մէջ, որ և Ձեր մէջ լուսաւորվի ճշմարտուԹիւնը և Ձեզ-

նով բոլոր եկեղեցիների մէջ, որ ուղղութեան ու ճշմարտութեան մէջ դաստիարակելով, վարձ կը ստանաք այն բարեպաշտ թագաւորների հետ, Դաւիթ և Ցովսիայի, Կոստանդիանոսի և Տրդատի հետ որ իւրեանց ժամանակներում ուղղիչք են եղել աստուածպաշտութեանը և ժողովրդին, և նոցա հետ որ դոցա իշխանութեան օրերում ուսուցիչք են եղած, որոնց գրուածներին, որ ժողոված կան սուրբ մատեանների մէջ, կարող ե Ձեր պարեպաշտութիւնը պարապ գտանելով և ընթերցողներին ունկնդիր լինելով վերահասու լինել և բարի նախանձ նախանձել և հանել այն տեղից պատուականը անարգի միջից և այդպէս Աստուծոյ բերան կոչվիլ։ Սոցա գործերը լսելով կ՝ իմանաս, որ դոքա չեն եղած աւանդապահք (առանձնահատկութիւն պահպանողք), այլ օրինապահք, ինչպէս Ցովսիա, որ օրէնքը գտաւ թագուցած, և աւանդութիւնը ջնջած։ Եւ առաւ (քեղկիաս քահանան) Մովսէսի օրինագիրքը, պատառեց իւր պատմուճանը, ըստ որում անարգված էր դա, և վերստին հաստատեց մովսիսական օրէնքը Իսրայէլի մէջ, և այս պատճառով յիշատակվումէ նա երանելի մարդերի կարգում։ Այս բանումը թող ջնջացուցանէ Ձեզ Աստուած այս մեր պանդուխտ ժողովի և ազգի մէջ։ Փութացէք հաճոյ լինել Աստուծոյ և ոչ մարդերի։ Աստուած թող ընդունէ Ձեզ իւր փառքին հաղորդ, բոլոր սուրբերի հետ միասին յաւիտենական կեանքի մէջ։ և Նորան փառք յաւիտեանս։ ամէն։

Ս։ Նալբեանց։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ԿԱՄՍ ԷՄՄԱՆՈՒԷԼԻ ՕՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԹԵՐԹԵՐԻՑ։

$^{18}/_{30}$ Յունիսի 1859, Հօմբուրգ, Հեսսեն — Հօմբուրգեան կոմսութեան Նոր մայրաքաղաքը։

Յիշատակարանի խօսակցութիւնքը. — Շահբեգի նամակը. — Թիֆլիզցու առաջնորդի Հանապարհորդութեան երկրորդ հատորը. — Փարիզեան ազգային գպրոցը. — Հրեշտակն Հայաստանի նոր օրագիրը. — Մուրադեան վարժարանի աղօթքը։

Ընդ օրից, երբ գրեցի երկրորդ Յիշատակարանիս վերջին տողերը (Հիւսիսատ. փետր. 1859), որքան ժամանակ անցաւ և այդքան ժամանակում որքան երես դատարկ մնաց Յիշատակարանումս։

«Ո՛վ Յիշատակարան, դու, իմ առաջին և վերջին միսիթարութիւն, արդարամիտ և բարեգործ մարդերի սիրելի, իսկ հիւանդամիտների և չարագործների մահու չափ ատելի, դեպ ի քեզ եմ դառնում և խնդրում եմ քո մեծահոգի ներողամտութիւնը, որ ինձ ևս չձգես քո մէջ, և, առանց վերահասու լինելու իմ դրութեանը, ծուլութեան դրոշմ չդնես իմ վերայ։ Ես քո համար երբէք ծուլացած չեմ. մի՛ թէ մոռացար, որ քո մի հատուածը (տպած Հիւսիսատ. Յուլիս. 1858) գրեցի մի ամարանոցում, ուր մի քանի բարեկամով գնացել էինք օդ վայելելու։ Գնացի՞ ես նոցա հետ մեն գալու և բնութեան գեղեցիկ տեսարանքը վայելելու. ես չէի՞, որ այն ջերմ եղանակում, ծառի տակ, մի փայտեայ, շինականի աթոռի վերայ նստած լցնում էի քո էջերը։ Շատ հեռի հարկաւոր չէ գնալ, քո վերջին հատուածը չգրեցի՞, մինչ գնում էի շոգեշարժ կառքով . . . . . եթէ մտածում ես, թէ կոմս Էմմանուէլը երբ և իցէ կարող էր սառիլ քեզանից, շատ սխալվում ես»։

— Ի՞նչ պատճառով դու այդպէս սիրումես ինձ, — հարցանումէ Ցիշատակարանը։

«Նորա համար, որ լուվանդակումես քո մէջ, ամեն մի հայ մարդու սրտի և հոգու մօտ բաներ, ինդիրներ, որ յարակցութիւն և ազգեցութիւն ունէին մեր ազգի կեանքի վերայ»։

— Իմ համար ասումեն, թէ շատ բաներ ունիմ առակի ձևերով, և թէ իմ լուվանդակած բաների մասին նախընթաց տեղեկութիւն չունեցողը, կը դժուարանայ շատ անգամ հասկանալ բանի ղօրութիւնը։ Ճշմարի՞տ է այս։ Ճշմարի՞տ է, որ ասումեն, թէ ես ներկարարի կարաս ունիմ և թէ կենդանիք որ ընկել էին այդ կարասի մէջ, երևումեն այնուհետև հասարակութեանը ներկված և դժուարաճանաչելի բրդով։

«Այո, կայ այդ բանի մէջ ճշմարտութիւն։ բայց դու զուգահեռաբար յառաջ գնալով ազգի կեանքի հետ, ամենայն առողջամտութեամբ հարկադրված ես այդպէս ընթանալ։ Ճշմարտութիւնը, աւելի շուտով ըմբռնելի է լինում անդաստիարակ և ասիայի ազգերին։ այդ միաս չունի, միայն դու յառաջ գնա։ Կը գայ օր, կը ծագէ և քո համար այն արշալոյսը, երբ քո ընթերցողքը կարող կը լինին նայել եգիպտական աստուածուհու երեսը, առանց քօղով ծածկելու նորան։

— Այդ երբ է լինելու։

«Ինձ չէ տուած գիտենալ ժամը և ժամանակը։ ինձ տուած է միայն գուշակել·····

— Դու մարգարէ՞ ես, ինչ ես, որ գուշակումես։

«Ո՛չ, ես մարգարէ չեմ և իմ ապագայի մասին գուշակութիւնը հիմնվում անցած և ներկայ իրողութիւնների և հանգամանքների վերայ»։

Ահա այսպէս։ այնքան ձեռնհաս չեղայ յառաջ վարել Ցիշատակարանս, մինչև որ հանդիպեցայ նորա մեղադրութեանը։

Զարմանալին այս է, որ Բեզլաձէն ևս ձանձրացել է Ցիշատակարանիս չերևելուց։

Երկար և անդադար ճանապարհորդութիւնքը Եւրոպայում, ամսօրնայ ժամանակով գնգերվիլը հանքային ջրերում, տկարութեան կատաղաբար զայրանալը և սորանից պատճառված աննկարագրելի ֆիզիկական թուլութիւնը համարեա թէ զրկել էին ինձ կարողութիւնից գրիչ ձեռը վեր առնուլ։ Միւս կողմից բիւր նորանոր տպաւորութիւնք պատևրալմ բանալով ուղեղիս մէջ աշխատուվին իւրաքանչիւրքը առաջին տեղը բռնել Ցիշատակարանումս։ բայց ես թոյնուվեմ նորանց, մինչև որ մի փոքր նստի նոցա ջերմութիւնը, որպէս զի սառն աչքով

կարողանամ նկատել նորանց. մանաւանդ որ այդ բաները Համարեա թէ յարակցութիւն չունին իմ նուիրական ազգային խնդիրների հետ. Ի՛նչ օգուտ ինձ Լոնդոնի հսկայական կերպարանքից, ի՛նչ օգուտ Փարիզի փառաւոր և զեղեց դէմքից, Բեռլինի և Գերմանիայի մտածող և փիլիսոփայական պատկերից, մինչ նոցա հետ միասին աչքիս առաջև են գալիս աւերակ Հայաստանը, ցիրուցան ժողովուրդը, անգաստիարակ և նիւթապաշտութեան հոգով գործականապէս տաշված ազգի զաւակները, անխորհուրդ և տղայական փառասիրութեամբ հիւանդ, միակողմանի, ուսումնական անուանված պարոնները, որ Թիթեռնակի պէս թռթռուքն ճրագի չոր կողմով, երբ սա երևումէր Հայկական Թանձր խաւարով պատած խոնաւ գետնափորի մէջ.....

Ումն մի զուարճալի տեսարան, ամեն մի կրթված ու բարեկարգ ազգ պատճառումէր իմ մէջ մի տրտում մտածութիւն, որ սիրելի չէ Հայերին, ըստ որում ծանր բան է անձնաքննութիւնը.....մտածութիւն, գարձեալ մտածութիւն, անվերջ մտածութիւն.....

Այս և այն տեղից ստացած նամակներս ընկած են ցիր ու ցան, որոնց շատերը մինչև այսօր անպատասխանի, որովհետև չկար գրելու Համար հարկաւոր ոյժ։

Զանձրոյթը միւս կողմից, խեղդումէր. չկար մի մարդ, որ մօտ լինէր սրտիս, որի հետ ունենայի մի հասարակաց գաղափար։ Շատ պատահեցայ գեղեցիկ և պատուական հոգու տէր մարդերի որոնք գարձան ինձ շատ լաւ ծանօթք, բայց նոքա պարապումէին կամ իւրեանց ազգային գործերով կամ ընդհանուր մարդկութեան գործերով։ Օրերը և շաբաթները վազումէին ջրի պէս, բայց և ոչ մի խօսք այն բաների Համար, որոնց մասին խօսելու ծարաւը խեղդումէր ինձ. խօսք, որ մօտ էր իմ սրտին և հոգուն, որ վաղուց արդէն գարձել էր իմ կեանքը, իմ հոգին, իմ արիւնը և ուղեղը։

Վերջապես բարոյական ոյժը յաղթահարեց ֆիզիկական թուլութիւնը, զօրացուց իմ ջղերը և ահա ձեռքիս մատերը կարողանումեն գրիչ սեղմել իւրեանց մէջ։

Պատարեցաւ կարմրագոյն և ջերմ հեղանիւթի շատրուանը, որ այնպիսի յօրգութեամբ դուրս էր գարկում թոքերիցս. և ես սկսեցի աղատ շունչ առնուլ։

Ո՞ւտ գրիչ, թանաք, թուղթ, և ահա Պ. Շահրէգի նամակով բացումեմ Ցիշատակարանիս դուռը։

$^{16}/_{28}$ Մայիսի 1859, Բեդուտ-կալէ։

«ՊԱՏՈՒԱԿԱՆ ԵՂԲԱՑՐՍ

ԿՈՄՍ ԷՄՄԱՆՈՒԷԼ»

«Լեռլինից, Ապրիլի 12 ից գրած նամակդ, որով Քրիստոսի յա-«րութիւնը շնորհաւորելուց յետոյ պատմուածքիր ինձ քո ճանապար-«հորդութեան տխուր պատճառը, ստացայ ամսուս 14 ին, և ահա գրու-«մեմ պատասխանը, առանց գիտելու թէ ուր էիր այժմ, միմիայն յու-«սալով վ. Խաչատէնի Բոստուն անունով բժշկի շնորհի վերայ, որին «ուղարկումեմ այս նամակը քեզ հասուցանելու համար, աշխարհի մո-«ռացված ծայրից, մի խուլ տեղից, ինչպես է Բեդուտ-կալէն։ Վաղուց «լուր չունէի քեզանից, վաղուց կամէի գրել քեզ, բայց ուր և ինչպէս, «այս բանը փակումէր ճանապարհս։ այժմ քո նամակը յայտնեց ինձ «հաղորդակցութեան հնարը և դու կարող ես մի քանի ձայներ լսել «մեր կողմից։

«Ջկամիմ նամակս սկսանել նորանով, թէ ողջ և առողջ էի։ մաշ-«ված ձև է, և նամակը բաւական է գրողի կենդանութիւնը ապացու-«յանելու համար։ Ջկամիմ դարձեալ մէջ բերել իմ առ ու տրական «գործերիս ընթացքը, որովհետև նոքա ոչինչ յարակցութիւն չունին «այն բանի հետ, որ վաղուց սրբացած է իմ և քո համար։

«Ակսանումեմ նորանից, որ այս օրերումն ձեռքս հասաւ Թիֆլիզի «առաջնորդի ճանապարհորդութեան երկրորդ հատորը, տպած Թիֆլի-«զում, 1858 ին։

«Նորա առաջին հատորը տեսած ես։ ուստի աւելորդ է տեղեկու-«թիւն տալ քեզ նորա մասին, թէև նորա սրբագրութեան պատմու-«թիւնը բաւական ծիծաղաշարժ բան է, մանաւանդ նորանով, որ «սրբագրութեամբ ես չէ մաքրուել սխալներից։ կամ բնագիրը մինչև «այն աստիճան աղճատ էր, որ օրինաւոր սրբագրութիւնը նորից գրելու «աշխատութեան հետ հաւասար լինելով, թեթև աչքով և առանց «կատարեալ ուշադրութեան նայել է սրբագրողը, կամ սա ես արժա-«նի հեղինակին արժանի սրբագրող է եղած։ ինչ և իցէ։ Այս երկրորդ «հատորը, որ անտարակոյս տեսած չես, հարկադրումէ մի քանի բառ «խօսել, մինչև որ դու ինքդ տեսանես և դրես մի օրինաւոր քննու-«թիւն։ [1])

---

[1]) Այնքան գրելիք կան, այնքան խօսելիք կան, որ ժամանակ կորուսանել մի այդ-պիսի գիրք քննելով, ամենևին կամք չունիմ։ յայտնումեմ հրապարակով։

Ծան. կոմս Էմման.

«Ընելորդ է մի խօսք ևս ասել տպագրութեան անպիտանութեան «մասին։ Թիֆլիզը, որ այս օր Ռուսսիայի առաջնակարգ քաղաքներից «մինն է, դեռ ևս տպում է այնպէս, ինչպէս Գուդդենբերգը իւրաձեռ «տպագրութիւնը առաջին անգամ, կամ, գուցէ, աւելի տգեղ։ Բայց «այս նոր բան չէ. ինչպէս մինչև այսօր Թիֆլիզում տպուած գրքերը, «նոյնպէս և պատուելի Մեղուի տպագրութիւնը կարող են ստուգել «ասածս։

«Բաղ քաջ յայտնի լինելով, թէ մինչև որ տեղ տարածվում էր «հեղինակի գիտութիւնը ոչ միայն մարդկային ընդհանուր, այլև հայ- «կական լեզուի մէջ, զարմանալու չէս ի հարկէ, եթէ ասեմ, թէ այդ «բաւական հաստատուն գիրքը շատ սխալներ։

«Այն տեղ, որքան կամիս, կարելի է գտանել ոճերի սխալ, հայ- «կաբանութեան սխալ, բառերի գործադրութեան սխալ և վերջապէս «ուղղախօսութեան և քերականական սխալ։ Լեզուն բաւական մօտ է «միջին դարերի վերջերում գրված հայկական գրքերին, երբ որ հայոց «լեզուն սկսանում էր ընկնել այն մեծ քնի մէջ, որ պիտի ընդհատվէր Մե- «բաստացի Մխիթարի ձեռքով։ Մի քանի բան եթէ այլապէս է գրված, «ուրեմն ոչ բուն հայաբար, այլ օտարի հետևելով, որպէս «ի հետե- «ւումն հրամանի» և այլն։

«Հատանակ չունէի բոլոր գիրքը կարդալու. մօտ իբր 60 երես «կարդացի շարունակ, մնացածը տեղ տեղ, ինչպէս պատահեցաւ։ Բայց «ինչ որ կարդացի, կարդացի կատարեալ ուշադրութեամբ, այնպէս, որ «կարող եմ մաքուր խղճմտանքով յայտնել իմ կարծիքը։

«Գրքի բովանդակութիւնը և քնաւորութիւնը նոյն է, ինչ որ առա- «ջին հատորի, ժողով մակագրերի, որ կարելի է ասել, միմիայն ան- «սխալ մասն է այդ աշխատութեան, ըստ որում հեղինակը ոչինչ չէ «յաւելացուցել իւրեանից։ Բայց այն տեղերում, ուր հեղինակը իւր «գտած արձանագրութիւնքը և մակագիրքը մէջ բերելուց յետոյ ըս- «կսանում ծանօթութիւն տալ որ և իցէ տեղի կամ քաղաքի պատմա- «կան, տեղագրական և բնական մասների վերայ, կամեցել է աւելի «որոշ ցոյց տալ իւր անկախութիւնը, և այն բանի մէջ է նորա առաջին «և գլխաւոր սխալը։

«Չէ կարելի առանց ծիծաղելու կարդալ, մինչ յարգի հեղինակը «իւր կցկտուր յիշատակարանքը, որ բոլորովին խորհուրդ չունին պատ- «մութեան համար, շփոթում պատմական հնախօսութեան հետ. երևի «մտածում, թէ իւր գործը պատկանում հնախօսութեան։ Այդ կող-

«մից հեշտութեամբ կարելի է հանդստացնել նորան, որ ոչինչ յարա-
«կցութիւն չկայ իւր աշխատութեան և պատմական հնախօսութեան
«մէջ, որ մի քար գտանելով, ոչ եթէ ողբութեամբ յիշելով շինուածքի
«ամբողջութիւնը, որի կաղմուածքը պատկանութեամբ գտած քարը, այլ
«քննելով նորա վերայի և անշարժելի գծերը, մեկնութեամբ այդ ժամա-
«նակի ճարտարագիտութեան և գեղեցկագիտութեան հոգին և այլն։

«Նոյց արդյ հեղինակը, ամենևին ուշ չդարձուցանելով այս
«բանների վերայ, չտեսանելով իւր աշխատութեան թուլութիւնը, գնո
«նուիրաբերութեան մէջ գրքի ճակատում գրում «զի եթէ ի սակա-
«ւատու հնամաշ գրամոց և ի կեղակարծ նոցունց գրոշմատիպ պատ-
«կերաց իմաստունք շահս մեծ քաղեն ի լոյս աղօտալոյս մնաց պատ-
«մութեան, ապա ո՞րքան աւելի և առատաձեռն նիւթ մատակարարեսցի
«մերոյ պատմութեան, եթէ ոք աշխատութիւն յանձն առեալ անգուլ
«հետամուտ եղիցի ամենայն հանգամանօք ուշադրութեամբ անցուցա-
«նել ի գիր զամենայն գեղ կանգուն շինուածս նախնեաց և զաւերակս
«տաճարաց, վանօրէից, քաղաքաց, շինից, աւրոցաց, կամրջաց,
«բրգանց, աշտարակաց և նմանեաց»։

«Ընդ որ հուրդ և սերտած բառեր, որ շարել է միմեանց քամակից.
«մինը հարցանէ թէ Հայոց պատմութեան ո՞ր խնդիրը պիտի պարզէր այդ
«բուրգերի մակագիրը կամ ովքե՞ն քանի պատարագ տրվելու յիշատակա-
«րանը։ Հայոց պատմութեան թերութիւնքը գտանվել են նորա կեանքի
«մէջ և պատմութեան բաց մնացած երեսները, ուր պիտի գրվէին աղգի
«ընտանեկան կեանքը, թագաւորների, նախարարների ընտանեկան կեան-
«քերը, պարզվելու չեն երբէք իմանալով թէ ով որքան գեղին կամ
«կալուածք ընծայել է այս կամ այն վանքին և թէ վանքերի միաբանքը
«քանի՞ պատարագ խոստացել են նորան։

«Հնախօսութիւնը մի առանձին և հոյակապ գիտութիւն է. և հնա-
«խօս լինել կարող է միայն այն մարդը, որ քաջ տեղեակ էր ընդհա-
«նուր պատմութեան, ընդհանուր օրէնսգիտութեան, հին և նոր քաղա-
«քան աշխարհագրութեան։ Գաւառներ և աշխարհներ ստորագրող
«մարդը բաց ի այս գիտութիւններից պիտի քաջ ուսած լինի բոլոր բնա-
«կան գիտութիւնքը, բնական և մաթեմաթիկական աշխարհագրու-
«թիւն։ Նա իւր նկատողութիւնքը պիտի արձանագրէ, ծանրաչափը,
«չերմաչափը և եղեքտրաչափը ձեռքին, ամենայն բոլէ փորձելով և
«ընտելով։ Ա՛յս ասածներից և ոչ մինը օդնական և ձեռնտու չլինելով
«մեր կարգացած գրքի հեղինակին, հարկաւ նորա աշխատութիւնը
«պիտի նմաներ մի առասպելի, որ մի պառաւ կարող էր պատմել իւր

«Թոռներին ձմեռնային երկար երեկոներուն, առանց փաստերի և «ապացոյցների, միմիայն կոյր հաւատ պահանջելով լսողների կողմից։

«Նւ մի՞ թէ սորանից աւելի է այն առաստղը, որ հեղինակը տա-«լիս է ազգին հաւարեա՛ թէ հալած իւղի տելը, պատմելով թէ Մոն-«գոլները, երաշտութեան ժամանակ, եթէ կամենան, կարող են ան-«ձրև բերել։ Հեղինակը վկայ է բերում այս բնութեան ընդդէմ գործին «իւր ղղլարեցի Հայ Թարգմանը և այլ արժանաւոր անձինք։ Թող բիւր «անկիրթ և անգաստիարակ մարդիկ վկայեն, բայց մի օրինաւոր մարդու «անվայել է այդպիսի անալի և անհամ սուտեր ոչ թէ տպագրութե-«ամբ հրատարակել, այլև բերանից անգամ հանել։ Ահա հեղինակի «բուն խօսքերը։ (տես երես 438) Մերկանան ղհանդերձս իւրեանց և «սպիտակ կտաւ արկեալ զանձամբ կանգնին յերկը միոյ վտակի, այնու-«հետև ի գուռս անկանին և բարձրանան և աղօթեն։ ապա յետ կիսոյ «կամ միոյ ժամու արշաւեն ի բարձունս ի չորից կողմանց սևաթոյր «ամպք, ղօրէն զօրաց հապ ձեպ ժողովելոց, և սկսանի տեղալ յորդահոս «անձրև»։

«Ազգերի և ժողովրդների բարոյական կեանքի վերայ արած նկատո-«ղութիւնքը ևս ուղիղ չեն։ պատճառ, այդ բանների աղբիւրը ամենայն «խնամով պիտոյ է որոնել ազգային կեանքի հետ յարակից հանգամանք-«ների մէջ։ Պահարակել մի սովորութիւն, որպէս ազգային սխալ, իրա-«ւունք չէ, եթէ այդ սովորութիւնը մտել է ազգի մէջ օտարից, որի հետ «կենակից էր մեր ազգը, կամ որի կապանքի տակ գտանվելուն ճնշված «և՛ բարոյապէս և քաղաքականապէս։ Այդպիսի սովորութիւնքը որ-«պէս ընդհանրապէս վնասակար, կարելի է միայն խայտառակել, բայց «ոչ որպէս մի սխալ, որ երևել էր որպէս հետևանք ազգի սեպհական «կեանքի և արիւնի։

«Այսպիսի անտեղի ղրպարտութիւն մեր Աստրախանեցի Հայերի «վերայ դրած նշմարութիւնք հեղինակի կողմից, կարդալով հետևեալ «տողերը։ (տես երես 443) «Մինն ի գլխաւոր շահայութեանց է անօա-«նակալան տօնախմբութիւնն, զոր մեծաձախ կատարեն յամի ամի, նուի-«րելով և հոգևորականաց զառատ աջահամբոյր։ ես բաղձից ջանացայ «ի խափանել զայն վնասակար սովորութիւն և կարէի ի սպառ խափա-«նել, եթէ ներգործութիւն իմ լինէր ձեռնտու առաջնորդաց։ Սերտրե «Արքեպիսկոպոսն կամեցաւ էր խափանել զայն սովորութիւն, բայց «վերջացեալ էր յիւրոց նպատակաց, ըստ որում՝ կատարեալ է ինքն «յամի ամի զիւր տօնախմբութիւն, շարունակ կարգաւ ստանալով ի ժո-«ղովրդոց զառատ աջահամբոյրս, ուստի լոկ հրաման նորա առանց օրի-«նակի եղեալ է անպտուղ»։

«Ա՛յս տեղ բամբասվումէ Սերոբէ Արքեպիսկոպոսը, որպէս թէ նա
«միայն էր Հայոց հոգեւորների մէջ, այսպէս ընթացող· ինքը հեղինակը
«ևս ուրիշ դաղափար չէ թողել մեզ իւր ընթացքով զանազան հա-
«յաբնակ տեղերում, ուր և մեք պատահած ենք երբեմն երբեմն····
«բանը միայն տօն կատարելու վերայ չէ····և այդ յանցանքի կար-
«դում չէ որ և իցէ վիճակից մարդու համար։ Սովորութեան չհաւան-
«վելու պատճառ բերվումէ Սերոբէն· ինձ թվումէ, որ արդոյ հեղի-
«նակը նառնաւինդորումէ բանների ժամանակը։ Երբ հեղինակը, լսա-
«ցեալ իրաւունքներով, քննչի պաշտօնով գտանվումէր Աստրախան,
«Սերոբէն վախճանած էր արդէն։ Եւ չգիտենք, թէ ո՛ր առաջնորդին է
«վերաբերում, որ ընդդիմութիւն է ցոյց տուել, կամ թէ գոնեայ որին
«ձեռնտու չէ եղել յարդի հեղինակի չանապրութիւնը խափանելու տօն
«կատարելը Աստրախանում։ Այն ժամանակ, ինչքան ևս յիշումէ,
«առաջնորդ չունէր Աստրախանը, պաշտօնը վարումէր Բարսեղ եպիսկո-
«պոսը Տէր Մարտիրոսեան, որ և շուտով ղրկվեցաւ իւր պաշտօնից հե-
«ղինակի առաջարկութեամբ և գնաց Էջմիածին։ Ո՛հ, ի՛նչքան նիւթեր
«մեր ժամանակակից պատմութեան համար։ Կոմս, յոյս ունիմ, որ կը
«գայ մի օր, երբ այդ բոլորը կ'երևին յիշատակարանիդ մէջ սպիտակի
«վերայ սեւով դրոշմած։

«Հեղինակի անփորձութիւնը բնագիտութեան մէջ շատ պարզ
«երևումէ, մինչ խօսելով Քաքուի հրաբուղխների մասին (տես երես
«407) համարումէ, թէ մի ծծմբային օդ է վառվողը, կարծելով թէ
«ամենայն օդ, որ վառվումէ, հարկաւ պիտի ծծումբ ունենայ իւր մէջ·
«ինքը արդոյ հեղինակը վկայումէ, թէ հրաբուղխների մօտակայ տե-
«ղերում կան նաւթի հանքեր· եթէ փորը ի շատե ծանօթ լինէին
«նորան հանքարանութիւնը և քիմիան, այն ժամանակ, գուցէ առանց
«փորձի, անալոգիայով միայն կարող էր իմանալ, որ այդ վառվող օդը
«է ածխային բաղադրութիւն, որպիսի գալով լուսաւորվումեն այժմ
«եւրոպական քաղաքները։ Հեղինակից ծծմբային օդ կարծածը նաւթի
«շոգիք են, իսկ նաւթը պատկանումէ ածխային մարմիններին։ Քարեայ
«ածուխը, որ բաւական խոր էր ընկած գետնի կեղևապատի մէջ, և հե-
«տևաբար ենթարկված է աւելի բարձրաստիճան ջերմութեան, լուծան-
«վումէ դէպ ի զանազան բաղադրութիւնը, որոնցից մինը է նաւթը։ Սա,
«իւր բաժանված տեղից բարձրանումէ որպէս շոգի, և պատահելով
«ջրերի (ուրեմն աւելի ցած աստիճանի ջերմութեան, որովհետև աւելի
«մօտ է երկրի մակերևութին) ընական օրէնքներով ստանումէ հեղուկ
«յատկութիւն և մանաւոր կշռով (удѣльнымъ вѣсомъ) թեթև լինելով
«քան թէ ջուրը, հաւաքվումէ ջրերի երեսին, որից յառաջանումեն

«նաւթի հորերը և լճերը։ Բայց այն շոգիքը, որ ճանապարհ ստացել
«էին դէպ ի երկրի մակերևոյթը մի վուլկանական ճեղքուածքի միջով,
«չհանդիպելով ջրի կամ մի աւելի սառն շրջակայքի, հասանումեն դէպ
«ի վեր շոգու յատկութեամբ, և հերիք է մի լուցկի մօտեցնել այդ
«շոգուն, որ պայծառ վառվէր։ Իսկ թէ այդ շոգիքը հաւաքվէին մի
«անօթի մէջ, որ դրվեր աւելի քան ջերմութեամբ շրջակայքում, նոյն
«այդ անօթը շրջապատող օդը աւելի ճնշէր այդ անօթը, քան թէ նո-
«րա մէջ գտանված օդի ձգական ոյժը, այն ժամանակ, անտարակոյս,
«շոգին կը լուծանվէր դարձեալ դէպ ի հեղուկ մարմին—նաւթ։ Այս
«հատուած ծանօթագրութիւնը աւելորդ չեմ համարում ես, հաւա-
«տացնելու համար արդյ հեղինակին, թէ ոչ ամենայն բան ծծումբ է,
«որ վառվում, մանաւանդ այն մեհենների միջի վառվածը։ Արդեօք դի-
«տէ՞ արդյ հեղինակը (ինչ տեղից պիտի իմանայ) թէ ծծումբը վառ-
«վելու ժամանակ խլելով օդից երկու չափ թթուածին, բաղկացնում
«ծծմբաթթու (SO_3 сѣрнистая кислота,) որ սաստիկ վնասակար լինե-
«լով շնչառութեան, կարող է խեղդամահ սպանել և քուրմերը և ու-
«տաւորքը։

«Հեղինակը շատ տեղ օդերի մասին ես յայտնում իւր կարծիքը,
«երբեմն լաւ, երբեմն վատ և վնասաբեր ասելով այս կամ այն տեղի
«օդը։ Այդպես կարելի չէ օդ քննել և այդպիսի անհիմն խօսքերը ոչինչ
«պին և արժէք չունին դիտութեան մէջ, որ պահանջում փորձական
«ստուգագործութիւն։ Օդի օգտակարութիւնը և վնասակարութիւնը
«քննվում և սահմանվում նախ և յառաջ, տարու զանազան եղանակ-
«ների մէջ քանի օրերով ծանրաչափի և ջերմաչափի գործադրութ-
«եամբ, որպէս զի կարելի լինի սահմանել օդի ճնշողութեան և ջեր-
«մութեան ընդհանուր և միջակ թիւը։ Երկրորդ, ելևքարաչափով քնն-
«նվով օդի ելևքարականութեան չափը կամ որպիսութիւնը, որ մեծ
«աղդեցութիւն ունենալով ջերի վերայ, հետևաբար մեծ խորհուրդ
«ունի մարմնի շնչական կեանքի վերայ, յատկապես ներգործելով շնչա-
«ռութեան վերայ և թոքերի միջնորդութեամբ յարակցութիւն ունե-
«նալով նոյն իսկ արիւնի հետ, որ է աղբիւր կենդանութեան։ Երրորդ,
«քիմիաբար լուծանելով օդը, հասկանալու համար, թէ ինչ գաղերից
«էին բաղկացած, արդեօք բնական կերպով աղտից և թթուածնից, և
«սոցա յարաբերութիւնը էր որպէս 21։ 79, թէ պլապէս, կամ թէ կա-
«յին ուրիշ գաղանման մարմիններ։ Արդեօք դիտե՞ արդյ հեղինակը,
«որ թէ 100 չափ օդի մէջ աւելի լինի թթուածինը քան թէ 21,
«նոյնպէս վնասակար էր առողջութեան, չափազանց միանալով ածխա-
«ծինը արիւնի հետ, որպէս և պակաս լինելով և թոշնելով չայրված

«ածխածին արիւնի մէջ, դորանից պիտի յառաջանար արեան թանձրու-
«թիւն, շնչառութեան ստիպանք և կարճութիւն։ Զորրորդ, քննվում
«օդը, քննելով մի որոշած տեղի շրջակայքը և նոցա յատկութիւնքը
«և որակութիւնքը, որ անմիջապես ազդեցութիւն ունէին օդի վերայ.
«ղոր օրինակ անտառները, լուսականքը, լիճերը, ճահիճները և առ հա-
«սարակ այն բաները, որոնցից ենթադրվում էր թէ լինում շատ ար-
«տաշնչութիւն, քիմիաբար լուծանելով այդ արտաշնչութիւնքը և
«քննելով նորա բաղկացական տարերքը։

«Այ մարդ, որ չգիտէր ֆիզիօլոգիա, որ չգիտէր թէ ի՛նչ պաշտօն
«ունի կատարելու օդը մեր շնչական կեանքի յարատևութեան մէջ,
«այն վերոգրեալ բոլոր բաները ևս օրինաւոր քննելով, չէ կարող
«սահմանել օդի օգտակարութիւնը և վնասակարութիւնը դրականապէս։
«Հարկաւոր է, որ այդ մարդը իմանայ յառաջուց, թէ ինչ տեսակ օդ
«ինչ բաղադրութեամբ և ինչ չափով տարերքի հարկաւոր էր, առողջ
«մարմնի առողջութիւնը շարունակ պահելու համար, որպէս զի իւր
«կատարած փորձերի արդիւնքը համեմատելով այս գաղափարի հետ,
«կարողանայ դատել և վճռել օդի վնասակարութիւնը կամ օգտակա-
«րութիւնը։

«Հեղինակը, իւր գործի մէջ նոր ապացոյց է տալիս մեղ իւր ան-
«սահման իրաւունքներին, որից օգուտ էր քաղում։ Խօսելով Նոր-Նա-
«խիջևանի վերայ, խօսելով եկեղեցիներում գտանված գրչագիրների
«մասին, ասում. (տես երես 460) «Ի բազմաթիւ աւետարանաց գմինն
«առի ընդ ես, ըստ որում արտագրեալ էր յիսկական ձեռագրէ Սրբոյն
«Սահակայ մերոյ Թարգմանչի»։ Սուրբ Սահակի ձեռագրից օրինակված
«լինելը արդարութիւն և իրաւունք է համարվել, որ բոլորովին, մի
«այլ վիճակի եկեղեցու գոյք սեպհականվի հեղինակին։ Եթէ հեղի-
«նակը ժառանգական աղգակցութիւն ևս ունենար Սուրբ Սահակի հետ,
այնու ամենայնիւ այդ գրչագիրը չէր պատկանում նորան, ըստ որում
«ուրիշի աշխատութեամբ էր օրինակված, ուր մնայ որ հեղինակի և
«Սուրբ Սահակի մէջ կան 1400 տարի, արևելք ու արևմուտք, երկինք ու
«երկիր, տար ու ձոր.... Այս նորանշան իրաւունքի օրինակը չենք
«տեսանում ոչ մի ներկայ տէրութեան օրինադրութիւնների մէջ, և
«ոչ իսկ Հռովմէական օրէնսդրութեան մէջ։ Հարցասիրութեան արժա-
«նի մի խնդիր է այս, ուստի պիտի խնդրեմ եւրոպական իրաւաբան-
«ներից, որ տեղեկութիւն տան ինձ մի այսպիսի մարդկային օրէնքի մա-
«սին, թէ դիտեն։

«Նշանաւոր և միանգամայն անխորհուրդ բաներ շատ մեծ բան են
«երևում հեղինակին, և այս հետևումէ նորանից, որ նեղ հայեացք ու-

«ննջալով և ամենափոքրը հսկայ է թվում։ Խօսքս Նախիջևանի ու-
«սումնարանի վերայ է. ահա հեղինակի բառերը։ (տե՛ս երես 462)

«Ուսումնարանն Հայոց ի նորոյ կառուցաւ աղիւսակերտ, եռայարկ
«և բաղմասենեակ, արդեամբ աղայ մկրտչի արգէն Հանդուցելոյ, և ջա-
«նասիրութեամբ աղայ խաչատուրի Ղումճեանց (որ գրել է Ղումըղ-
«անց), յորում ուսանին բաղմաթիւ աշակերտք ղՀայերէն և ղռու-
«սերէն»։

Հեղինակը գրումէ այս խօսքերը, մինչդեռ բոլոր Նախիջևանը
«գանգատումէ գպրոցի անպիտանութենից և մի օրինաւոր մարդ չէ տա-
«լիս իւր որդին այդ գպրոցը։ Աշակերտքը, որոնց ընծայվումէ գիտու-
«թիւն Հայերէնի և Ռուսերէնի, ոչինչ չգիտեն, հաղիւ հաղ կարդալ
«այդ լեզուներով և իւրեանց անունը գրել տառասխալ անգամ։ Նա-
«խիջևանի մեծ անբաղդութիւնը է այդ ուսումնարանը, որի մասին գո-
«վութեամբ խօսումէ հեղինակը։

«Ինեակք լայնանիստք, որմունք բարձրաբերձ, այլ բարեկարգու-
«թիւն ի նմին և ոչինչ», գրումէր քսան տարի յառաջ մի ուսումնական
«պգպային, որ կարդալով այս տողերը, անտարակոյս պիտի յիշէ իւր
«վհատական և ողբալի գրութիւնը Նախիջևանի մէջ, ուր գտանվումէր
«դաստիարակական պաշտօնով։

Նորոգ հեղինակը ողբումէ վանքերի կործանութիւնը և ամայու-
«թիւնը, բայց չենք լսում թէ նոցա շինութիւնը, այժմեան ժամանա-
«կումն ինչ խորհուրդ ունէր մարդկային յառաջադիմութեան համար։
«կար ժամանակ, երբ մարդիկ ոգևորվումէին վանքերով և հոգևոր աս-
«պետութիւններով. բայց չորս հինգ հարիւր տարի անցան նորանից յե-
«տոյ, և նոր պատմութիւնը (16 դարուց) պատնէշ է քարշել հին և նոր
«մարդկութեան մէջ։ Մի՛թէ հեղինակը կը ցանկանայ, որ մեր ազգը
«դուրս մնար այդ պատնէշից.....

Հայերը ունին աւելի հիմնաւոր և խորհրդաւոր ողբալիք, թող
«գպրոցների չլինելը կամ լինելութեան չլինելու հաւասար վիճակը
«նիւթ լինի նոցա ողբերին և լացին։ Թող աշխատին գպրոց շինել, աշա-
«կերտ հասուցանել, ազգը լուսաւորել։ Վանքերի սաղմոսերգութիւնքը
«հանդէս չունին ազգային լուսաւորութեան մէջ։

«Նորոգ հեղինակը, ինչպես իւր բոլոր գրուածներում, նոյնպէս և
«մանաւանդ գրքի վերջաբանի մէջ, շատ որոշ և շօշափելի կերպով
«ցոյց է տալիս, թէ ազգը, ազգի կեանքը, ազգի անցածը, ազգի ներկան,
«և այսպիսի ներկայի հետևելու ապագան, երբէք չէ եղած նորա հա-
«մար ուսումնասիրութեան և փիլիսոփայական մտածութեան առար-

«կայ։ Թէպէտ և պիտի արդարութեամբ խոստովանել որ մի այսպիսի «հիմնաւոր քննութիւն և հասկացողութիւն դժուար էր Նորան առանց «ձեռքում ունելու բազդատող կշիռը և չափը։

«Ի Երջարանի մէջ, (տես երես 503) խօսում հեղինակը Հայաս- «տանի բերանից։ «Ա՛ռ այժմ լեռնին սիոնիմ և ղեվարար ցօղ հիւսիսոյ «խառնեալ ընդ հարաւային ջերմութեան կամի ղես ծաղկալարդել, «պտղաբերս առնել և օր աւուր վերածել ի լաւ անդր վիճակ»։

«Ինչ կամի ասել սորանով, անհասկանալի է։ Հիմք և լօգիկա «չկայ։։։։Այս ուրախական խօսքերը խօսելով մխիթարվելուց յա- «տոյ, իսկոյն փախում բերանը, (տես երես 504) և ահա նորա խօս- «քերը։

«Ի վերջոյ, եթէ խորհնային Մովսէս ողբոց իւրոց ղհակառակն «գտեալ գրեսցէ, յայնժամ գոյ գոյս կենդանութեան մերս թշուառա- «կելոյ, ապա թէ ոչ ընկղմեալ եմ և ընկղմիմ ի թշուառութենէ ի «թշուառութիւն և ի վշտաց ի վիշտս, և ապա անվրէպ համրուրել ու- «նիմ ղմահ.—ասաց ղայս ողբալին Հայաստան և իսկոյն լռեաց, քամե- «լով յաչաց իւրոց ղշիթս արտասուաց»։

Այս հակառակաբանութիւնքը ծագումն նորանից, որ հեղինակի «գրուածքը խակ մտածութեան արդիւնք լինելով, չունին գաղափար- «ների ընդհանուր միութիւն։ Ցառաջ ասում, թէ Հայաստանը մխի- «թարկում, արտասուքը սրբելու վերայ է, յետոյ յուսահատվելով «իսկոյն հանգրուում չլինելը այն բաների, որ կային Մովսէս խորենացու «ողբի մէջ, և որ ազգը մի չար բազդով հարիւրին երեսուն աճեցու- «ցած է մինչև մեր օրերը։

Ահա, եղբայր, մի նոր երևոյթ, լուն հայկական, ասիական և անմխի- «թար գպրութեան մէջ։ ահա այսպիսի գրուածք պիտի առաջնորդեն «ազգին դէպ ի լուսաւորութիւն։ Բիւր անգամ ցաւելի երևոյթ։

Ես ժամանակ չունէի կարդալ բոլոր գիրքը, ահա այս տեղ նշա- «նակած երեսներս միայն կարդացի, մնացածը հարևանցի թերթելով։

«Այժմ խօսում ուրիշ բաների մասին։

«Փարիզից ստացած նամակներս միմեանց քամակից հաւաստումեն, «թէ յարգի Ամբրոսիոս և Խորէն Գալֆայեան վարդապետքը կամենու- «մեն մի նոր օրագիր հրատարակել, «Հրեշտակն Հայաստանի» անունով։

Փարիզի հայկական գպրոցի մասին ստացած լուրերս շատ անմխի- «թար են, և ինչպես պատմումեն, վերատեսուչ վարդապետքը գտան- «վումեն մեծ նեղութեան մէջ։ Ասումեն, թէ գպրոցը ունի մօտ իբր «քսան աշակերտ ընդ ամենը, որոնցից երկուքը ֆրանսիական ազգից։

«Չայներ կան, թէ ազգը կոստանդնուպոլսի մէջ կամի շուտով բարւո-
«քել փարիզու մեր ազգային դպրոցի վիճակը, և թէ մի հապատիւ նոր-
«ընտիր Հայրապետ — մեծ քահանայ Մատթէոսը, պօլսից ելանելու ժա-
«մանակ, երդմամբ չափ պատուէր է տուել ազգին անօգնական չթո-
«ղուլ դպրոցը, մինչև ինքը կարողանայ օգնութիւն հասուցանել Էջ-
«միածնից։

Ու ահա, փարիզի հայկական դպրոցը կապվեցաւ Էջմիածնեան
«աթոռի հետ։

Կարծումեմ, որ գոնէ աւելի հիմնաւոր տեղեկութիւնք ունենաս
«այս բաների մասին և յոյս ունեմ երբեմն կարդալ քո ճիշատակա-
«րանի մէջ այս բոլորի մանրամասն նկարագրութիւնը։ Առ այժմ ուրիշ
«ոչինչ գրելիք, սպասումեմ նամակիդ։ Ողջ եղի՛ր։»

Քո Ս. Շահէխ։»

Ա՛յո, ես պատահեցայ փարիզում և հայկական Մուրադեան վարժա-
րանին, և նոցա մասին միտք ունիմ առանձնապէս խօսել, մանաւանդ այն
խնդրի վերայ, թէ արժանայիշատակ Մուրադը նուիրած լինելով մի ժա-
ռանգութիւն ընդհանուր Հայոց ազգի զաւակների կրթութեան և դաս-
տիարակութեան համար, ինչու միայն որպէս մի մասնաւոր առանձնաշնոր-
հութիւն հասանում այդ բոլորը պապական Հայերին։ Ինչու համար
ազգը լուռ ու մունջ նստած, սառն հանդիսատես է այդ անիրաւու-
թեանը և այն, ծայրացեալ անիրաւութեան։ Ազգի արծաթը ծախվում,
որ պապականութիւնը առաւել խոր տարրանայ ազգի անմէղ զաւակնե-
րի սրտի մէջ, որոնց առաւօտ և երեկոյ աղօթք են կարդացնում, որ
Հայերը դարձ դան և դուրս գալով հերետիկոսութենից մտանեն պապի
գիրկը և արժանի լինին փրկութեան։ Այս աղօթքը գրված է վենետ-
կեան Մխիթարեանց ձեռքով և որպէս մի նոր և հաւաստի նշան միա-
բանութեան հարազատ պապականութեան, ներկայացուցած է վատի-
կանին և արժանի է եղած առանձին ինդուլգենցիայի։ Ազգը այսքան տա-
րիներով լռում է և իր լռութեամբ շատացնում ազգի զաւակներից պա-
պականութեան գնացած ղօնը Հիւրմիւզների ձեռքով, որ սոքա կարո-
ղանան այդպիսի ծանր գնով գնել կարգինալական գլխարկը։

Մեծ յոյս ունինք վերհասու Մատթէոս նորընտիր ծայրագոյն
պատրիարգ կաթողիկոսից, որ նա իր հայրապետութեան սկզբումը գեռ
ևս առաջը փակէ այս բանից, որ մեծ և մեծ վնասակարներից մինն է։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ·

Հիւսիսափայլը և ներկայ տարումս, փառք Ամենակալին և յաջողութեան պարգևատուին, յառաջ խաղալով մինչև ութերորդ ամսատետրակը, որ ահա ստանումէ մեր սիրելի ժողովուրդը, Հրատարակողը միտ դնելով տեղերի հեռաւորութեանը և ժամանակի արդէն բաւական յառաջագնացութեանը, հարկաւոր է համարում համառօտ ծանուցումն անել Հիւսիսափայլի պատուելի ստացողներին, թէ օրագիրը նոյն հիմքերի վերայ, և որպէս յոյս կայ, աւելի կատարեալ կերպարանքով շարունակվելու է գալոց 1860 թուականին: Աշխարհը օրէ օր յառաջ է գնում դէպ ի աւելի լաւը, թէպէտ արդարև միշտ պատերազմ տալով ճշմարտութիւնը խարդախութեան հետ, լոյսը խաւարի հետ, գիտութիւնը տգիտութեան հետ· այս պատերազմը շատ հին է, և ասես թէ անպատճառ հարկաւոր էր մարդկութեան բարոյական կենդանութիւնը ոտքի վերայ պահպանելու համար· վիշտ և ուրախութիւն, դառնութիւն և քաղցրութիւն, հակառակութիւն և յաղթութիւն, արտասուք և խնդութիւն են այն, վերին իմաստութեամբ կարգած շարժառիթքը, որով սովոր է միայն յառաջ խաղալ մարդկութիւնը դէպ ի իւր մեծ նպատակը: Հայոց կեանքը չունենալով ոչինչ քաղաքական ասպարէզ, այլ լինելով մի փոքրիկ իւր մէջ փակած ու ամփոփած մասնաւոր տնտեսութիւն, դորա մէջ ի հարկէ կարող չեն և լինել արիւնոտ հրապարակական դաշտեր և ազնիւ հանդիսաւոր զինաբաղխութիւնք պատուի ասպարէզի մէջ, այլ միայն մանր մունր ծակամուտ դարանագործութիւնք, բամբասանք, չարախօսութիւնք միմեանց վերայ մութն անկիւնների մէջ, փոքրոգի աբեղայական անէծք և նզովք ճշմարտասէրների վերայ, երբ որ ծածուկ բռնակալութիւնը անյաջող էր գտանվել իւր գործերի մէջ, և տեսանումէր զինուորված ընդդէմ իւր հասարակաց կարծիքը: Եւ այսպիսի ձախող հանգամանքների մէջ չդադարեց մինչև այժմ, այլ մանաւանդ թէ ևս առաւել քաջալերվելով և զօրութեան հոգի ստանալով Հիւսիսափայլը, յառաջ է տարել այն փոքրիկ հայկական ժողովրդի բարոյական և իմացական գործը որ միանգամ առել է իւր վերայ, և միշտ յառաջ է տանելու, ինչքան որ Հրատարակողի շունչը բերանումն էր, առանց դէպ ի աջ ու ձախ շեղվելու իւր սուրբ նպատակից, որ է, իւր կարողութեան չափ տարածել իւր սիրելի և պատուելի հայրենակիցների մէջ Եւրոպական գիտութեան և լուսաւորութեան սերմունքը, ուղիղ և հիմնաւոր հայեացք ազգի, եկեղեցու և մարդկութեան վերայ, առողջամիտ, ժամանակին պատկանաւոր գաղափարք և տեսու-

թիւնք մարդկային ընկերութեան մասին, և թէ դոցանից ի՛նչ պիտոյ էր մեր Հային իմաստասիրել, եղբակացութիւն առնելով դէպ ի իւր բարոյական և իմացական դրութիւնը աշխարհի վերայ։

Հիւսիսափայլի հրատարակողը մի քաղցր պարտականութեան հարկ է համարում իւր վերայ այժմ արդէն ծանուցումն առնել ազգին, թէ ներկայ տարումն թէպէտ ձախորդ հանդամանքներ շատ պատահեցան, որ կարող էին վնասել այլ միջոցներում, բայց դոյն իսկ ձախորդ հանդամանքները, փառք և պարծանք Հայոց ազգի առողջամտութեանը, պատճառ եղան ղարթուցանելու ազգի մէջ մի նոր բարոյական զօրութիւն, մի նոր քաջութեան և արիութեան հոգի, այլև բարեկամներ ու պաշտպաններ յարուցին Հիւսիսափայլի համար, որ դա ունեցած չէր յառաջուց։ այնպէս որ թշնամիների չանադրութիւնքը դէպ ի վնաս Հիւսիսափայլին, յառաջացուցին ամենևին ներհակ, նորան օգտակար հետևանքներ։ Ցաւելի է ինձ միայն ասել այս տեղ — թէպէտ դա շատ անգամ պատահում մարդկային աշխարհիս մէջ — թէ ոմանք անձինք որոնցից ես աւելի և բարի յոյսեր ունէի, որովհետև մօտաւոր էին ինձ ղանազան պատճառներով, դատարկաձեռն և ապարդիւն դտանվեցան, բայց հեռաւոր և սակաւածանօթ մարդիկ, դատելով մեզ մեր աշխատութիւնների հիման վերայ, աղգասիրութեան ապացոյցներ հանդէս բերին, որ միտ դնելով Հայերի դեռ ևս մանուկ լուսաւորութեան հասակին, քաղցր արտասուք դուրս ճմլեցին մեր սրտից, և դոցանից մինը մի իսկապէս եւրոպական աղնիւ մեծահոդութեամբ ղրկանք էր յանձն առել Հիւսիսափայլին օգնելու համար, որ մինչև այժմ մնում հայերի մէջ մի անօրինակ բան, ինչքան Հրատարակողը մինչև այժմ ղանազան Հայերի հետ յարակցութիւնք ունենալով, արած էր ղանազան փորձեր։

Հիւսիսափայլի հրատարակողը, ազգի պարծանքի համար, կամենում այս տեղ նշանաւոր կացուցանել այն հայրենասէր անձինքը, որ թէ նիւթապէս և թէ բարոյապէս ձեռնտու են դտանվել Հիւսիսափայլի յառաջադիմութեան, ապա ուրեմն և իրաւունք ունին ազգի բարեմիտների շնորհակալութեան վերայ։ Մեր հայրենի թիֆլիզը ներկայ տարումն ոչ թէ յետ չմնաց առաքինութեան հանդիսից, այլ դարանագործութիւնների նոյն իսկ հին քուրայի մօտումը նստած, վերջապէս հասկացաւ ճշմարտութիւնը, ճեղքեց ու պատառեց նենդաւորութեան չար հիւսուածքը, և ինչ որ հասկացել էր բարի և աղնիւ և օգտակար, գործ դրեց ամենաջերմ հոդացողութեամբ։ Հիւսիսափայլը շտապումէ երախտաճանաչ ձեռքով մի դալար դաբնեայ պսակ դնել Թոմանոս Պօղոսեան Նագիրեանց լժշկի փայլուն ճակատի վերայ, մատուցանելով

իւր առ ի սրտէ մեծարական շնորհակալութիւնը նորա արժանաւոր ընկերներին, որ են բժշկապետ Յարութիւն Յովհաննիսեանց, Գէորգ Ակիմեանց, Մկրտիչ Սենակարիմեանց, Միքայել Աղամալեանց, Ստեփանոս Տէր Մկրտիչեանց և պարոն Տէր Միքէլեանց։

Նոյ Շամախոյ արժանապատիւ Հայերը իւրեանց աղգասէրների պարագլուխ, բժշկապետ պարոն Յոստոմեանի այրական հոգաբարձութեամբ, աւելի մեծ թուով (երեքպատիկը համեմատաբար անցեալ տարու հետ) մանակից գտանվեցան Հիւսիսափայլին, ոչ փոքր թեթևացնելով Հրատարակողի դրութիւնը նիւթական ծախքերի մասին։

Նոյ Ղարաբաղու ժողովուրդը, որ անցեալ տարու Հիւսիսափայլին, —ինչպէս երևումէ, մի քանի պատուելիների որոմնացանութեամբ (այլապէս կարող չեմ ինձ մեկնել մեր սիրելի Հայրենակիցների ամենևին սառնութիւնը դէպ ի ազգային պարծանքը), բաժանակից չէր, և Ղարաբաղու ժողովուրդը վերոյիշեալ պարոն Յոստոմեանի ժրագլուխ հոգատարութեամբ և պատուելի Հախումեանցի գործակատարութեամբ, ներկայ տարումն բաւական չափով ձեռնտու է գտանվել Հիւսիսափայլի տարածելուն այդ քաղաքի մէջ։

Նրդարութեան պարտականութիւնը պահանջումէ ասել այս տեղ հրապարակաւ, որ ներկայ տարումն Նոր—Նախիջևանի մէջ, ընդելով սաստիկ թշնամական յայտնի և ծածուկ ներգործութեւնների, մեր արժանապատիւ եղբարք պարոն կարապետ Հայրապետեանցը, Գրիգոր Սալտիկեանցը և Մատթէոս Երէցփոխեանցը և այլ բարեմիտ ծանօթք ու անծանօթք, անցեալ տարուց աւելի առատ կերպով նպաստաւորեցին գտանվեցան մեր օրագրի յառաջադիմութեանը և արժանի են կացուցել իւրեանց անձը մի առանձին շնորհակալութեան ազգի կողմից։

Նաշտարխանու, Ղզլարի և Պետերբուրգի մէջ ներկայ տարումն մեծապէս աշխատաւոր են գտանվել Հիւսիսափայլի յառաջադիմութեան համար արժանապատիւ պարոններ Մկրտիչ Սարգիսեանց, Գրիգոր Սալթեանեանց, Յովսէփ Իզմիրեանց, Մագիստրոս ասիական լեզուագիտութեան կարապետ Եզեանց, և պարոն Ալէմեանցի բազմաշխատ հոգաբարձութեամբ Հիւսիսափայլի թերթերը ճանապարհ են ստացել Ռուսաստանից դուրս դէպ ի Կոստանդնուպոլիս։

Նրատարակողը յայտնելով յիշեալ մեծապատիւ պարոններին իւր առ ի սրտէ շնորհակալութիւնը դոցա ազգասիրական աշխատութեան մասին, և խնդրելով որ գալոց 1860 թուականի համար բարեհաճին յանձն առնուլ նոյն հայրենասիրական գործակատարութիւնը, հրատարակումէ այս հանդերձ ծանուցմամբս, թէ Հիւսիսափայլը նոյն ընթացքով յառաջ է գնալու, ինչպէս մինչև այժմ, և մի փոքր բազմանալով

մասնակիցների թիւը, ուրեմն և նիւթական հնարները, հրատարակողը ևս պատրաստ կը լինի տալ օրագրի ամնատետրակներին աւելի մեծ պարունակութիւն, գուցէ և աւելի արտաքին վայելչութիւն, ինչքան կարելի էր դա, միտ դնելով մեր Ռուսաստանի հանգամանքներին։

Թիւը ներկայ տարուս ստացողների հիւսիսափայլ օրագիրը համանուամբ 350 ի։ Սոցանից 10 օրինակ պարգև են գնացած։

Այս հաշիւ ու համարը որ հրատարակողը եղբայրաբար տալիս է իւր ազգին, թող ցանկացողներին տեղեկութիւն տայ, թէ արդեաւ է ազգի մէջ ընթերցասիրութիւնը, և թէ նայելով ստացողների թուին ի՛նչպէս է մի օրագիր հրատարակողի դրութիւն մեր Հայերի մէջ։ Եթէ Շուբերթի հետ հաշուենք Հայոց բազմութիւնը Ռուսաստանի մէջ 450,000 հոգի, ապա պիտոյ է ասել վերաբերութեամբ դէպ ի հիւսիսափայլը, թէ 1285 մարդերից միևը ստանում հիւսիսափայլը։ Տխուր տեսարան հայ օրագիր հեղինակի առաջև։ Բայց թողունք այս անմխիթար նկատողութիւնքը, և ազգի բարեմիտների հետ միասին յուսալից և հաստատուր աչքով նայենք ապագայի վերայ, յանձնառնդ որ ազգը արժանացել է այժմուս մի լուսաւոր, հայրենասէր կաթողիկոսի, որ հայրական հոգաբարձութեամբ խնամելու է իւր ժողովրդի բարոյական և իմացական պիտոյքը, որ աշխուժով քաջալերութեամբ ծաղկեցնելու էր մեր հայկական նոր մատենագրութիւնը, պատուաւոր ասպարէզ բանալով հայոց քանքարաւոր մարդերին։

Հրատարակող

Ս. Նալբանդեանց։

1. Հիւսիսափայլ օրագիրը ամիս ամիս դուրս գալով, պարունակելու է իւր մէջ ճառեր ընդհանուր Երկրագիտութեան, ընդհանուր Պատմութեան և Աշխարհագրութեան, այլև մանաւանդ Հայրենական պատմութեան և աշխարհագիտութեան վերայ:

2. Ինագիտական ճառեր, այսինքն քնութեան օրէնքների և դոյա գործադրութեան վերայ մարդուս օգտի համար, ճառեր զանազան փիլիսիքական յայտնագործութիւնների, հասարակաբար Աստեղաբաշխութեան, քիմիայի, Հանքաբանութեան և Գիտիօլօգիայի վերայ· այլև բանախօսութիւն տունկերի, գիտութեան արժանի բոյսերի, նոցա տնկարկութեան և օգտի վերայ, վերջապէս կենդանագործութեանների մասին:

3. Խարոյական, գեղեցիկ բանասիրական ճառեր, առաւել ընտիր մտածութիւնք և ղգացողութիւնք թէ ոտանաւոր և թէ արձակ ոճով· Թարգմանութիւնք հին հայկական, և հին ու նոր եւրոպական մատենագրութիւնից· այլև կրիտիկայք (ուսումնական քննութիւնք) նորատիպ հայերէն գրուածների վերայ:

Ձանկացողքը ստանալ այս օրագիրը կարող են հասուցանել իւրեանց խնդիրը կամ ուղղակի Հրատարակողին Մոսկվայի մէջ այսպէս. въ Редакцію Армянскаго Журнала «*Сѣверное Сіяніе*», въ Москвѣ, на Черногрязкѣ, въ домѣ Статскаго Совѣтника С. Назарьянца. կամ թէ Մոսկվայի Նամակատանը այսպիսի հասցէով. въ Газетную Экспедицію Московскаго Почтамта.

Ցարեկան 12 տետրակների գինը է 8 մանէթ Մոսկվայի մէջ, բայց ուրիշ քաղաքների համար $9\frac{1}{2}$ մանէթ:

Печатать позволяется. С. Петербургъ, Маія 18-го, 1859 года.

Цензоръ В. Бекетовъ.